ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՏԵՂԵԿԱՆԱԼՈՒ, ԹԵ ՈՒՄԻՑ ԿԱՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԻՆՉ ԽՄԲԻՑ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԱՄՔ:

Կարող եք սկսել ստանալ առողջական խնամքի ծառայություններ ձեր ապահովագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից: Միշտ ձեզ հետ ունեցեք ձեր Health Net ID քարտը, Medi-Cal Նպաստների նույնականացման քարտը (BIC) և որևէ այլ առողջական ապահովագրության քարտեր, եթե ունեք: Երբեք թույլ մի տվեք, որ որևէ մեկն օգտագործի ձեր BIC կամ Health Net-ի ID քարտը:

Նոր անդամները պետք է ընտրեն առաջնային խնամքի մատակարար (PCP) Health Net-ի ցանցում: Health Net-ի ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ է, որոնք աշխատում են Health Net-ի հետ: Դուք պետք է PCP ընտրեք Health Net-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե PCP չեք ընտրել, ապա Health Net-ը կընտրի նրան ձեզ համար:

Դուք կարող եք ընտրել միևնույն PCP-ին կամ տարբեր PCP-ներ Health Net-ում ընտանիքի բոլոր անդամների համար:

Եթե դուք ունեք բժիշկ, որն ուզում եք պահել կամ, եթե ուզում եք նոր PCP գտնել, ապա կարող եք կարդալ Մատակարարների հասցեագիրքը: Այն պարունակում է Health Net-ի ցանցի բոլոր PCP-ներին: Մատակարարների հասցեագիրքը պարունակում է այլ տեղեկություններ՝ աջակցելու ձեզ PCP-ի ընտրության հարցում: Եթե ուզում եք ստանալ Մատակարարների հասցեագիրքը, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Մատակարարների հասցեագիրքը նաև հասանելի է Health Net-ի կայքում՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com):



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Եթե չեք կարողանում ստանալ ձեզ անհրաժեշտ խնամքը Health Net-ի ցանցի մասնակից մատակարարի կողմից, ձեր PCP-ն պետք է խնդրի Health Net-ին լիազորել ձեզ արտացանցային մատակարարի մոտ ուղարկելու համար:

Կարդացեք այս գլխի շարունակությունը՝ տեղեկանալու PCP-ներին, Մատակարարների հասցեագրքին և մատակարարների ցանցին առնչվող մանրամասներին:

## Առողջության նախնական գնահատում (IHA)

Health Net-ը խորհուրդ է տալիս, որ դուք՝ որպես նոր անդամ, այցելեք ձեր նոր PCP-ին առաջին 120 օրվա ընթացքում՝ առողջության նախնական գնահատման (IHA) համար: IHA-ի նպատակն է օգնել ձեր PCP-ին ծանոթանալ ձեր առողջական խնամքի պատմությանը և կարիքներին: Ձեր PCP-ն կարող է տալ ձեր առողջության պատմության վերաբերյալ որոշակի հարցեր կամ կարող է խնդրել ձեզ լրացնել հարցաշար: Ձեր PCP-ն նաև կտեղեկացնի ձեզ առողջապահական կրթության խորհրդատվության և դասընթացների մասին, որոնք կարող են օգնել ձեզ:

Երբ զանգահարում եք ձեր IHA ժամադրությունը նշանակելու համար, տեղեկացրեք հեռախոսագանգին պատասխանող անձին, որ դուք Health Net-ի անդամ եք: Տրամադրեք ձեր Health Net-ի ID համարը:

Ժամադրությանը ձեզ հետ տարեք ձեր BIC և Health Net-ի ID քարտերը: Ձեզ հետ ունեցեք նաև ձեր դեղորայքի ցանկը և հարցերը, որոնք կուզենայիք քննարկել: Պատրաստ եղեք գրուցել ձեր PCP-ի հետ՝ ձեր առողջական խնամքի կարիքների և մտահոգությունների մասին:

Անպայման զանգահարեք ձեր PCP-ի գրասենյակ, եթե դուք ուշանում եք կամ չեք կարող գնալ նշանակված ժամադրության:

## Ընթացիկ խնամք

Ընթացիկ խնամքն առօրյա առողջական խնամքն է: Այն ներառում է կանխարգելիչ խնամքը, որը նաև կոչվում է բարեկեցության կամ լավ զգալու խնամք: Այն օգնում է ձեզ առողջ մնալ և չհիվանդանալ: Կանխարգելիչ խնամքը ներառում է կանոնավոր ստուգումներ, առողջապահական կրթություն և խորհրդատվություն: Երեխաները կարող են ստանալ այդքան անհրաժեշտ վաղ կանխարգելիչ ծառայություններ, ինչպես՝ լսողության և տեսողության զննում, զարգացման գործընթացի գնահատումներ և շատ այլ ծառայություններ, որոնք խորհուրդ են տրվում մանկաբույժների «Պայծառ ապագաներ» ուղեցույցներում: Ի լրումն կանխարգելիչ խնամքի, ընթացիկ խնամքը նաև ներառում է խնամք, երբ դուք հիվանդ եք: Health Net-ն ապահովագրում է ձեր PCP-ի կողմից տրամադրվող ընթացիկ խնամքը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Ձեր PCP-ն պետք է՝

- Տրամադրի ձեզ ողջ ընթացիկ խնամքը, ներառյալ՝ կանոնավոր ստուգումներ, սրսկումներ, բուժում, դեղատոմսեր և բժշկական խորհուրդներ
- Վարի ձեր առողջապահական արձանագրությունները
- Ուղղորդի (ուղարկի) ձեզ մասնագետներին, ըստ անհրաժեշտության
- Պատվիրի ռենտգեններ, մամոգրաֆիաներ կամ լաբորատոր ստուգումներ, եթե դուք ունեք դրանց կարիքը

Եթե ունեք ընթացիկ խնամքի կարիք, դուք պետք է զանգահարեք ձեր PCP-ին ժամադրություն նշանակելու համար: Անպայման զանգահարեք ձեր PCP-ին նախքան բժշկական խնամքը ստանալը, եթե դա իհարկե արտակարգ իրավիճակ չէ: Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակը:

Որպեսզի տեղեկանաք ձեր ծրագրի կողմից ապահովագրված և չապահովագրված առողջական խնամքի և ծառայությունների մանրամասներին, կարդացեք այս տեղեկագրի «Նպաստներ և ծառայություններ» բաժինը:

## Հրատապ խնամք

Հրատապ խնամքն արտակարգ իրավիճակ կամ կյանքին սպառնացող իրավիճակ չէ: Սա ծառայությունների համար է, որոնք ձեզ անհրաժեշտ են կանխելու ձեր առողջության լուրջ վնասները հանկարծակի հիվանդությունից, վնասվածքից կամ այնպիսի իրավիճակի բարդացումից, որն արդեն ունեք: Հրատապ խնամքի ժամադրությունները, որոնք նախնական հաստատում (նախօրոք լիազորում) չեն պահանջում, մատչելի են ժամադրության խնդրանքից 48 ժամվա ընթացքում: Եթե հրատապ խնամքի ծառայությունները նախնական հաստատում են պահանջում, ձեզ ժամադրություն կառաջարկեն ձեր խնդրանքից 96 ժամվա ընթացքում:

Հրատապ խնամքի համար զանգահարեք ձեր PCP-ին: Եթե չեք կարողանում կապվել ձեր PCP-ի հետ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կամ կարող եք զանգահարել բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Եթե դուք հրատապ խնամքի կարիք ունեք ձեր տարածքից դուրս, ապա դիմեք ձեր ամենամոտ հրատապ խնամքի հաստատություն: Հրատապ խնամքի կարիքներ կարող են լինել մրսածությունը, կոկորդի բորբոքումը, տենդը, ականջի ցավը, ձգված մկանը կամ մայրության ծառայությունները: Նախնական հաստատման (նախօրոք լիազորման) կարիք չկա: Եթե ունեք հոգեկան առողջության հրատապ խնամքի կարիք, զանգահարեք ձեր վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագիր կամ Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կարող եք զանգահարել ձեր վարչաշրջանի Հոգեկան առողջության ծրագիր կամ ձեր Health Net Վարքագծային առողջության կազմակերպություն ցանկացած պահի՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներին առցանց ծանոթանալու համար անցեք [www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx](http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx) հղումով:

## Շտապ օգնություն

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակը (ER): Շտապ օգնության համար Health Net-ից նախնական հաստատման (նախօրոք լիազորման) կարիք **չկա**: Դուք իրավունք ունեք գնալ ցանկացած հիվանդանոց կամ շտապ օգնության խնամքի այլ հաստատություն:

Շտապ օգնությունը կյանքին սպառնացող բժշկական վիճակների համար է: Այս խնամքը հիվանդության կամ վնասվածքի համար է, որը ողջամիտ (խելամիտ) ոչ մասնագետը (ոչ առողջական խնամքի մասնագետ) առողջության և բժշկության վերաբերյալ միջին գիտելիքներով կարող է ակնկալել, որ եթե դուք անմիջապես խնամք չստանաք, ձեր առողջությունը (կամ ձեր դեռ չծնված երեխայի առողջությունը) կարող է գտնվել վտանգի տակ, կամ մարմնի գործառույթը, օրգանը կամ մարմնի մասը կարող է լրջորեն վնասվել: Օրինակները ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով՝

- Ակտիվ երկունք
- Ոսկորի կոտրվածք
- Սաստիկ ցավ
- Կրծքավանդակի ցավ
- Սաստիկ այրվածք
- Դեղերի չափից մեծ դոզա
- Ուշագնացություն
- Սաստիկ արնահոսություն
- Հոգեբուժական արտակարգ վիճակներ, ինչպիսիք են՝ ուժեղ ընկճվածությունը կամ ինքնասպանության մտքերը



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Մի այցելեք ER ընթացիկ խնամքի համար:** Դուք պետք է ստանաք ընթացիկ խնամք ձեր PCP-ից, ով լավագույնս է ճանաչում ձեզ: Եթե վստահ չեք՝ արդյոք ձեր բժշկական վիճակն արտակարգ իրավիճակ է, զանգահարեք ձեր PCP-ին: Կարող եք նաև զանգահարել 24/7 բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:

Եթե ունեք շտապ օգնության կարիք տանից հեռու, այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ (ER), եթե անգամ այն Health Net-ի ցանցում չէ: Երբ գնաք ER, խնդրեք նրանց զանգահարել Health Net: Դուք կամ հիվանդանոցը, որտեղ ընդունվել եք, պետք է զանգահարի Health Net-ին ձեր կողմից շտապ օգնությունը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե դուք ճանապարհորդում եք ԱՄՆ-ից դուրս, Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներ, և ունեք շտապ օգնության կարիք, Health Net-ը **չի** ապահովագրի ձեր խնամքը:

Եթե ունեք շտապ օգնության փոխադրման կարիք, զանգահարեք **911**: Կարիք չկա հարցնել ձեր PCP-ին կամ Health Net-ին, նախքան ER գնալը:

Եթե ձեր շտապ օգնությունից հետո ունեք խնամքի կարիք արտացանցային հիվանդանոցում (հետ-կայունացնող խնամք), հիվանդանոցը կզանգահարի Health Net-ին:

**Հիշեք.** եթե արտակարգ իրավիճակ չէ, մի զանգահարեք **911**: Ստացեք շտապ օգնություն միայն արտակարգ իրավիճակի, այլ ոչ ընթացիկ խնամքի կամ փոքր հիվանդության համար, ինչպես օրինակ՝ մրսաձուրթները կամ կոկորդի բորբոքումը: Եթե արտակարգ իրավիճակ է, զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ:

## Զգայուն խնամք

### *Համաձայնությամբ տրվող անչափահասների ծառայություններ*

Եթե 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, դուք կարող եք ստանալ միայն հետևյալ ծառայություններն առանց ձեր ծնողի կամ խնամակալի թույլտվության.

- Հոգեկան առողջության ամբուլատոր խնամք հետևյալի համար՝
  - Սեռական բռնություն
  - Ֆիզիկական բռնություն
  - Երբ դուք ինքներդ ձեզ կամ ուրիշներին վնասելու մտքեր ունեք



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



- ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխում/ստուգում/բուժում
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխում/ստուգում/բուժում
- Թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ

Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, դուք կարող եք այցելել բժշկի առանց ձեր ծնողների կամ խնամակալի թույլտվության խնամքի հետևյալ խնամքի համար՝

- Ընտանիքի պլանավորում/հակաբեղմնավորիչներ (ներառյալ՝ ամլացում)
- Աբորտի ծառայություններ

Հղիության ստուգման, ընտանիքի պլանավորման ծառայությունների, հակաբեղմնավորման կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների ծառայությունների համար բժիշկը կամ կլինիկական պարտադիր չէ, որ լինեն Health Net-ի ցանցում: Կարող եք ցանկացած մատակարարի ընտրել և գնալ նրա մոտ այս ծառայությունների համար՝ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Արտացանցային մատակարարի ծառայությունները, որոնք կապված չեն զգայուն խնամքի հետ, կարող են չապահովագրվել: Այս ծառայությունները (ներառյալ՝ փոխադրում) ստանալու կամ այս ծառայությունները ստանալու օգնության համար բժիշկ կամ կլինիկա գտնելու օգնության համար կարող եք զանգահարել 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել 24/7 բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:

Անչափասները կարող են գաղտնի խոսել իրենց առողջական մտահոգությունների մասին ներկայացուցչի հետ՝ զանգահարելով 24/7 բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:

### ***Չափահասների զգայուն ծառայություններ***

Որպես չափահաս (18 տարեկան և ավելի բարձր տարիքի)՝ հնարավոր է, դուք չցանկանաք այցելել ձեր PCP-ին որոշակի զգայուն կամ անձնական խնամքի համար: Այդ դեպքում դուք կարող եք ընտրել ցանկացած բժիշկ կամ կլինիկա հետևյալ խնամքի համար՝

- Ընտանիքի պլանավորում և հակաբեղմնավորիչներ (ներառյալ՝ ամլացում)
- Հղիության ստուգում ու խորհրդատվություն
- ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխում և ստուգում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխում, ստուգում և բուժում
- Սեռական բռնության խնամք
- Աբորտի ամբուլատոր ծառայություններ

Բժիշկը կամ կլինիկան պարտադիր չէ, որ լինեն Health Net-ի ցանցում: Կարող եք ցանկացած մատակարարի ընտրել և գնալ նրա մոտ այս ծառայությունների համար՝ առանց ուղեգրի կամ նախնական հաստատման (նախօրոք լիազորման):

Արտացանցային մատակարարի ծառայությունները, որոնք կապված չեն զգայուն խնամքի հետ, կարող են չապահովագրվել: Այս ծառայությունները (ներառյալ՝ փոխադրում) ստանալու կամ այս ծառայությունները ստանալու օգնության համար բժիշկ կամ կլինիկա գտնելու օգնության համար կարող եք զանգահարել 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել 24/7 բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:

### Վաղօրոք հրահանգներ

Վաղօրոք առողջապահական հրահանգը իրավական ձևաթուղթ է: Ձևաթուղթում կարող եք նշել, թե ինչպիսի առողջական խնամք եք ցանկանում ստանալ, եթե ավելի ուշ չկարողանաք խոսել կամ որոշումներ կայացնել: Կարող եք նշել, թե ինչպիսի խնամք **չեք** ցանկանում ստանալ: Կարող եք նշանակել որևէ մեկին, օրինակ՝ ամուսնուն/կնոջը, որպեսզի կայացնի որոշումներ ձեր առողջական խնամքի վերաբերյալ, եթե դուք չկարողանաք:

Դուք կարող եք ձեռք բերել վաղօրոք հրահանգի ձևաթուղթը դեղատներից, հիվանդանոցներից, իրավական գրասենյակներից և բժշկի գրասենյակներից: Հնարավոր է, որ պետք է վճարեք ձևաթղթի համար: Կարող եք նաև գտնել և ներբեռնել անվճար ձևաթուղթն առցանց: Դուք կարող եք խնդրել ձեր ընտանիքին, PCP-ին կամ որևէ մեկին, ում վստահում եք, որպեսզի օգնեն ձեզ լրացնել ձևաթուղթը:

Դուք ունեք ձեր վաղօրոք հրահանգը ձեր բժշկական արձանագրություններում պահելու իրավունք: Դուք իրավունք ունեք ցանկացած պահի փոխել կամ չեղարկել ձեր վաղօրոք հրահանգը:

Դուք իրավունք ունեք տեղեկանալ վաղօրոք հրահանգի օրենքների փոփոխություններին: Health Net-ը ձեզ կտեղեկացնի նահանգային օրենքներում կատարված փոփոխության մասին ոչ ուշ, քան փոփոխության ամսաթվից 90 օր հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Health Net 1-800-675-6110 հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Չափահասները կարող են օգնել փրկել կյանքեր՝ դառնալով օրգանի կամ հյուսվածքի դոնոր: Եթե դուք 15-ից 18 տարեկան եք, կարող եք դառնալ դոնոր՝ ձեր ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ: Ցանկացած ժամանակ կարող եք փոխել օրգանի դոնոր դառնալու ձեր որոշումը: Օրգանի կամ հյուսվածքի դոնոր դառնալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խոսեք ձեր PCP-ի հետ: Կարող եք նաև այցելել Միացյալ Նահանգների Առողջապահության և մարդու ծառայությունների բաժանմունքի [organdonor.gov](http://organdonor.gov) կայքը:

## Որտեղից ստանալ խնամք

Դուք ձեր խնամքի մեծ մասը ստանալու եք ձեր PCP-ից: Ձեր PCP-ն կտրամադրի ձեր ողջ ընթացիկ կանխարգելիչ (բարեկեցության) խնամքը: Դուք պետք է այցելեք ձեր PCP-ին խնամքի համար նաև այն ժամանակ, երբ հիվանդ եք:

Անալայման զանգահարեք ձեր PCP-ին նախքան ոչ շտապ օգնության բժշկական խնամքի ստանալը: Անհրաժեշտության դեպքում ձեր PCP-ն ձեզ կուղարկի (կուղղորդի) մասնագետների մոտ:

Ձեր առողջական հարցերին պատասխան ստանալու համար կարող եք նաև զանգահարել բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:

Եթե ունեք հրատապ խնամքի կարիք, զանգահարեք ձեր PCP-ին: Հրատապ խնամք է համարվում այն խնամքը, որի կարիքը դուք ունեք 48 ժամվա ընթացքում, սակայն այն արտակարգ իրավիճակ չէ: Այն ներառում է խնամք այնպիսի դեպքերում, ինչպես օրինակ՝ մրսածությունը, կոկորդի բորբոքումը, տենդը, ականջի ցավը կամ մկանի ձգվածությունը:

Արտակարգ իրավիճակների դեպքում զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

### Բարոյական առարկություն

Որոշ մատակարարներ ունեն բարոյական առարկություն որոշակի ապահովագրված ծառայությունների նկատմամբ: Սա նշանակում է, որ նրանք իրավունք ունեն **չառաջարկել** որոշ ապահովագրված ծառայություններ, եթե նրանք բարոյապես համաձայն չեն այդ ծառայությունների հետ: Եթե ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա կօգնի ձեզ գտնել մեկ այլ մատակարար, որը կտրամադրի ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Ձեզ հետ կարող է աշխատել նաև Health Net-ը, որպեսզի գտնեք մատակարար:

Որոշ հիվանդանոցներ ու այլ մատակարարներ չեն առաջարկում ստորև նշված ծառայություններից մեկը կամ մի քանիսը: Այս ծառայությունները մատչելի են, և Health Net-ը պետք է երաշխավորի, որ դուք կամ ձեր ընտանիքի անդամը կարող է բժշկի այցելել կամ հիվանդանոց պառկել հետևյալ ապահովագրված ծառայությունները ստանալու համար՝

- Ընտանիքի պլանավորման և հակաբեղմնավորման ծառայություններ, ներառյալ շտապ հակաբեղմնավորում
- Ամլացում, ներառյալ՝ երկունքի ու ծննդաբերության ժամանակ արգանդափռոցի կապում
- Անպտղաբերության բուժումներ
- Արթրոս

Նախքան ներգրավվելը, դուք պետք է ձեռք բերեք ավելի շատ տեղեկություններ: Զանգահարեք նոր բժշկին, բժշկական խմբին, անկախ պրատիկայի ասոցիացիա կամ կլինիկա, որը ցանկանում էք: Կամ զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով՝ համոզվելու, որ կարող եք ստանալ ձեզ անհրաժեշտ առողջական խնամքի ծառայությունները:

### Մատակարարների հասցեագիրք

Health Net-ի Մատակարարների հասցեագրքում թվարկված են մատակարարները, որոնք մասնակցում են Health Net-ի ցանցին: Ցանցը մատակարարների խումբ է, որոնք համագործակցում են Health Net-ի հետ:

Health Net-ի Մատակարարների հասցեագիրքը թվարկում է հիվանդանոցները, PCP-ներին, մասնագետներին, մասնագետ-բուժքույրերին, բուժքույր-մանկաբարձներին, բժիշկների օգնականներին, ընտանիքի պլանավորման մատակարարներին, Դաշնային որակավարված առողջապահական կենտրոնները (FQHC), ամբուլատոր հոգեկան առողջության մատակարարներին, երկարատև ծառայությունները և աջակցությունը (LTSS), Անկախ ծննդատները (FBC), Հնդկացիների առողջական կլինիկաները (IHC) և Գյուղական առողջական կլինիկաները (RHC):



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Մատակարարների հասցեագիրքը պարունակում է Health Net-ի ցանցի մատակարարների անունները, մասնագիտացումները, հասցեները, հեռախոսահամարները, աշխատանքային ժամերը և լեզուները, որոնցով նրանք խոսում են: Այն տեղեկացնում է՝ արդյոք մատակարարն ընդունում է նոր հիվանդներ: Այն նաև տրամադրում է շենքի ֆիզիկական հասանելիության մակարդակի մասին տեղեկություններ, ինչպես օրինակ՝ կայանատեղի, թեքահարթակներ, բազրիքներով աստիճաններ և լայն դռներով ու բռնակներով սանհանգույցներ: Եթե ցանկանում եք տեղեկություններ ստանալ բժշկի կրթության, վերապատրաստման և վկայագրման մասին, խնդրում ենք զանգահարել 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Մատակարարների հասցեագիրքը հասանելի է նաև առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Եթե ուզում եք ստանալ Մատակարարների հասցեագրքի տպված պատճենը, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Մատակարարների ցանց

Մատակարարների ցանցը բժիշկների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ է, որոնք համագործակցում են Health Net-ի հետ: Դուք կստանաք ձեր ապահովագրված ծառայությունները Health Net-ի ցանցի միջոցով:

Ակնարկ. Ամերիկյան հնդկացիները կարող են IHC ընտրել որպես իրենց PCP:

Եթե ձեր PCP-ն, հիվանդանոցը կամ այլ մատակարարն ունի բարոյական առարկություն տրամադրելու ձեզ ապահովագրված ծառայությունը, օրինակ՝ ընտանիքի պլանավորում կամ արքորտ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Բարոյական առարկության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս գլխի «Բարոյական առարկություն» հատվածը:

Եթե ցանցի ձեր մատակարարն ունի բարոյական առարկություն, նա կարող է օգնել ձեզ գտնել մեկ այլ մատակարար, որը կտրամադրի ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Ձեզ հետ կարող է աշխատել նաև Health Net-ը, որպեսզի մատակարար գտնեք, որը կտրամադրի այս ծառայությունը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Ցանցի մատակարարներ

Ձեր առողջական խնամքի կարիքների համար դուք պետք է օգտագործեք Health Net-ի ցանցի մատակարարներին: Դուք ձեր կանխարգելիչ և ընթացիկ խնամքը ստանալու եք ձեր PCP-ից: Դուք նաև կօգտագործեք Health Net-ի ցանցի մասնագետներին, հիվանդանոցները և այլ մատակարարներին:

Ցանցի մատակարարների Մատակարարների հասցեագիրքը ստանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կարող եք գտնել Մատակարարների հասցեագիրքը նաև առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ:

Բացառությամբ շտապ օգնության խնամքի, հնարավոր է՝ դուք վճարեք մատակարարների համար, որոնք գտնվում են ցանցից դուրս:

## Արտացանցային մատակարարներ, որոնք սպասարկման տարածքում են

Արտացանցային մատակարարներն այն մատակարարներն են, որոնք չունեն Health Net-ի հետ համագործակցելու պայմանագիր: Բացառությամբ շտապ օգնության խնամքի, հնարավոր է՝ դուք վճարեք մատակարարների համար, որոնք գտնվում են ցանցից դուրս: Եթե ունեք ապահովագրված առողջական խնամքի ծառայությունների կարիք, հնարավոր է՝ դուք կարողանաք ստանալ դրանք ցանցից դուրս անվճար, քանի դեռ դրանք համարվում են բժշկական տեսակետից անհրաժեշտ և հասանելի չեն ցանցում:

Health Net-ը կարող է ձեզ ուղեգիր տալ արտացանցային մատակարարի մոտ, եթե ձեզ անհրաժեշտ ծառայությունները հասանելի չեն ցանցում, կամ եթե տնից հեռու եք գտնվում: Եթե մենք ձեզ ուղեգիր տանք արտացանցային մատակարարի մոտ, մենք կվճարենք ձեր խնամքի համար:

Եթե օգնության կարիք ունեք արտացանցային ծառայությունների հետ կապված, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Սպասարկման տարածքից դուրս

Եթե գտնվում եք Health Net-ի սպասարկման տարածքից դուրս և ունեք խնամքի կարիք, որը շտապ օգնություն կամ հրատապ չէ, անմիջապես զանգահարեք ձեր PCP-ին: Կամ զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Շտապ օգնության համար զանգահարեք **911** կամ այցելեք մոտակա շտապ օգնության սենյակ: Health Net-ն ապահովագրում է ցանցից դուրս շտապ օգնությունը: Եթե դուք ճանապարհորդում եք Կանադայում կամ Մեքսիկայում և ունեք արտակարգ իրավիճակի ծառայությունների կարիք, որոնք պահանջում են հոսպիտալացում, Health Net-ը կապահովագրի ձեր խնամքը: Եթե դուք ճանապարհորդում եք Կանադայից կամ Մեքսիկայից բացի այլ երկրներում և ունեք արտակարգ իրավիճակի ծառայությունների կարիք, Health Net-ը **չի** ապահովագրի ձեր խնամքը:

Ակնարկ. Ամերիկացի հնդկացիները կարող են ծառայություններ ստանալ ցանցից դուրս IHC-ներում:

Եթե հարցեր ունեք արտացանցային կամ սպասարկման տարածքից դուրս խնամքի մասին, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Եթե գրասենյակը փակ է, և դուք օգնություն եք ցանկանում ներկայացուցչից, զանգահարեք բուժքույրական խորհրդատվության հեռախոսագծին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:

## Բժիշկներ

Դուք կընտրեք բժիշկ կամ առաջնային խնամքի մատակարար (PCP) Health Net-ի Մատակարարների հասցեագրքից: Ձեր ընտրած բժիշկը պետք է լինի մասնակցող մատակարար: Սա նշանակում է, որ մատակարարը Health Net-ի ցանցում է: Health Net-ի Մատակարարների հասցեագրքի պատճենը ստանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կամ գտեք այն առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Եթե նոր բժիշկ եք ընտրում, դուք պետք է զանգահարեք՝ համոզվելու, որ ձեր ընտրած PCP-ն նոր հիվանդներ է ընդունում:

Եթե դուք ունեիք բժիշկ, նախքան Health Net-ի անդամ դառնալը, և այդ բժիշկը Health Net-ի ցանցում չէ, հնարավոր է, որ կարողանաք շարունակել այցելել այդ բժշկին որոշակի ժամանակ: Սա կոչվում է խնամքի շարունակականություն: Health Net-ը տրամադրում է խնամքի շարունակականություն հետևյալի համար.

- Սուր վիճակներ (լուրջ և անսպասելի, սակայն կարճատև վիճակ, օրինակ՝ սրտի կաթված կամ թոքերի բորբոքում)՝ քանի դեռ շարունակվում է տվյալ վիճակը:
- Քրոնիկական ֆիզիկական և վարքագծային վիճակներ՝ մինչև 12 ամիս: Սովորաբար, քանի դեռ դուք չեք վերջացրել ձեր բուժման կուրսը, և ձեր բժիշկը հաջողությամբ կարող է փոխանցել ձեզ մեկ ուրիշ մատակարարի:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Հղիություն՝ հղիության և անմիջապես հետծննդաբերական խնամքի ընթացքում (հեշտոցային ծննդաբերությունից հետո վեց շաբաթ կամ 8 շաբաթ Կեսարյան հատումից հետո):
- Մայրական հոգեկան առողջություն՝ մինչև 12 ամիս ախտորոշումից հետո կամ հղիության ավարտից հետո, որը որ տեղի ունենա առաջինը:
- Անբուժելի հիվանդություն/վիճակ՝ հիվանդության ողջ ընթացքում:
- Նորածնի խնամք՝ ծննդից մինչև 36 ամսական՝ մինչև 12 ամիս կամ մինչև մանկան 36 ամիսը, որը որ տեղի ունենա առաջինը:
- Վիրահատություն կամ այլ ընթացակարգ, որը հաստատվել է Health Net-ի կողմից՝ որպես ձեր փաստացի բուժման ընթացքի մաս, և որը խորհուրդ է տրվել և փաստագրվել մատակարարի կողմից: Այս բուժումը պլանավորված է եղել մեր ծրագրի հետ բժշկի կամ հիվանդանոցի համագործակցության դադարումից հետո 180 օրվա ընթացքում, կամ մեր ծրագրին ձեր ապահովագրումը սկսելուց հետո 180 օրվա ընթացքում:

Այլ հնարավոր որակավորվող վիճակների համար դիմեք Health Net-ի Անդամների ծառայությունների բաժին:

Այնուամենայնիվ, խնամքի շարունակականության նպաստը չի ներառում հետևյալ ծառայությունները՝

- Տնական օգտագործման բժշկական սարքավորումներ
- Փոխադրում
- Այլ օժանդակ ծառայություններ, և
- Ծրագրի կողմից չապահովագրվող Վճար ծառայության դիմաց Medi-Cal ծրագրով տրամադրվող ծառայություններ:

Խնամքի շարունակականություն ստանալու համար պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

- Դուք պետք է այցելած լինեիք արտացանցային մատակարարին առնվազն մեկ անգամ տասներկու (12) ամսվա ընթացքում ոչ շտապ օգնության խնամքի համար, նախքան մեր ծրագրին ձեր անդամագրվելը,
- Արտացանցային մատակարարը պետք է համաձայնվի սովորական վճարման դրույքին կամ Medi-Cal-ի վճարման դրույքին,
- Արտացանցային մատակարարը հանդիսանում է California-ի նահանգային ծրագրի հաստատված մատակարար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



Բացի դրանից, որոշ անդամներ կարող են շարունակել այցելել իրենց մատակարարին հետևյալ կերպ.

- Մեր ծրագրին միացած տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կարող են խնդրել շարունակել իրենց բժշկին այցելել, եթե առկա է գործող Medi-Cal-ի Վճար ծառայության դիմաց բուժման լիազորման խնդրանք:
- Եթե դուք միացել եք մեր ծրագրին Covered California-ից Medi-Cal Ղեկավարվող խնամքի պարտադիր տեղափոխման արդյունքում, դուք իրավունք ունեք ավարտել նախկինում հաստատված, ապահովագրված և բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքը ձեր բուժող մատակարարի մոտ մեր ծրագրին ձեր միանալու ամսաթվից մինչև 60 օրվա ընթացքում, կամ մինչև որ մեր ծրագիրն ավարտի նոր գնահատումն առանց ձեր կամ մատակարարի խնդրանքի:
- Վարքագծային առողջության բուժում ստացող 21 տարեկանից փոքր անդամները կարող են շարունակել այցելել իրենց արտացանցային Վարքագծային առողջության մատակարարին մինչև 12 ամիս: Նրանք պետք է գոյություն ունեցող հարաբերություններ ունենան Վարքագծային առողջության մատակարարի հետ: Սա նշանակում է, որ անդամն այցելել է այդ մատակարարին առնվազն մեկ անգամ 6 ամսում, նախքան մեր ծրագրին անդամագրվելը կամ Տարածաշրջանային կենտրոնից տեղափոխվելը:

Խնամքի շարունակականության մասին կարող եք ավելին կարդալ այս տեղեկագրքում: Մանրամասների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Եթե դուք ունեք մասնագետի կարիք, ձեր PCP-ն կուղարկի ձեզ մասնագետի մոտ Health Net-ի ցանցում:

Հիշեք, եթե PCP չեք ընտրել, ապա Health Net-ը կընտրի նրան ձեզ համար:

Դուք լավագույնս գիտեք ձեր առողջական խնամքի կարիքները, այնպես որ լավ կլինի, եթե դուք ընտրեք: Եթե դուք և Medicare-ում, և Medi-Cal-ում եք, ապա ձեզ հարկավոր չէ PCP ընտրել:

Եթե ուզում եք փոխել ձեր PCP-ին, ապա պետք է ընտրեք PCP Health Net-ի Մատակարարների հասցեագրքից: Համոզվեք, որ PCP-ն ընդունում է նոր հիվանդներ: Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Հիվանդանոցներ

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա հիվանդանոց: Եթե արտակարգ իրավիճակ չէ, և դուք ունեք հիվանդանոցային խնամքի կարիք, ապա ձեր PCP-ն կորոշի՝ ինչ հիվանդանոց այցելել: Դուք պետք է այցելեք ցանցի հիվանդանոց: Health Net-ի ցանցի հիվանդանոցները նշված են Մատակարարների հասցեագրքում: Հիվանդանոցային ծառայությունները, բացառությամբ արտակարգ իրավիճակների, պահանջում են նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

## Ժամանակին խնամքի ստացում

| Ժամադրության տեսակը                                                                                                                             | Դուք պետք է ժամադրություն ստանաք հետևյալ ժամկետներում՝ |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------|
| Հրատապ խնամքի ժամադրություններ, որոնք չեն պահանջում նախնական հաստատում (նախօրոք լիազորում)                                                      | 48 ժամ                                                 |
| Հրատապ խնամքի ժամադրություն, որը պահանջում է նախնական հաստատում (նախօրոք լիազորում)                                                             | 96 ժամ                                                 |
| Ոչ-հրատապ առաջնային խնամքի ժամադրություններ                                                                                                     | 10 աշխատանքային օր                                     |
| Ոչ-հրատապ մասնագետ                                                                                                                              | 15 աշխատանքային օր                                     |
| Ոչ-հրատապ հոգեկան առողջության մատակարար (ոչ բժիշկ)                                                                                              | 10 աշխատանքային օր                                     |
| Ոչ-հրատապ ժամադրություն օժանդակ (աջակից) ծառայությունների համար՝ վնասվածք, հիվանդություն կամ այլ առողջական վիճակ ախտորոշելու կամ բուժելու համար | 15 աշխատանքային օր                                     |
| Հեռախոսով սպասելու ժամանակը նորմալ աշխատանքային ժամերի ընթացքում                                                                                | 10 րոպե                                                |
| Հիվանդների տեսակավորում՝ 24/7 ծառայություններ                                                                                                   | 24/7 ծառայություններ – Ոչ ավել, քան 30 րոպե            |



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Խնամք ստանալու ճանապարհի ժամանակը և հեռավորությունը

Health Net-ը պետք է հետևի ձեր խնամքի համար ճամփորդության ժամանակին և հեռավորության ստանդարտներին: Այդ ստանդարտներն օգնում են ապահովել, որ դուք կարող եք ստանալ խնամք առանց չափազանց երկար ճանապարհ անցնելու կամ ձեր բնակության վայրից չափազանց հեռու: Ճամփորդության ժամանակի և հեռավորության ստանդարտները կախված են ձեր բնակության վարչաշրջանից:

Եթե Health Net-ը չկարողանա ձեզ տրամադրել խնամք այս ճամփորդության ժամանակի և հեռավորության ստանդարտներով, ապա DHCS-ը կարող է կիրառվել մեկ այլ ստանդարտ, որը կոչվում է այլընտրանքային հասանելիության ստանդարտ: Կախված ձեր բնակության վայրից՝ Health Net-ի ժամանակի և հեռավորության ստանդարտները տեսնելու համար, խնդրում ենք այցելել [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքը: Կամ զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Եթե ձեր բնակության վայրից հեռու գտնվող մատակարարի խնամքի կարիք ունեք, կարող եք զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Նրանք կարող են օգնել ձեզ գտնելու խնամք ձեզ մոտ գտնվող մատակարարի մոտ: Եթե Health Net-ը չի կարողանում խնամք գտնել ձեզ մոտ գտնվող մատակարարից մոտ, դուք կարող եք խնդրել Health Net-ից ձեզ փոխադրում կազմակերպել ձեր մատակարարին այցելելու համար, անգամ եթե այդ մատակարարը գտնվում է ձեր բնակավայրից հեռու:

Հեռու է համարվում այն, երբ դուք չեք կարող այցելել մատակարարին Health Net-ի ճամփորդության ժամանակի և հեռավորության ստանդարտների շրջանակներում ձեր վարչաշրջանի համար՝ անկախ ցանկացած այլընտրանքային հասանելիության ստանդարտից, որը Health Net-ը կարող է օգտագործել ձեր փոստային դասիչի համար:

## Առաջնային խնամքի մատակարար (PCP)

Դուք պետք է PCP ընտրեք Health Net-ին անդամագրվելուց հետո 30 օրվա ընթացքում: Կախված ձեր տարիքից և սեռից, դուք կարող եք ընտրել ընդհանուր մասնագետ, մանկաբարձ/գինեկոլոգ, ընտանիքի մատակարար, ինտերնիստ կամ մանկաբույժ՝ որպես ձեր առաջնային խնամքի մատակարար (PCP): Առաջնային խնամք մատուցող բուժքույրը (NP), օգնական բժիշկը (PA) կամ արտոնագրված բուժքույր-մանկաբարձը նույնպես կարող են հանդես գալ որպես ձեր PCP: Եթե ընտրեք NP, PA կամ բուժքույր-մանկաբարձ, ձեզ կնշանակվի բժիշկ՝ ձեր խնամքը վերահսկելու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսակապի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Կարող եք ընտրել Հնդկացիների առողջական կլինիկա (IHC), Դաշնային որակավորված առողջական կենտրոն (FQHC) կամ Գյուղական առողջական կլինիկա (RHC) որպես ձեր PCP: Կախված մատակարարի տեսակից՝ դուք կարող եք ընտրել մեկ PCP ձեր ողջ ընտանիքի համար, որոնք նույնպես Health Net-ի անդամներ են:

Եթե PCP չընտրեք անդամակցման 30 օրվա ընթացքում, ապա Health Net-ը ձեզ PCP կնշանակի: Եթե ձեզ PCP է նշանակվել, և դուք ուզում եք փոխել նրան, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Փոփոխությունը կիրականացվի հաջորդ ամսվա առաջին օրվանից:

Ձեր PCP-ն պետք է՝

- Տեղեկանա ձեր առողջության պատմությանն ու կարիքներին
- Վարի ձեր առողջապահական արձանագրությունները
- Տրամադրի ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և ընթացիկ առողջական խնամքը
- Ուղղորդի (ուղարկի) ձեզ մասնագետի մոտ, անհրաժեշտության դեպքում
- Կազմակերպի հիվանդանոցի խնամքը, անհրաժեշտության դեպքում

Կարող եք կարդալ Մատակարարների հասցեագիրքը՝ Health Net-ի ցանցում PCP գտնելու համար: Health Net-ի հետ համագործակցող IHC-ների, FQHC-ների ու RHC-ների ցանկը նշված է Մատակարարների հասցեագրքում:

Կարող եք գտնել Health Net-ի Մատակարարների հասցեագիրքն առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում: Կամ կարող եք խնդրել, որ Մատակարարների հասցեագիրքը փոստով ուղարկվի ձեզ՝ զանգահարելով 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև զանգահարել՝ պարզելու, եթե ձեր ընտրած PCP-ն նոր հիվանդներ է ընդունում:

## Բժիշկների և այլ մատակարարի ընտրություն

Դուք լավագույնս գիտեք ձեր առողջական խնամքի կարիքները, այնպես որ լավ կլինի, եթե դուք ընտրեք ձեր PCP-ին:

Ավելի նպատակահարմար է մնալ մեկ PCP-ի հետ, որպեսզի նա կարողանա ճանաչել ձեր առողջական խնամքի կարիքները: Սակայն, եթե ցանկանում եք ընտրել նոր PCP, ցանկացած ժամանակ կարող եք փոխել: Դուք պետք է ընտրեք PCP, ով Health Net-ի մատակարարների ցանցում է և ընդունում է նոր հիվանդներ:

Ձեր նոր ընտրությունը կդառնա ձեր PCP-ն՝ ձեր կողմից փոփոխությունը կատարելու հաջորդ ամսվա առաջին օրվանից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Ձեր PCP-ին փոխելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ը կարող է խնդրել ձեզ փոխել ձեր PCP-ին, եթե PCP-ն չի ընդունում նոր հիվանդներ, հեռացել է Health Net-ի ցանցից կամ խնամք չի տրամադրում ձեր տարիքի հիվանդներին: Health Net-ը կամ ձեր PCP-ն կարող են նաև խնդրել ձեզ փոխվել նոր PCP-ի, եթե դուք չեք կարողանում համագործակցել կամ համաձայնվել ձեր PCP-ի հետ, կամ եթե բաց եք թողնում կամ ուշանում եք ժամադրություններից: Եթե Health Net-ը պետք է փոխի ձեր PCP-ին, Health Net-ը ձեզ գրավոր կտեղեկացնի այս մասին:

Եթե փոխեք PCP-ներին, դուք փոստով կստանաք նոր Health Net-ի անդամի ID քարտ: Այն կունենա ձեր նոր PCP-ի անունը: Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին, եթե հարցեր ունեք նոր ID քարտի ստացման վերաբերյալ:

*Միայն Los Angeles վարչաշրջանի անդամների համար.*

Եթե ապրում եք Los Angeles վարչաշրջանում, կարող եք այնպիսի PCP ընտրել, որը պայմանագիր ունի Health Net-ի կամ մեր ենթապայմանագրային ծրագրի՝ Molina Healthcare of California-ի (Molina) հետ: Եթե ձեզ հարկավոր է այցելել մասնագետի, ապա ձեր PCP-ն կուղարկի ձեզ Molina-ի հետ պայմանագիր ունեցող մասնագետի մոտ: Կարդացեք ձեր Մատակարարների հասցեագրքի «Molina» բաժինը, որ իմանաք, թե որ մատակարարներից կարող եք օգտվել:

## Ժամադրություններ

Երբ ունեք առողջական խնամքի կարիք՝

- Զանգահարեք ձեր PCP-ին
- Պատրաստ ունեցեք ձեր Health Net-ի ID համարը զանգի ընթացքում
- Եթե գրասենյակը փակ է, թողեք ձեր անունով և հեռախոսահամարով հաղորդագրություն
- Ժամադրությանը ձեզ հետ ունեցեք ձեր BIC և Health Net-ի ID քարտը
- Խնդրեք փոխադրում դեպի ձեր ժամադրության վայրը, եթե դրա կարիքն ունեք
- Խնդրեք լեզվական աջակցություն կամ բանավոր թարգմանչական ծառայություններ, եթե դրա կարիքն ունեք
- Մի ուշացեք ժամադրությունից
- Անմիջապես զանգահարեք, եթե չեք կարող ներկայանալ ժամադրությանը կամ ուշանում եք



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Պատրաստ ունեցեք հարցեր և դեղորայքի վերաբերյալ տեղեկություններ, եթե դրանց կարիքն ունենաք

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ:

## Վճարում

Դուք **չեք** վճարում ապահովագրված ծառայությունների համար: Շատ դեպքերում դուք չպետք է հաշիվ ստանաք մատակարարից: Հնարավոր է, դուք ստանաք Նպաստների բացատրություն (EOB) կամ հայտարարագիր մատակարարից: EOB-ները կամ հայտարարագրերը հաշիվներ չեն:

Եթե հաշիվ ստանաք, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Տեղեկացրեք Health Net-ին գանձված գումարի չափը, ծառայության ամսաթիվը և հաշվի ներկայացման պատճառը: Դուք պարտավոր **չեք** վճարել մատակարարին որևէ գումար, որը Health Net-ը պարտք է ցանկացած ապահովագրված ծառայության համար: Բացառությամբ շտապ օգնության խնամքի կամ հրատապ խնամքի, հնարավոր է՝ դուք վճարեք այն մատակարարների խնամքի համար, որոնք ցանցից դուրս են: Եթե ունեք ապահովագրված առողջական խնամքի ծառայությունների կարիք, հնարավոր է՝ դուք կարողանաք ստանալ դրանք անվճար արտացանցային մատակարարից, քանի դեռ դրանք համարվում են բժշկական տեսակետից անհրաժեշտ և հասանելի չեն ցանցում, և նախնական հաստատված են Health Net-ի կողմից:

Եթե հաշիվ ստանաք կամ ձեզ խնդրեն վճարել համավճար, որը դուք կարծում եք, որ չպետք է վճարեք, կարող եք նաև լրացնել Health Net-ի հայցի ձևաթուղթը: Դուք պետք է գրավոր տեղեկացնեք Health Net-ին, թե ինչու եք ստիպված եղել վճարել՝ պարագայի կամ ծառայության համար: Health Net-ը կկարդա ձեր հայցը և կորոշի՝ արդյոք դուք կարող եք հետ ստանալ ձեր գումարը: Հարցերի կամ հայցի ձևաթուղթը խնդրելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Ուղեգրեր

Անհրաժեշտության դեպքում ձեր PCP-ն ձեզ ուղեգիր կտրամադրի, որպեսզի ուղարկվի ձեզ մասնագետի մոտ: Մասնագետը բժիշկ է, ով ունի հավելյալ կրթություն բժշկության որևէ ոլորտում: Ձեր PCP-ն կաշխատի ձեզ հետ մասնագետ ընտրելու համար: Ձեր PCP-ի գրասենյակը կարող է օգնել ձեզ ժամադրություն ստանալ մասնագետին այցելելու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Այլ ծառայությունները, որոնք կարող են պահանջել ուղեգիր, ներառում են գրասենյակում անցկացվող ընթացակարգեր, ռենտգեն, լաբորատոր անալիզներ և որոշ ծառայություններ մասնագետի կողմից:

Ձեր PCP-ն, հնարավոր է, ձեզ ձևաթուղթ կտա մասնագետի մոտ տանելու համար: Մասնագետը կլրացնի այդ ձևաթուղթը և հետ կուղարկի Ձեր PCP-ին: Մասնագետը կբուժի ձեզ այնքան ժամանակ, որքան, որ նրա կարծիքով, ձեզ բուժում է հարկավոր:

Ձեր PCP-ն կսկսի ուղեգրի գործընթացը: Ձեր PCP-ն գիտի՝ արդյոք ձեզ լիազորում է հարկավոր, թե կարող եք անմիջապես ժամադրություն նշանակել: Եթե հարցեր ունեք առ այն, թե արդյոք մասնագետի կամ հիվանդանոցի խնամքն ունի հաստատման կարիք, կարող եք զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Սովորական ուղեգրեր տրամադրելը տևում է մինչև 5 աշխատանքային օր («աշխատանքային օրերը» երկուշաբթիից մինչև ուրբաթ ընկած օրերն են), սակայն հնարավոր է, որ տևի մինչև 28 օրացուցային օր (14 օր առաջին հայցի օրվանից և լրացուցիչ 14 օր, եթե հետաձգում է պահանջվում), եթե ձեր PCP-ից ավելի մանրամասն տեղեկություններ են պահանջվում: Որոշ դեպքերում ձեր PCP-ն կարող է խնդրել արագացնել ձեր ուղեգիրը: Արագացված (շտապ) ուղեգիր ստանալը 72 ժամից ավելի չի տևում: Խնդրում ենք զանգահարել մեզ, եթե այդ ժամանակահատվածներում պատասխան չստանաք:

Եթե ունեք առողջական խնդիր, որն ունի հատուկ, երկարաժամկետ բժշկական խնամքի կարիք, հնարավոր է, ձեզ անհաժեշտ է մշտական ուղեգիր: Մա նշանակում է, որ կարող եք այցելել միևնույն մասնագետին մեկ անգամից ավելի, առանց ամեն անգամ ուղեգիր ստանալու:

Եթե խնդիր է առաջանում մշտական ուղեգիր ստանալու հարցում կամ ցանկանում եք ստանալ Health Net-ի ուղեգրերի քաղաքականության պատճենը, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Ուղեգրի կարիք չկա հետևյալի համար՝

- PCP-ի այցելություններ
- Մանկաբարձ/գինեկոլոգի (OB/GYN) այցելություններ
- Հրատապ կամ շտապ օգնության խնամքի այցելություններ
- Չափահասների զգայուն ծառայություններ, ինչպես օրինակ՝ սեռական բռնության խնամք
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ (լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Ընտանիքի պլանավորման տեղեկությունների և ուղեգրերի ծառայություն գրասենյակ 1-800-942-1054 հեռախոսահամարով)



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- ՄԻԱՎ-ի ստուգում և խորհրդատվություն (12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի)
- Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի)
- Ասեղնաբուժություն (առաջին երկու ծառայություններն ամսական, լրացուցիչ ժամադրությունների համար անհրաժեշտ է ուղեգիր)
- Քիրոպրակտիկ ծառայություններ (կարող է պահանջվել ուղեգիր, եթե տրամադրվում է ցանցից դուրս FQHC-ների, RHC-ների և IHC-ների կողմից)
- Ոտնաթաթի ծառայություններ
- Իրավասու ատամնաբուժական ծառայություններ
- Նախնական հոգեկան առողջության գնահատում
- Ընթացիկ մանկաբուժական խնամք Health Net-ի հետ աշխատող բժշկից
- Վկայագրված մանկաբարձ-բուժքրոջ ծառայություններ
- Նախնական վարքագծային առողջության գնահատում Health Net-ի հետ աշխատող վարքագծային առողջության մատակարարից

Անչափասներին ուղեգիր հարկավոր չէ հետևյալի համար.

- Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ հետևյալի համար՝
  - Սեռական բռնություն
  - Ֆիզիկական բռնություն
  - Երբ դուք ինքներդ ձեզ կամ ուրիշներին վնասելու մտքեր ունեք (12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անչափահասներ)
- Հղիության խնամք
- Սեռական բռնության խնամք
- Թմրանյութերի օգտագործման խանգարման բուժում (12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անչափահասներ)

## Նախնական հաստատում (նախօրոք լիազորում)

Խնամքի որոշ տեսակների համար ձեր PCP-ն կամ մասնագետը պետք է խնդրեն Health Net-ի թույլտվությունը, նախքան դուք կկարողանաք ստանալ խնամքը: Սա կոչվում է նախօրոք լիազորման խնդրանք, նախօրոք հաստատում կամ նախնական հաստատում: Սա նշանակում է, որ Health Net-ը պետք է ապահովի, որ խնամքը բժշկական տեսակետից անհրաժեշտ է կամ հարկավոր:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



Խնամքը բժշկական տեսակետից անհրաժեշտ է, եթե այն խելամիտ է և անհրաժեշտ՝ ձեր կյանքը պաշտպանելու, ձեզ հեռու պահելու լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից, կամ նվազեցնում է սաստիկ ցավն ախտորոշված հիվանդությունից կամ վնասվածքից:

Հետևյալ ծառայությունների համար մշտապես անհրաժեշտ է նախնական հաստատում (նախօրոք լիազորում), եթե անգամ դուք ստանում եք դրանք Health Net-ի ցանցի մատակարարից՝

- Հոսպիտալացում, եթե արտակարգ իրավիճակ չէ
- Health Net-ի սպասարկման տարածքից դուրս ծառայություններ, եթե արտակարգ կամ հրատապ իրավիճակ չէ
- Ամբուլատոր վիրահատություն
- Երկարատև խնամք բուժքույրական հաստատությունում
- Մասնագիտացված բուժում

Որոշ ծառայությունների համար, ձեզ անհրաժեշտ է նախնական հաստատում (նախօրոք լիազորում): Առողջապահության և անվտանգության օրենքի 1367.01(h)(1) բաժնի ներքո Health Net-ը կորոշի ընթացիկ նախնական հաստատումները (նախօրոք լիազորումները) 5 աշխատանքային օրվա ընթացքում, երբ Health Net-ը ստանա ողջամտորեն անհրաժեշտ տեղեկատվությունը որոշում կայացնելու համար:

Այն խնդրանքների դեպքում, երբ մատակարարը նշում է կամ Health Net-ը որոշում է, որ հետևյալ ստանդարտ ժամանակահատվածը կարող է լրջորեն վտանգել ձեր կյանքը, կամ առողջությունը, կամ առավելագույն գործունեություն ձեռք բերելու, պահպանելու կամ վերագտնելու կարողությունը, Health Net-ը կկայացնի արագացված (արագ) նախնական հաստատման (նախօրոք լիազորման) որոշում: Health Net-ը ծանուցագիր կտրամադրի որքան հնարավոր է շուտ՝ ինչպես պահանջվում է ձեր առողջական վիճակով, և ոչ ուշ, քան ծառայությունների խնդրանքի ստացումից հետո 72 ժամվա ընթացքում:

Health Net-ը չի վճարում վերանայողներին ապահովագրությունը կամ ծառայությունները մերժելու համար: Եթե Health Net-ը չի հաստատում խնդրանքը, ապա Health Net-ը ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (NOA) նամակ: NOA նամակը կտեղեկացնի ձեզ՝ ինչպես բողոքարկում ներկայացնել, եթե համաձայն չեք որոշման հետ:

Health Net-ը կկապվի ձեզ հետ, եթե Health Net-ին անհրաժեշտ լինեն ավելի շատ տեղեկություններ կամ ժամանակ ձեր հայտը դիտարկելու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Նախնական հաստատում (նախօրոք լիազորում) երբևէ պետք չէ շտապ օգնության խնամքի համար, եթե անգամ այն ցանցից կամ ձեր սպասարկման տարածքից դուրս է: Սա ներառում է երկունքը և ծննդաբերությունը, եթե դուք հղի եք: Նախնական հաստատման (նախօրոք լիազորման) կարիք չկա զգայուն ծառայությունների համար, ինչպիսիք են՝ ընտանիքի պլանավորումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ծառայությունները և ամբուլատոր աբորտները:

## Երկրորդ կարծիքներ

Հնարավոր է՝ դուք ցանկանաք ստանալ երկրորդ կարծիք այն խնամքի առնչությամբ, որը ձեր մատակարարն առաջարկում է՝ ըստ ձեր կարիքի կամ կարծիք ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ: Օրինակ, դուք կարող եք ցանկանալ երկրորդ կարծիք, եթե համոզված չեք՝ արդյոք դուք ունեք նշանակված բուժման կամ վիրահատության կարիք, կամ դուք փորձել եք հետևել բուժման ծրագրին, սակայն այն անարդյունավետ է եղել:

Եթե ուզում եք երկրորդ կարծիք ստանալ, դուք կարող եք ընտրել ցանցի մատակարար՝ ըստ ձեր ընտրության: Մատակարար ընտրելու հետ կապված օգնության համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ը կվճարի երկրորդ կարծիքի համար, եթե դուք կամ ցանցի մատակարարը խնդրի այն, և դուք ստանաք երկրորդ կարծիքը ցանցի մատակարարից: Կարիք չկա ստանալու Health Net-ի թույլտվությունը, որպեսզի երկրորդ կարծիք ստանաք ցանցի մատակարարից: Այնուամենայնիվ, եթե ձեզ ուղեգիր է հարկավոր, ապա ձեր ցանցի մատակարարը կարող է օգնել ձեզ ուղեգիր ստանալ երկրորդ կարծիքի համար, եթե դրա կարիքը կա:

Եթե երկրորդ կարծիք եք պահանջում ձեր PCP-ի կայացրած ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ, ապա երկրորդ կարծիքը պետք է տրվի մեր ծրագրի բժիշկների ցանցի մեկ այլ PCP-ի կողմից: Երկրորդ կարծիքը կարող է լինել նաև մասնագիտացված բժշկի կողմից, ով ծանոթ է ձեր ունեցած բժշկական վիճակին: Եթե երկրորդ կարծիք եք պահանջում ձեր մասնագետի կայացրած ախտորոշման կամ բուժման ծրագրի վերաբերյալ, ապա երկրորդ կարծիքը պետք է տրվի նույն մասնագիտության, մեր ծրագրի ցանցում գործող Անկախ բժիշկների ասոցիացիայի (IPA) կամ բժշկական խմբի կողմից: Եթե ձեր ծրագրի ցանցում «առողջական խնամքի որակավորված մասնագետ» չկա, ապա մենք կհաստատենք (կհամաձայնվենք), որ երկրորդ կարծիք ստանաք ցանցից դուրս որակավորված մատակարարից: Ձեր PCP-ն կարող է ուղարկել ձեզ ցանցի մատակարարի մոտ երկրորդ կարծիք ստանալու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Եթե Health Net-ի ցանցում չկա մատակարար, ով կարող է տրամադրել երկրորդ կարծիք, Health Net-ը կվճարի արտացանցային մատակարարից ստացված երկրորդ կարծիքի համար: Health Net-ը 5 աշխատանքային օրվա ընթացքում կտեղեկացնի ձեզ՝ արդյոք մատակարարը, որին ընտրել եք երկրորդ կարծիքի համար, հաստատված է: Եթե ունեք քրոնիկական, սաստիկ կամ լուրջ հիվանդություն, կամ հայտնվել եք հրատապ կամ լուրջ վտանգի առջև, որը կարող է վնասել ձեր առողջությունը, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ կյանքի կորուստ, վերջույթի, կամ մարմնի հիմնական մասերի, կամ մարմնի գործառույթի կորուստ, Health Net-ը որոշում կկայացնի 72 ժամվա ընթացքում:

Եթե Health Net-ը մերժի երկրորդ կարծիքի ձեր հայտը, դուք կարող եք բողոքարկել: Բողոքարկումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցեք այս տեղեկագրի «Բողոքարկումներ» բաժինը:

### Կանանց առողջության մասնագետներ

Դուք կարող եք այցելել կանանց առողջության մասնագետի Health Net-ի ցանցում ապահովագրված խնամքի համար, որն անհրաժեշտ է կանանց ընթացիկ և կանխարգելիչ առողջական խնամքի ծառայություններ տրամադրելու համար: Այս ծառայությունները ստանալու համար ձեր PCP-ից ուղեգրի ստացման կարիք չկա: Կանանց առողջության մասնագետ գտնելու օգնության համար կարող եք զանգահարել 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև զանգահարել 24/7 բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագծին՝ զանգահարելով Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ընտրացանկում ընտրեք բուժքույրական 24-ժամյա խորհրդատվական գիծ տարբերակը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

---

# 4. Նպաստներ և ծառայություններ

---

## Ինչ է ապահովագրում ձեր առողջապահական ծրագիրը

Այս բաժինը բացատրում է ձեր՝ որպես Health Net-ի անդամի ապահովագրված ծառայությունները: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են այնքան ժամանակ, քանի դեռ դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են և տրամադրվում են ցանցի մատակարարի կողմից: Դուք պետք է նախնական հաստատում (նախօրոք լիազորում) խնդրեք, եթե խնամքը ցանցից դուրս է, բացի զգայուն ծառայություններից, շտապ օգնության կամ հրատապ խնամքի ծառայություններից: Ձեր առողջապահական ծրագիրը կարող է ապահովագրել բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայություններն արտացանցային մատակարարից: Սակայն դուք պետք է սա Health Net-ից խնդրեք: Խնամքը բժշկական տեսակետից անհրաժեշտ է, եթե այն խելամիտ է և անհրաժեշտ՝ ձեր կյանքը պաշտպանելու, ձեզ հեռու պահելու լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից, կամ նվազեցնում է սաստիկ ցավն ախտորոշված հիվանդությունից կամ վնասվածքից: Ապահովագրված ծառայությունների մասին մանրամասների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն առաջարկում է հետևյալ ծառայությունները՝

- Ամբուլատոր (ժամանակավոր) ծառայություններ
- Հեռակա մատուցվող առողջության ծառայություններ
- Հոգեկան առողջության ծառայություններ (ամբուլատոր)
- Շտապ օգնության ծառայություններ
- Անբուժելի հիվանդների և պալիատիվ խնամք
- Հոսպիտալացում
- Մայրություն և նորածինների խնամք
- Տրանսգենդերային ծառայություններ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Վերականգնողական և վերականգնման (թերապիա) ծառայություններ ու սարքեր
- Լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ, ինչպես օրինակ՝ ռենտգեն ճառագայթներ
- Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ ու քրոնիկական հիվանդության կառավարում
- Շաքարախտի կանխարգելման ծրագիր
- Թմրանյութերի օգտագործման խանգարման բուժման ծառայություններ
- Մանկաբուժական ծառայություններ
- Տեսողության ծառայություններ
- Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրում (NEMT)
- Ոչ բժշկական փոխադրում (NMT)
- Երկարատև ծառայություններ և աջակցություն (LTSS)

Կարդացեք այս բաժիններից յուրաքանչյուրը ստորև՝ տեղեկանալու ծառայությունների մանրամասներին, որոնք կարող եք ստանալ:

## Health Net-ի կողմից ապահովագրված Medi-Cal-ի նպաստներ

### Ամբուլատոր (ժամանակավոր) ծառայություններ

- ***Չափահասների պատվաստումներ***

Դուք կարող եք ստանալ չափահասների պատվաստումներ (սրսկումներ) ցանցի մատակարարից առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Health Net-ն ապահովագրում է այս սրսկումները, որոնք խորհուրդ են տրվում Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) Պատվաստման գործելակերպերի խորհրդատու հանձնաժողովի (ACIP) կողմից:

- ***Ալերգիայի խնամք***

Health Net-ն ապահովագրում է ալերգիայի ստուգումը և բուժումը, ներառյալ՝ ալերգիայի ապագայունացում, հիպոգլայունացում կամ իմունոթերապիա:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

▪ **Անեսթեզիոլոգի ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է անեսթեզիայի ծառայություններ, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ են, երբ դուք ստանում եք ամբուլատոր խնամք:

Ատամնաբուժական ընթացակարգերի համար մենք ապահովագրում ենք հետևյալ ծառայությունները, երբ լիազորվում է Health Net-ի կողմից՝

- Ներերակային (IV) անզգայացում կամ ընդհանուր անեսթեզիա, որն արվում է բժշկական մասնագետի կողմից
- Հաստատության ծառայություններ՝ կապված անզգայացման կամ անեսթեզիայի հետ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում, Դաշնային որակավորված առողջական կենտրոնում (FQHC), ատամնաբուժական գրասենյակում կամ հիվանդանոցում

▪ **Քիրոպրակտիկ ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է քիրոպրակտիկ ծառայություններ՝ սահմանափակվելով մանուալ թերապիայի միջոցով ողնաշարի բուժմամբ: Քիրոպրակտիկ ծառայությունները սահմանափակված են երկու ծառայությամբ ամսական՝ ասեղնաբուժության, աուդիոլոգիայի, աշխատանքային բուժման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ միասին: Health Net-ը կարող է նախնական հաստատել այլ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

Հետևյալ անդամներն իրավասու են քիրոպրակտիկ ծառայությունների հետ՝

- 21 տարեկանից փոքր երեխաներ
- Հղի կանայք մինչև ամսվա ավարտը, որը ներառում է 60 օր մինչև հղիության ավարտը
- Հմուտ բուժքույրական հաստատության, միջանկյալ խնամքի հաստատության կամ ենթասուր խնամքի հաստատության բնակիչներ
- Բոլոր անդամները, երբ ծառայությունները տրամադրվում են հիվանդանոցի ամբուլատոր բաժանմունքներում, FQHC-ներում կամ RHC-ներում, որոնք Health Net-ի ցանցում են



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

▪ **Ղիալիզի/հեմոդիալիզի ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է դիալիզի բուժումները: Health Net-ը նաև ապահովագրում է հեմոդիալիզի (քրոնիկական դիալիզի) ծառայությունները, եթե ձեր PCP-ն և Health Net-ը հաստատում են այն:

▪ **Ամբուլատոր վիրահատություն**

Health Net-ն ապահովագրում է ամբուլատոր վիրաբուժական ընթացակարգեր: Նրանք, որոնք անհրաժեշտ են ախտորոշիչ նպատակների համար, ընթացակարգերը, որոնք համարվում են ընտրովի, և որոշակի ամբուլատոր բժշկական ընթացակարգերը պահանջում են նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

▪ **Բժշկի ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է բժշկական ծառայությունները, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

▪ **Ոտնաթաթի (ոտքի) ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ ոտնաթաթի ծառայություններ՝ ոտքերի՝ ախտորոշման և բժշկական, վիրաբուժական, մեխանիկական, մանիպուլյատիվ և էլեկտրական բուժման համար: Սա ներառում է կոճեր և ոտքի մեջ տեղադրվող ջիլեր, մկանների ոչ-վիրաբուժական բուժում, ոտքի ջիլեր, որոնք կառավարում են ոտքի գործառույթները:

▪ **Բուժական թերապիաներ**

Health Net-ն ապահովագրում է տարբեր բուժական թերապիաներ, ներառյալ՝

- Քիմիաթերապիա
- Ճառագայթային թերապիա



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Հեռակա մատուցվող առողջության ծառայություններ

Հեռակա մատուցվող առողջությունը ծառայությունների ստացման եղանակ է, երբ դուք ձեր մատակարարի հետ ֆիզիկապես նույն վայրում չեք: Հեռակա մատուցվող առողջությունը կարող է ներառել կենդանի տեսազրույց ձեր մատակարարի հետ: Կամ հեռակա մատուցվող առողջությունը կարող է ներառել տեղեկությունների փոխանակում ձեր մատակարարի հետ՝ առանց կենդանի տեսազրույցի: Դուք կարող եք շատ ծառայություններ ստանալ հեռակա մատուցվող առողջության միջոցով: Կարևոր է, որպեսզի դուք և ձեր մատակարարը համաձայնվեք, որ տվյալ ծառայության համար հեռակա մատուցվող առողջությունը ճիշտ է ձեզ համար: Դուք կարող եք կապվել ձեր մատակարարի հետ՝ պարզելու, թե որ ծառայություններն են մատչելի հեռակա մատուցվող առողջության միջոցով:

## Հոգեկան առողջության ծառայություններ

- **Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ**
  - Health Net-ն ապահովագրում է անդամի նախնական հոգեկան առողջության գնահատումն՝ առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Դուք կարող եք ստանալ հոգեկան առողջության գնահատում ցանկացած ժամանակ հավաստագրված հոգեկան առողջության մատակարարից Health Net-ի ցանցում՝ առանց ուղեգրի:
  - Ձեր PCP-ն կամ հոգեկան առողջության մատակարարը կտրամադրի ուղեգիր հոգեկան առողջության հավելյալ ստուգման համար Health Net-ի ցանցի մասնագետի մոտ՝ որոշելու ախտահարման մակարդակը: Եթե ձեր հոգեկան առողջության ստուգման արդյունքները սահմանեն, որ դուք միջին կամ բավարար հյուսվածություն կամ հոգեկան, զգացմունքային կամ վարքագծային գործառնության ախտահարում ունեք, Health Net-ը կարող է տրամադրել հոգեկան առողջության ծառայություններ ձեզ համար: Health Net-ն ապահովագրում է հետևյալ հոգեկան առողջության ծառայությունները՝
    - Անհատական և խմբային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեթերապիա)
    - Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես նպատակահարմար է հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
    - Ճանաչողական կարողությունների զարգացում՝ բարելավելու ուշադրությունը, հիշողությունը կամ խնդիրների լուծումը



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



- Ամբուլատոր ծառայություններ դեղորայքային թերապիային հետևելու նպատակով
  - Ամբուլատոր լաբորատոր անալիզներ, դեղորայք, պաշարներ և հավելումներ
  - Հոգեբուժական խորհրդատվություն
- Health Net-ի կողմից մատուցվող հոգեկան առողջության ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների օգնության համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:
- Եթե ձեր հոգեկան առողջության ստուգման արդյունքները որոշում են, որ դուք կարող եք ունենալ խանգարման ավելի բարձր մակարդակ և ունեք հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների (SMHS) կարիք, ապա ձեր PCP-ն կամ ձեր հոգեկան առողջության մատակարարը կուղարկի ձեզ վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրին գնահատման համար: Մանրամասների համար կարդացեք «Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ» բաժինը 80-րդ էջում:

## Շտապ օգնության ծառայություններ

- ***Ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակը բուժելու համար***

Health Net-ն ապահովագրում է բոլոր ծառայությունները, որոնք անհրաժեշտ են բժշկական արտակարգ իրավիճակը բուժելու համար, որը տեղի է ունենում ԱՄՆ-ում կամ պահանջում է, որ դուք հիվանդանոցում լինեք Կանադայում կամ Մեքսիկայում: Բժշկական արտակարգ իրավիճակը բժշկական վիճակ է սաստիկ ցավով կամ լուրջ վնասվածքով: Վիճակն այնքան լուրջ է, որ եթե այն չստանա անհապաղ բժշկական ուշադրություն, ապա ողջամիտ որևէ մարդ կարող է ակնկալել, որ տեղի կունենա հետևյալը՝

- Ձեր առողջությունը կլինի լուրջ վտանգի տակ, ***կամ***
- Լուրջ վնաս մարմնի գործառույթներին, ***կամ***
- Մարմնի օրգանի կամ որևէ մասի լուրջ դիսֆունկցիա, ***կամ***
- Հղի կնոջ դեպքում՝ ակտիվ երկունք, այսինքն երկունք, երբ տեղի է ունենում հետևյալը.
  - Չկա բավարար ժամանակ ձեզ ապահով կերպով մեկ այլ հիվանդանոց տեղափոխելու համար, նախքան ծննդաբերության սկիզբը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Տեղափոխումը կարող է վտանգի տակ դնել ձեր ու դեռ չծնված երեխայի առողջությունն ու անվտանգությունը:

Դեղագործը կամ հիվանդանոցի շտապ օգնության սենյակը կարող է տրամադրել դեղատոմսային դեղի 72 ժամվա արտակարգ իրավիճակի պաշար, եթե նրանք կարծում են, որ դա ձեզ անհրաժեշտ է: Health Net-ը կվճարի արտակարգ իրավիճակի պաշարի համար:

#### ▪ **Շտապ օգնության փոխադրման ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է շտապ օգնության մեքենայի ծառայություններն՝ օգնելու ձեզ հասնել մոտակա խնամքի մատուցման վայր արտակարգ իրավիճակների դեպքում: Սա նշանակում է, որ ձեր վիճակն այնքան լուրջ է, որ խնամքի մատուցման վայր հասնելու մյուս միջոցները կարող են վտանգել ձեր առողջությունը կամ կյանքը: Միացյալ Նահանգներից դուրս ոչ մի ծառայություն չի ապահովագրվում, բացառությամբ շտապ օգնության ծառայությունների, որոնք պահանջում են, որ դուք հիվանդանոցում գտնվեք Կանադայում կամ Մեքսիկայում:

### Անբուժելի հիվանդների և պալիատիվ խնամք

Health Net-ն ապահովագրում է երեխաների և չափահասների համար անբուժելի հիվանդների խնամք և պալիատիվ խնամք, որն օգնում է նվազեցնել ֆիզիկական, հուզական, սոցիալական և հոգևոր անհարմարությունները: Չափահասները, հնարավոր է, միաժամանակ չստանան և անբուժելի հիվանդների խնամք, և պալիատիվ խնամք:

#### ▪ **Անբուժելի հիվանդների խնամք**

Անբուժելի հիվանդների խնամքը ծառայություն է մահացու հիվանդությամբ անդամների համար: Անբուժելի հիվանդների խնամքը պահանջում է, որ անդամն ունենա 6 կամ ավելի քիչ ամիս կյանքի ակնկալվող տևողություն: Սա միջամտություն է, որը կենտրոնանում է հիմնականում ցավի և ախտանիշների կառավարման վրա, այլ ոչ թե բուժման վրա, որպեսզի երկարացնի կյանքը:

Անբուժելի հիվանդների խնամքը ներառում է՝

- Բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային կամ խոսքի ծառայություններ
- Բժշկական սոցիալական ծառայություններ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Տանն առողջապահական սպասարկում տրամադրող օգնականներ և տան մաքրման ծառայություններ
- Բժշկական պաշարներ և սարքեր
- Դեղեր և կենսաբանական ծառայություններ
- Խորհրդատվական ծառայություններ
- Շարունակական բուժքույրական ծառայություններ 24 ժամ՝ ճգնաժամի ժամանակ և ըստ անհրաժեշտության՝ մահացու հիվանդությամբ անդամին տանը սպասարկելու համար
- Ստացիոնար ժամանակավոր խնամք (հիմնական խնամակալին փոխարինելու նպատակով) մինչև հինգ հաջորդական օր հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունում
- Կարճաժամկետ ստացիոնար խնամք ցավի կամ ախտանիշների կառավարման համար հիվանդանոցում, հմուտ բուժքույրական հաստատությունում կամ անբուժելի հիվանդների խնամքի հաստատությունում

▪ **Պալիատիվ խնամքի (CareConnections) ծրագիր**

Պալիատիվ խնամքը հիվանդակենտրոն և ընտանիքակենտրոն խնամք է, որը բարելավում է կյանքի որակը՝ ակնկալելով, կանխարգելելով և բուժելով հիվանդի տանջանքները: Պալիատիվ խնամքը չի պահանջում, որ անդամն ունենա 6 կամ ավելի քիչ ամիս կյանքի ակնկալվող տևողություն: Պալիատիվ խնամքը կարող է տրամադրվել բուժիչ խնամքի հետ միաժամանակ:

Պալիատիվ խնամքի ծրագիրը (CareConnections) մասնագիտացված տնային հիմունքով ծրագիր է սուր զարգացող հիվանդություն ունեցող անդամների համար: Մեր թիմն աշխատում է անդամի բժիշկների հետ՝ բարելավելու կյանքի որակը՝ կանխարգելման, բուժման և աջակցության, ախտանիշների մեղմացման և կյանքի որակի բարելավման միջոցով հիվանդի և իր ընտանիքի համար:

Պալիատիվ խնամքը ներառում է հետևյալ ծառայությունները՝

- Առաջադեմ խնամքի պլանավորում
- Պալիատիվ խնամքի գնահատում և խորհրդատվություն
- Անհատականացված խնամքի ծրագիր
- Պալիատիվ խնամքի թիմ
- Խնամքի համակարգում
- Ցավի և ախտանիշների կառավարում
- Հոգեկան առողջության և բժշկական սոցիալական ծառայություններ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Քահանայի ծառայություններ
- 24/7 Պալիատիվ խնամքի աջակցություն հեռախոսով
- Պալիատիվ խնամքի լրացուցիչ ծառայություններ, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ կամ ողջամիտ են իրավասու անդամների համար (օրինակ՝ արտահայտիչ թերապիա մանկական բնակչության համար)

Ցանկացած տարիքի անդամներ կարող են պալիատիվ խնամքի ծառայություններ ստանալ, եթե համապատասխանում են պահանջվող պայմաններին: Զանգահարեք Health Net ծրագրի իրավասության մանրամասներին տեղեկանալու համար:

## Հոսպիտալացում

### ▪ Անեսթեզիոլոգի ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ անեսթեզիոլոգի ծառայությունները հիվանդանոցում մնալու ընթացքում: Անեսթեզիոլոգը մատակարար է, որը մասնագիտացված է հիվանդներին անեսթեզիա տալու համար: Անեսթեզիան դեղորայքի տեսակ է, որն օգտագործվում է որոշակի բժշկական ընթացակարգերում:

### ▪ Հիվանդանոցային ստացիոնար ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ ստացիոնար հիվանդանոցային խնամքը, երբ դուք ընդունվում եք հիվանդանոց:

### ▪ Վիրաբուժական ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ վիրահատությունները, որոնք կատարվում են հիվանդանոցում:

## Մայրություն և նորածինների խնամք

Health Net-ն ապահովագրում է մայրության և նորածինների խնամքի հետևյալ ծառայությունները՝

- Կրծքով կերակրման ուսուցում և միջոցներ
- Ծննդաբերություն և հետծննդաբերական խնամք
- Կրծքի պոմպեր և պաշարներ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Նախաձեռնողյան խնամք
- Ծննդաբերական կենտրոնի ծառայություններ
- Վկայագրված մանկաբարձ-բուժքույր (CNM)
- Լիցենզավորված մանկաբարձ (LM)
- Պտղի գենետիկական խանգարումների ախտորոշում և խորհրդատվություն
- Հղի կամ հետծննդաբերական կանանց խորհրդատվության մինչև 20 նստաշրջան՝ նախաձեռնողյան ընկճախտը կանխելու համար

Խելացի սկիզբ ձեր մանկան համար (Start Smart)՝ հատուկ ծրագիր է հղի կանանց համար: Health Net-ը ցանկանում է օգնել, որպեսզի հոգ տանեք ձեզ և ձեր երեխայի համար հղիության ողջ ընթացքում: Տեղեկությունները տրամադրվում են փոստով կամ հեռախոսով: Մեր գործի կառավարման անձնակազմը կարող է պատասխանել ձեր հարցերին և օգնել, եթե աջակցության կարիք ունեք հղիության ընթացքում:

Մենք բազմաթիվ միջոցներ ունենք օգնելու ձեզ առողջ հղիություն ունենալ: Բայց սկզբից մենք պետք է իմանանք, որ դուք հղի եք: Խնդրում ենք զանգահարել Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD) հեռախոսահամարով հղիության մասին իմանալուն պես: Մենք կօգնենք ձեզ կազմակերպել ձեզ և ձեր երեխային անհրաժեշտ հատուկ խնամքը:

## Դեղատոմսային դեղեր

### *Ապահովագրված դեղեր*

Ձեր մատակարարը կարող է ձեզ նշանակել դեղեր, որոնք Health Net-ի նախընտրելի դեղերի ցանկում (PDL) են: Սա ենթական է բացառությունների և սահմանափակումների: Health Net-ի PDL-ը երբեմն կոչվում է դեղացանկ: PDL-ում ընդգրկված դեղերն ապահով են և արդյունավետ իրենց նշանակված օգտագործման համար: Բժիշկների և դեղագործների մի խումբ թարմացնում է այս ցուցակը:

- Այս ցուցակի թարմացումն ապահովում է դեղերի ապահովությունն ու արդյունավետությունը:
- Եթե ձեր բժիշկը կարծում է, որ ձեզ դեղ է հարկավոր, որն այս ցուցակում չէ, նա կարող է դիմել Health Net և նախնական հաստատում խնդրել, նախքան կարող եք ստանալ դեղը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Նկատի առեք, որ PDL-ում ընդգրկված լինելը չի նշանակում, որ ձեր բժիշկը դուրս կգրի այդ որոշակի դեղը հատուկ բժշկական վիճակի համար: Պարզելու համար՝ արդյոք դեղորայքը Health Net-ի PDL-ում է կամ PDL-ի պատճենը ստանալու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD՝ 711): Կարող եք նաև գտնել PDL-ը [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Երբեմն Health Net-ը պետք է հաստատի որոշ դեղեր, նախքան դրանք կարող են դուրս գրվել մատակարարի կողմից: Health Net-ը կուսումնասիրի այս խնդրանքները և որոշում կկայացնի 24 ժամվա ընթացքում:

- Դեղագործը կամ հիվանդանոցի շտապ օգնության սենյակը կարող է տրամադրել 72 ժամվա արտակարգ իրավիճակի պաշար, եթե կարծում են, որ դա ձեզ անհրաժեշտ է: Health Net-ը կվճարի արտակարգ իրավիճակի պաշարի համար:
- Եթե Health Net-ը մերժի այս խնդրանքը, Health Net-ը ձեզ նամակ կուղարկի՝ բացատրելով՝ ինչու, և ինչ այլ դեղեր կամ բուժումներ կարող եք փորձել:

### Դեղատներ

Եթե դուք լցնում կամ վերալցնում եք ձեր դեղատոմսը, դուք պետք է ստանաք ձեր դեղատոմսային դեղերն այն դեղատնից, որը համագործակցում է Health Net-ի հետ: Կարող եք գտնել Health Net-ի հետ աշխատող դեղատների ցուցակը Health Net-ի Դեղատների հասցեագրքում՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում: Կամ կարող եք նաև գտնել ձեր մոտակայքում դեղատուն՝ զանգահարելով 1-800-675-6110 (TTY/TDD՝ 711) հեռախոսահամարով:

Երբ ընտրեք դեղատունը, տարեք ձեր դեղատոմսն այդ դեղատուն: Ձեր մատակարարը ձեր փոխարեն կարող է նաև ուղարկել այն դեղատուն: Տվեք դեղատանը ձեր դեղատոմսը և ձեր Health Net ID քարտը: Համոզվեք, որ դեղատունը գիտի բոլոր դեղերի մասին, որոնք ընդունում եք, և բոլոր ալերգիաների մասին, որոնք ունեք: Եթե որևէ հարց ունեք դեղատոմսի մասին, անպայման հարցրեք դեղագործին:

### Միայն Los Angeles վարչաշրջանի անդամների համար.

Եթե ապրում եք Los Angeles վարչաշրջանում, կարող եք այնպիսի PCP ընտրել, որը պայմանագիր ունի մեր ծրագրի կամ մեր ենթապայմանագրային ծրագրի՝ Molina Healthcare of California-ի (Molina) հետ: Եթե Molina-ի հետ աշխատող PCP ընտրեք, ապա ձեր դեղերը կստանաք Molina-ի հետ պայմանագիր ունեցող դեղատներից և կօգտվեք Molina-ի Նախընտրելի դեղերի ցուցակից: Molina-ի Նախընտրելի դեղերի ցուցակի պատճենը ստանալու համար զանգահարեք Անդամների ծառայություններ 1-800-675-6110 (TTY/TDD՝ 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Ժամանակավոր հետծննդյան խնամքի երկարացման ծրագիր

Ժամանակավոր հետծննդյան խնամքի երկարացման (PPCE) ծրագիրը երկարացված ապահովագրում է տրամադրում Medi-Cal անդամներին, ովքեր ունեն մայրական հոգեկան առողջության վիճակ հղիության ընթացքում կամ հղիությունից հետո ընկած ժամանակահատվածում:

Health Net-ն ապահովագրում է մայրական հոգեկան առողջության խնամքը կանանց համար հղիության ընթացքում և մինչև երկու ամիս հղիությունից հետո: PPCE ծրագիրը երկարացնում է այդ ապահովագրումը ևս 12 ամսով՝ ախտորոշումից հետո կամ հղիության ավարտից հետո, ինչը որ ավելի ուշ է տեղի ունենում:

PPCE ծրագրի համար որակավորվելու նպատակով ձեր բժիշկը պետք է հաստատի մայրական հոգեկան առողջության վիճակի ձեր ախտորոշումը հղիության ավարտից հետո 150 օրվա ընթացքում: Հարցրեք ձեր բժշկին այս ծառայությունների մասին, եթե կարծում եք, որ դրանց կարիքն ունեք: Եթե ձեր բժիշկը համարում է, որ պետք է օգտվեք PPCE ծառայություններից, նա լրացնում և ներկայացնում է ձևաթղթերը ձեզ համար:

## Գործի կառավարում

Մենք հասկանում ենք, որ որոշ անդամներ ունեն հատուկ կարիքներ: Նման դեպքերում Health Net-ը մեր անդամներին առաջարկում է գործի կառավարման ծառայություններ՝ առողջական հատուկ կարիքներին օգնելու համար: Եթե դուք ունեք առողջական հատուկ կարիքներ, վարքագծային առողջության կարիքներ, հղի եք կամ ունեք հաշմանդամություն, մեր գործի կառավարիչները կարող են օգնել ձեզ: Մեր գործի կառավարիչները գրանցված բուժքույրեր են կամ սոցիալական աշխատողներ: Նրանք կարող են օգնել ձեզ հասկանալ հիմնական առողջական խնդիրները և կազմակերպել խնամքը ձեր բժիշկների հետ: Գործի կառավարիչը կաշխատի ձեր և ձեր բժշկի հետ՝ օգնելու ձեզ ստանալ անհրաժեշտ խնամքը: Նրանք կարող են նաև օգնել ձեզ հասկանալ ձեզ հասանելի նպաստները Health Net-ի ներքո և սովորեցնել ձեզ՝ ինչպես աշխատել ձեր բժիշկների հետ ձեր առողջական խնամքի նպատակներին հասնելու համար:

Այս ծառայությունը չնախատեսված կամ համապարփակ բժշկական վիճակներով մարդկանց համար է, ովքեր պետք է հաճախակի այցելեն մի քանի բժշկի: Նրանք կարող են ունենալ բժշկական պաշարների կամ օգնության կարիք տանը: Պայմանները կարող են ներառել՝

- Վնասվածքներ
- Քաղցկեղ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Շաքարախտ
- Թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություն (COPD)
- Վերջին փուլում գտնվող երիկամային հիվանդություն
- Սրտի կանգ
- Արյան մանգաղաձև բջիջների հիվանդություն
- Ցրված սկլերոզ
- Երիկամների կամ երիկամային հիվանդություն
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ
- Հեմոֆիլիա
- Հնարավոր փոխադաստում
- Ընկճախտ
- Անհանգստություն
- Բարձր վտանգի հղիություն

Մեր անդամներին առաջարկվող այլ գործի կառավարման ծրագրերը ներառում են՝

- Care Connections՝ տնային հիմունքով պալիատիվ ծրագիր մանկահասակ և չափահաս անդամների համար: Այս ծրագիրն օգնում է կառավարել ախտանիշների մեղմացումը և լրացուցիչ աջակցություն է տրամադրում զարգացող հիվանդություն ունեցող անդամներին:
- Անցումային խնամք կառավարում՝ ծրագիր այն անդամների համար, որոնք անցնում են սուր ստացիոնար խնամքից տնային խնամքի: Այն տրամադրում է խնամքի համակարգման աջակցություն դուրսգրումից հետո կարիքների հարցում:
- Start Smart for Your Baby®՝ ծրագիր հղի կանանց և նոր մայրիկների համար: Այս ծրագիրը մշակված է աջակցելու և խնամելու առողջ հղիությունը և մանկանը:

## Վերականգնողական և վերականգնման (թերապիա) ծառայություններ ու սարքեր

Այս նպաստը ներառում է ծառայություններ և սարքեր օգնելու վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական վիճակներ ունեցող մարդկանց վերականգնել իրենց հոգեկան և ֆիզիկական հմտությունները:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



Ծրագիրն ապահովագրում է՝

- **Ասեղնաբուժություն**

Health Net-ն ապահովագրում է ասեղնաբուժության ծառայություններ տնական, քրոնիկական ցավի կանխման, փոփոխման կամ թեթևացման համար, որի պատճառն է լայնորեն ճանաչված բժշկական վիճակը: Ամբուլատոր ասեղնաբուժական ծառայությունները (ասեղների էլեկտրական խթանմամբ կամ առանց դրա) սահմանափակված են երկու ծառայությամբ ամսական՝ աուդիոլոգիայի, քիրոպրակտիկայի, աշխատանքային բուժման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ մեկտեղ, երբ տրամադրվում են բժշկի, ատամնաբույժի, ոտնաբույժի կամ ասեղնաբույժի կողմից: Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

- **Աուդիոլոգիա (լսողություն)**

Health Net-ն ապահովագրում է աուդիոլոգիայի ծառայությունները: Ամբուլատոր աուդիոլոգիան սահմանափակված է երկու ծառայությամբ ամսական՝ ասեղնաբուժության, քիրոպրակտիկայի, աշխատանքային բուժման և խոսքի թերապիայի ծառայությունների հետ մեկտեղ: Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

- **Վարքագծային առողջության բուժումներ**

Վարքագծային առողջության բուժումը (BHT) ներառում է ծառայություններ և բուժման ծրագրեր, օրինակ՝ կիրառական վարքագծի վերլուծություն և ապացույցների հիման վրա վարքագծային միջամտության ծրագրեր, որոնք զարգացնում կամ վերականգնում են, առավելագույնս հնարավորինս կիրառելի չափով, անձի գործունեությունը:

BHT ծառայություններն ուսուցանում են կարողություններ՝ վարքագծային դիտարկման և ամրապնդման կիրառմամբ կամ հուշմամբ ուսուցանելով թիրախային վարքագծի յուրաքանչյուր քայլը: BHT ծառայությունները հիմնված են վստահելի ապացույցների վրա և փորձնական չեն: BHT ծառայությունների օրինակներ են՝ վարքագծային միջամտությունները, ճանաչողական վարքագծային միջամտության փաթեթները, համապարփակ վարքագծային բուժումը և կիրառական վարքագծի վերլուծությունը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

BHT ծառայությունները պետք է լինեն բժշկական տեսակետից անհրաժեշտ, նշանակված արտոնագրված բժշկի կամ հոգեբանի կողմից, հաստատված ծրագրի կողմից և տրամադրված այնպես, որ բուժման հաստատված ծրագիրը պահպանվի:

▪ ***Քաղցկեղի կլինիկական փորձարկումներ***

Health Net-ն ապահովագրում է հիվանդի ընթացիկ խնամքի ծախսերն այն հիվանդների համար, որոնք մասնակցում են Փուլ I, Փուլ II, Փուլ III կամ Փուլ IV կլինիկական փորձարկումներին, եթե այն վերաբերվում է քաղցկեղի կանխարգելմանը, բացահայտմանը կամ բուժմանը, կամ այլ կյանքին սպառնացող պայմաններին, և եթե հետազոտությունն իրականացվում է ԱՄՆ սննդի և դեղորայքի վարչության (FDA), Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) կամ Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնների (CMS) կողմից: Հետազոտությունները պետք է հաստատվեն Առողջապահության ազգային ինստիտուտի, FDA-ի, Պաշտպանության բաժանմունքի կամ Վետերանների վարչության կողմից:

▪ ***Սրտի վերականգնողական ծառայություններ***

Health Net-ն ապահովագրում է ստացիոնար և ամբուլատոր սրտային վերականգնողական ծառայություններ:

▪ ***Տնական օգտագործման բժշկական սարքավորումներ (DME)***

Health Net-ն ապահովագրում է DME պաշարների, սարքավորումների և այլ ծառայությունների ձեռք բերումը կամ վարձակալումը, եթե առկա է բժշկի դեղատոմս: Դեղատոմսով նշանակված DME պարագաները կարող են ապահովագրվել, եթե բժշկական տեսանյունից անհրաժեշտ են՝ պահպանելու մարմնի գործառնությունները, որոնք էական են առօրյա կյանքի գործողությունների համար կամ կանխելու ֆիզիկական լուրջ հաշմանդամությունը: Health Net-ը չի ապահովագրում հարմար, հարմարավետ կամ շքեղ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ, ինչպես նաև այլ իրեր, որոնք սովորաբար չեն օգտագործվում առողջական խնամքի համար:

▪ ***Էնտերալ և հարէնտերալ սնուցում***

Սնունդ ստանալու այս եղանակներն օգտագործվում են, երբ բժշկական վիճակը թույլ չի տալիս ստանալ սնունդ նորմալ ճանապարհով: Էնտերալ և հարէնտերալ սնուցման ապրանքներն ապահովագրվում են, երբ կա բժշկական անհրաժեշտություն:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Լսողական օժանդակ սարքեր**

Health Net-ն ապահովագրում է լսողական օժանդակ սարքերը, եթե դուք ստուգվել եք լսողության կորստի համար և ունեք բժշկի դեղատոմսը: Health Net-ը կարող է նաև ապահովագրել լսողական օժանդակ սարքերի վարձակալություն, փոխարինող մասեր և մարտկոցներ ձեր առաջին լսողական սարքի համար:

- **Տանը մատուցվող առողջապահական ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է տանը մատուցվող առողջապահական ծառայություններ, եթե դրանք նշանակվել են բժշկի կողմից և համարվում են բժշկական տեսակետից անհրաժեշտ:

- **Բժշկական պաշարներ, սարքավորումներ և սարքեր**

Health Net-ն ապահովագրում է բժշկական պաշարները, որոնք նշանակված են բժշկի կողմից: Health Net-ն ապահովագրում է անգսպության պաշարները, որոնք պատվիրվում են ձեր բժշկի կողմից և տրամադրվում ծրագրի հետ պայմանագիր ունեցող մատակարարի կողմից:

- **Աշխատանքային թերապիա**

Health Net-ն ապահովագրում է աշխատանքային բուժման ծառայություններ, ներառյալ՝ աշխատանքային բուժման գնահատումը, բուժման պլանավորումը, բուժումը, հրահանգման և խորհրդատվական ծառայությունները: Աշխատանքային բուժման ծառայությունները սահմանափակված են երկու ծառայությամբ ամսական՝ ասեղնաբուժության, աուդիոլոգիայի, քիրոպրակտիկայի և խոսքի թերապիայի ծառայությունների հետ մեկտեղ: Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

▪ **Օրթոթեզներ/պրոթեզներ**

Health Net-ն ապահովագրում է օրթոպեդիկ և պրոթեզային սարքերն ու ծառայությունները, որոնք բժշկական տեսակետից անհրաժեշտ են և նշանակված ձեր բժշկի, ոտնաբույժի, ատամնաբույժի կամ ոչ-բժիշկ բժշկական մատակարարի կողմից: Սա ներառում է՝ իմպլանտավորված լսողական սարքերը, կրծքի պրոթեզները/կրծքի հեռացման կրծկալները, այրվածքների կոմպրեսիոն հագուստներ և պրոթեզներ՝ վերականգնելու գործառնությունը կամ փոխափնելու մարմնի մասը, կամ աջակցելու մարմնի թուլացած կամ ձևափոխված մասին:

▪ **Ստոմաներ և ուրոլոգիական պարագաներ**

Health Net-ն ապահովագրում է ստոմայի տոպրակները, միզային կաթետրները, հեղուկների հեռացման տոպրակները, հեղուկների սնուցման պարագաները և տոսնձանյութերը: Սա չի ներառում պարագաները, որոնք հարմարության, հարմարավետության կամ շքեղության սարքավորումներ ու գործիքներ են:

▪ **Ֆիզիկական թերապիա**

Health Net-ն ապահովագրում է ֆիզիկական թերապիայի ծառայություններ, ներառյալ՝ ֆիզիկական թերապիայի գնահատումը, բուժման պլանավորումը, բուժումը, հրահանգումը, խորհրդատվական ծառայությունները և թեմատիկ դեղորայքի կիրառումը:

▪ **Թոքային վերականգնման ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է թոքային վերականգնումը, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է և նշանակված ձեր բժշկի կողմից:

▪ **Ռեկոնստրուկտիվ ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է վիրահատությունն՝ ուղղելու կամ վերականգնելու մարմնի ոչ նորմալ կառուցվածքները, որպեսզի բարելավի կամ ստեղծի նորմալ տեսք այնքանով, որքանով դա հնարավոր է: Մարմնի ոչ նորմալ մասեր են նրանք, որոնց պատճառն են հանդիսանում բնածին թերությունները, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները, հիվանդությունը կամ կրծքի ռեկոնստրուկցիան կրծքագեղձի հեռացումից հետո: Կարող են կիրառվել որոշ սահմանափակումներ և բացառություններ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

▪ **Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ, ըստ բժշկական տեսակետից անհրաժեշտության, եթե դուք հաշմանդամ եք և ունեք խնամքի բարձր մակարդակի կարիք:

Այս ծառայությունները ներառում են սենյակ և բնակություն արտոնագրված հաստատությունում՝ հմուտ բուժքույրական խնամքով օրական 24 ժամ հիմունքով:

▪ **Խոսքի թերապիա**

Health Net-ն ապահովագրում է խոսքի թերապիա, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է: Խոսքի թերապիայի ծառայությունները սահմանափակված են երկու ծառայությամբ ամսական՝ ասեղնաբուժության, աուդիոլոգիայի, քիրոպրակտիկայի և աշխատանքային թերապիայի ծառայությունների հետ մեկտեղ: Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:

▪ **Տրանսգենդերային ծառայություններ**

Health Net-ն ապահովագրում է տրանսգենդերային ծառայությունները (գենդերի հաստատման ծառայություններ) որպես նպաստ, երբ բժշկական տեսակետից անհրաժեշտ են, կամ երբ ծառայությունները համապատասխանում են ռեկոնստրուկտիվ վիրահատության չափանիշներին:

Գենդերային ինքնության խանգարման (GID) բոլոր ապահովագրված բուժումները պահանջում են նախնական հաստատում (նախօրոք լիազորում): Բուժումը հետևում է Տրանսգենդերային առողջության համաշխարհային մասնագիտական ասոցացիայի (WPATH) փաստաթղթի վերջին տարբերակին՝ *Տրանսսեքսուալների, տրանսգենդերների և սեփական սեռից դժգոհ անձանց առողջության խնամքի ստանդարտներ*, ու Medi-Cal-ի չափանիշներին: Այս անդամները պետք է ունենան գենդերի դիսֆորիայի կամ GID-ի ախտորոշում, որը դրվել է համապատասխան մասնագետի կողմից, ով անցել է վերապատրաստում այս ոլորտում՝ համաձայն WPATH ուղեցույցների և Medi-Cal-ի ուղեցույցների:

Ապահովագրված նպաստները ներառում են՝

- Հոգեթերապիա,
- Շարունակական հորմոնալ թերապիա,



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Լաբորատոր անալիզներ հորմոնալ թերապիան վերահսկելու համար, և
- Սեռափոխության վիրահատություն, որն իր բնույթով կոսմետիկ չէ:

Գենդերի սեռափոխության վիրահատությունը (GRS) կապահովագրվի, եթե GID ախտորոշում ունեցող անձը՝

- առնվազն 18 տարեկան է,
- կարող է տրամադրել լիովին իրազեկված համաձայնություն,
- և վիրահատություն կատարելու WPATH չափանիշները բավարարված են:

Կրծքի իմպլանտի տեղադրման վիրահատություն (և համապատասխան բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները) տղամարդուց կին անդամների համար ապահովագրվում են միայն այն դեպքում, երբ հորմոնային թերապիան չի հանգեցրել կրծքի մեծացմանը:

**Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Health Net-ի Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:**

## Լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ

Health Net-ն ապահովագրում է ամբուլատոր և ստացիոնար լաբորատոր և ռենտգենային ծառայությունները, երբ դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են: Ապահովագրվում են տարատեսակ ռենտգենային գործընթացներ, ինչպիսիք են՝ CT սկանավորում, MRI և PET սկանավորում՝ ըստ բժշկական անհրաժեշտության: Այս ծառայություններն ապահովագրվում են, երբ դրանք պատվիրվում են ձեր բժշկի կողմից և տրամադրվում ծրագրի հետ պայմանագիր ունեցող մատակարարի կողմից կամ արտակարգ իրավիճակների դեպքերում:

## Կանխարգելիչ և բարեկեցության ծառայություններ ու քրոնիկական հիվանդության կառավարում

Ծրագիրն ապահովագրում է՝

- Պատվաստանյութեր, որոնք խորհուրդ են տրվում Պատվաստման գործառույթների խորհրդատվական հանձնաժողովի կողմից
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ
- Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի «Պայծառ ապագաներ»-ի խորհուրդներ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Մանկաբարձների և գինեկոլոգների ամերիկյան քոլեջի կողմից խորհուրդ տրվող կանխարգելիչ ծառայություններ կանանց համար
- Օգնություն ծխելը դադարեցնելու համար, որը նաև կոչվում է ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Միացյալ Նահանգների Կանխարգելիչ ծառայությունների աշխատանքային խումբ Ա-ի և Բ-ի կողմից խորհուրդ տրվող կանխարգելիչ ծառայություններ

Ընտանիքի պլանավորման ծառայությունները տրամադրվում են ծննդաբերելու ունակ տարիքի անդամներին՝ խթանելու նրանց սահմանել երեխաների քանակն ու տարիքային տարբերությունը: Այս ծառայություններն ընդգրկում են դաշնային Մանրիկ և դեղորայքի վարչության (FDA) կողմից հաստատված բոլոր հակաբեղմնավորիչ միջոցները: Health Net-ի PCP և մանկաբարձ/գինեկոլոգ մասնագետները հասանելի են ընտանիքի պլանավորման ծառայությունների համար:

Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար դուք կարող եք նաև ընտրել բժիշկ կամ կլինիկա, որը կապված չէ Health Net-ի հետ՝ առանց Health Net-ից նախնական հաստատման (նախօրոք լիազորման) ստացման: Արտացանցային մատակարարի ծառայությունները, որոնք կապված չեն ընտանիքի պլանավորման հետ, կարող են չապահովագրվել: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Հիվանդությունների կառավարում/առողջապահության մարզիչ

Health Net-ում մենք ջանքեր չենք խնայում օգնելու մեր անդամներին ստանալ բուժում և սոցիալական ծառայություններ, որոնք անհրաժեշտ են նրանց, երբ նրանք ունեն դրա կարիքը: Մենք իրականացնում ենք այս ամենը մեր խնամքի կառավարման անձնակազմի կրթության և անձնական օգնության միջոցով: Այս ծառայության նպատակն է՝ ավելացնել ձեր խնամքի որակը և օգնել ձեզ բարելավել ձեր առողջությունը: Հիվանդությունների կառավարման մեր ծրագրերը ներառում են՝

- Ասթմա
- Շաքարախտ
- Սրտի կանգ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Մեր բոլոր ծրագրերը նպատակ ունեն օգնել ձեզ հասկանալ և ակտիվ կերպով կառավարել ձեր առողջությունը: Մենք այստեղ ենք ձեզ օգնելու այնպիսի բաներում, ինչպես՝

- Ինչպես ընդունել դեղեր
- Ինչպիսի ստուգման թեստեր ստանալ
- Երբ զանգահարել բժշկին

Մենք ձեզ կտրամադրենք գործիքներ՝ օգնելու ձեզ սովորել և կառավարել ձեր իրավիճակը: Լրացուցիչ տեղեկությունների կամ ինքնուրույն ուղեգրման համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 հեռախոսահամարով (TTY/TDD համար դիմեք California-ի Փոխանցման ծառայություն՝ զանգահարելով 711 և տրամադրելով Անդամների ծառայությունների բաժնի հեռախոսահամարը՝ 1-800-675-6110): Կարող եք խնդրել խոսել հիվանդությունների կառավարման առողջապահության մարզիչի հետ:

### Շաքարախտի կանխարգելման ծրագիր

Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (DPP) ապացույցների հիման վրա կյանքի ոճի փոփոխման ծրագիր է: Սա ապրելակերպի փոփոխություն նախատեսող ծրագիր է, որը մշակված է կանխելու կամ հետաձգելու 2-րդ տիպի շաքարախտի զարգացումը նախաշաքարախտի ախտորոշում ունեցող մարդկանց մոտ: Ծրագիրը տևում է մեկ տարի: Այն կարող է տևել նաև երկրորդ տարին այն անդամների մոտ, ովքեր իրավասու են այս ծրագրին: Ծրագրի կողմից հաստատված կյանքի ոճին աջակցող մոտեցումները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝

- Հավասարակից մարզիչի տրամադրում
- Ինքնուրույն վերահսկման և խնդիրների լուծման սովորեցում
- Խրախուսման և կարծիքի տրամադրում
- Նպատակներին աջակցելու նպատակով տեղեկությունների տրամադրում
- Նպատակներին հասնելու համար քաշի պարբերաբար հետևում

DPP-ին միանալու համար անդամները պետք է համապատասխանեն ծրագրի իրավասության պահանջներին: Զանգահարեք Health Net ծրագրի իրավասության մանրամասներին տեղեկանալու համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսակապի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



## Թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Ալկոհոլի չարաշահման զննումներ և արգելված թմրանյութերի զննումներ
- Ծառայությունները չափահասների համար (18 և ավելի բարձր տարիքի), որոնք ունեն ալկոհոլի և այլ թմրանյութերի օգտագործման խանգարման վիճակներ, ձեզ են առաջարկվում անվճար: Ալկոհոլի սխալ օգտագործման համար ապահովագրված ծառայություններն են՝
  - Տարեկան մեկ լայնածավալ զննում ալկոհոլի վտանգավոր օգտագործման համար (զննման գործիք, որը ձեզանից մանրամասն տեղեկություններ է հայցում ձեր ալկոհոլի օգտագործման մասին)
  - Տարեկան երեք 15-րոպեանոց միջամտության սեանսներ ալկոհոլի վտանգավոր օգտագործման մասին խոսելու նպատակով

Ծրագիրը նաև ապահովագրում է ստացիոնար բուժում թմրանյութերի կամ ալկոհոլի սուր գերդոզավարման ժամանակ, երբ բժշկական տեսակետից անհրաժեշտ է:

## Մանկաբուժական ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման (EPSDT) ծառայություններ, որոնք խորհուրդ են տրվում մանկաբույժների «Պայծառ ապագաներ» ուղեցույցներով, որպեսզի օգնեն ձեզ կամ ձեր երեխային առողջ մնալ: Այս ծառայությունները Ձեզ համար անվճար են:
- Եթե դուք և ձեր երեխան 21 տարեկանից փոքր եք, Health Net-ը նաև ապահովագրում է երեխայի բարեկեցության այցերը: Երեխայի բարեկեցության այցերը կանխարգելիչ, ստուգիչ, ախտորոշիչ և բուժիչ ծառայությունների համապարփակ հավաքածու է:
- Health Net-ը կնշանակի ժամադրություններ և կտրամադրի փոխադրում՝ օգնելու երեխաներին ստանալ խնամք, որի կարիքը նրանք ունեն:
- Կանխարգելիչ խնամքը կարող է լինել առողջության կանոնավոր ստուգումներ և զննումներ՝ օգնելու ձեր բժիշկին բացահայտել խնդիրները շատ վաղ: Կանոնավոր ստուգումներն օգնում են ձեր կամ ձեր երեխայի բժշկին փնտրել ցանկացած խնդիրներ ձեր կամ ձեր երեխայի բժշկական, ատամնաբուժական, տեսողական, լսողական, հոգեկան առողջության և թմրանյութերի օգտագործման ցանկացած խանգարման համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Health Net-ն ապահովագրում է զննման ծառայություններ (այդ թվում՝ արյան մեջ կապարի մակարդակի ստուգում) ցանկացած ժամանակ, երբ դրանց կարիքը կա, անգամ երբ դա ձեր կամ ձեր երեխայի կանոնավոր ստուգման ժամանակ չէ: Բացի դրանից, ձեր կամ ձեր երեխայի համար կարող են կատարվել կանխարգելիչ պատվաստումներ: Health Net-ը պետք է ապահովի, որ բոլոր անդամակցված երեխաները պատվաստումներ ստանան առողջական խնամքի այցելությունների ժամանակ: Կանխարգելիչ խնամքի ծառայությունները և զննումները հասանելի են անվճար և առանց նախնական հաստատման (նախօրոք լիազորման): Այնուամենայնիվ, ընդհանուր զարգացման զննումները 6-20 տարեկան անդամների համար նախօրոք լիազորում են պահանջում:

- Երբ ստուգման կամ զննման ժամանակ հայտնաբերվում է ֆիզիկական կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիր, կարող է առաջարկվել խնամք, որը կարող է շտկել կամ օգնել լուծել խնդիրը: Եթե խնամքը բժշկական տեսակետից անհրաժեշտ է, և Health Net-ը պատասխանատու է խնամքի վճարման համար, ապա Health Net-ն ապահովագրում է խնամքն անվճար ձեզ համար: Այս ծառայությունները ներառում են՝
  - Բժիշկ, պրակտիկ բուժքույր և հիվանդանոցային խնամք
  - Ձեզ առողջ պահելու պատվաստումներ
  - Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ
  - Տանը մատուցվող առողջապահական ծառայություններ, ինչը կարող է լինել բժշկական սարքավորումներ, պարագաներ և սարքեր
  - Տեսողության և լսողության բուժում, ինչը կարող է լինել ակնոցներ և լսողական օժանդակ սարքեր
  - Վարքագծային առողջության բուժում աուտիզմի սպեկտրի խանգարումների և զարգացման այլ հաշմանդամությունների համար
  - Գործի կառավարում և առողջապահական կրթություն
  - Ռեկոնստրուկտիվ վիրահատություն նշանակում է վիրահատություն, որն անցկացվել է մարմնի ոչ նորմալ մասերի ուղղման կամ վերականգնման համար, որոնց պատճառն են հանդիսանում բնածին թերությունները, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները կամ հիվանդությունը՝ բարելավելու գործառնությունները կամ ստեղծելու նորմալ տեսք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Խնամքի համակարգում, որն օգնում է ձեզ կամ ձեր երեխային ճիշտ խնամք ստանալ, նույնիսկ եթե Health Net-ը պատասխանատու չէ այդ խնամքի վճարման համար: Այս ծառայությունները ներառում են՝
  - Բուժում և վերականգնողական ծառայություններ՝ հոգեկան առողջության ու թմրանյութերի օգտագործման խանգարումների համար
  - Ատամնաբուժական խնդիրների բուժում, որը կարող է լինել օրթոդոնտիա

## Տեսողության ծառայություններ

Ծրագիրն ապահովագրում է՝

- Աչքերի սովորական ստուգում յուրաքանչյուր 24 ամիսը մեկ անգամ, Health Net-ը կարող է նախապես հաստատել (նախօրոք լիազորել) հավելյալ ծառայություններ, եթե դրանք բժշկական տեսակետից անհրաժեշտ են:
- Ակնոցներ (շրջանակներ և ոսպնյակներ) յուրաքանչյուր 24 ամիսը մեկ անգամ, կոնտակտային ոսպնյակներ, երբ դրանք անհրաժեշտ են բժշկական վիճակների դեպքում, ինչպես օրինակ՝ աֆակիա, անիրիդիա և կերատոկոնուս:

## Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրում (NEMT)

Դուք իրավունք ունեք օգտվելու ոչ շտապ օգնության բժշկական փոխադրումից (NEMT) ձեր ժամադրություններին գնալու համար, երբ դա Medi-Cal-ի ապահովագրված ծառայություն է: Երբ չեք կարող ապահովագրված բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության, թմրանյութերի օգտագործման և դեղատան ժամադրության գնալ մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով, կարող եք ձեր բժշկից NEMT խնդրել: Ձեր բժիշկը կորոշի փոխադրման ճիշտ տեսակը, որպեսզի բավարարվի ձեր բժշկական վիճակը:

NEMT-ը շտապ օգնության մեքենա է, պատգարակի վեճ, անվասայլակի վեճ կամ օդային փոխադրամիջոց: NEMT-ն մեքենա, ավտոբուս կամ տաքսի չէ: Health Net-ը թույլ է տալիս ամենաէժան NEMT-ն ձեր բժշկական կարիքների համար, երբ ձեզ հարկավոր է հասնել ձեր ժամադրության վայրը: Օրինակ, սա նշանակում է, որ եթե դուք ֆիզիկապես կամ հոգեպես կարող եք տեղափոխվել անվասայլակի համար նախատեսված վեճով, ապա Health Net-ը չի վճարի շտապ օգնության մեքենայի համար: Դուք իրավասու եք օդային փոխադրամիջոցի համար միայն այն դեպքում, երբ ձեր բժշկական վիճակն անհնար է դարձնում փոխադրել ցամաքային որևէ փոխադրամիջոցով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

NEMT-ն պետք է օգտագործվի, երբ՝

- Այն անհրաժեշտ է ֆիզիկապես կամ հոգեպես, ինչպես սահմանված է բժշկի կամ այլ մատակարարի գրավոր լիազորմամբ, կամ դուք ֆիզիկապես կամ հոգեպես ի վիճակի չեք ժամադրության գնալ ավտոբուսով, տաքսիով, մեքենայով կամ վենով:
- Դուք վարորդի օգնության կարիքն ունեք գնալու և վերադառնալու ձեր բնակության վայր, փոխադրամիջոց կամ բուժման վայր՝ կախված ձեր ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամությունից:
- Այն նախապես հաստատված է Health Net-ի կողմից բժշկի գրավոր լիազորմամբ:

Ձեր բժիշկի կողմից նշանակված NEMT ծառայությունները խնդրելու համար, խնդում ենք զանգահարել Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով ձեր ժամադրությունից առնվազն 5 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ: Հրատապ ժամադրությունների դեպքում խնդրում ենք զանգահարել որքան հնարավոր է շուտ: Խնդրում ենք պատրաստ ունենալ ձեր անդամի ID քարտը, երբ զանգահարում եք մեզ:

### ***NEMT-ի սահմանափակումները***

NEMT-ի ստացման սահմանափակումներ չկան Medi-Cal-ի կողմից ապահովագրված և մատակարարի կողմից նշանակված բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության և թմրանյութերի օգտագործման խթանման ժամադրությունների գնալու կամ դրանցից վերադառնալու համար: Որոշ դեղատեսակների ծառայություններն ապահովագրվում են NEMT-ի ներքո, օրինակ՝ դեղորայքի հետևից դեղատուն ուղևորությունները: Լրացուցիչ տեղեկությունների կամ դեղատանն առնչվող NEMT ծառայություններ հայցելու համար խնդրում ենք զանգահարել Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Եթե այցելության տեսակն ապահովագրված է Medi-Cal-ի կողմից, բայց ոչ առողջապահական ծրագրի՝ Health Net-ի միջոցով, ապա ձեր առողջապահական ծրագիրը կտրամադրի կամ կօգնի ձեզ պլանավորել ձեր փոխադրումը:

### ***Ի՞նչը կիրառելի չէ***

Փոխադրում չի տրամադրվի, եթե ձեր ֆիզիկական և բժշկական վիճակը թույլ է տալիս ձեզ հասնել ձեր բժշկական ժամադրությանը մեքենայով, տաքսիով կամ որևէ այլ հեշտ հասանելի փոխադրամիջոցով: Փոխադրում չի տրամադրվի, եթե ծառայությունն ապահովագրված չէ Medi-Cal-ի կողմից: Ապահովագրված ծառայությունների ցուցակը կարող եք գտնել Անդամների տեղեկագրքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Արժեքն անդամի համար**

Անվճար է, երբ փոխադրումը հաստատվել է Health Net-ի կողմից:

**Ոչ բժշկական փոխադրում (NMT)**

Կարող եք օգտվել ոչ բժշկական փոխադրումից (NMT), երբ դուք.

- Ուղևորվում և վերադառնում եք ժամադրությունից Medi-Cal-ի ծառայության համար, որը լիազորվել է ձեր մատակարարի կողմից:
- Ստանում եք դեղատոմսով դեղեր կամ բժշկական պաշարներ:

Եթե չեք կարող ինքնուրույն քշել բժշկական ժամադրության Medi-Cal ապահովագրված ծառայությունների համար, Health Net-ը կարող է օգնել ձեզ փոխադրամիջոցի հարցում: Health Net-ը կկազմակերպի մեքենա, տաքսի, ավտոբուս կամ այլ հանրային/մասնավոր փոխադրամիջոց ձեր ժամադրությանը գնալու համար: Դուք կարող եք նաև խնդրել ընտանիքի անդամի կամ ընկերոջը ձեզ ժամադրության տանել, և Health Net-ը կփոխհատուցի նրանց մղոնների համար: Health Net-ը չի փոխհատուցում մղոնները, երբ անդամն ինքնուրույն է գնում իր ժամադրությանը:

Նախքան անցած ճանապարհի համար փոխհատուցման հաստատումը, դուք պետք է տեղեկացնեք Health Net-ին հեռախոսով, էլ. փոստով կամ անձամբ, որ դուք փորձել եք ստանալ մնացած բոլոր խելամիտ փոխադրամիջոցների հնարավորությունները, սակայն չեք ստացել դրանցից որևէ մեկը: Health Net-ը թույլ է տալիս ամենաեժան NMT-ն, որը բավարարում է ձեր բժշկական կարիքները:

Ծառայությունների համար NMT խնդրելու նպատակով խնդրում ենք զանգահարել Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով ձեր ժամադրությունից առնվազն 5 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ կամ զանգահարեք որքան հնարավոր է շուտ, եթե ունեք հրատապ ժամադրություն: Խնդրում ենք պատրաստ ունենալ ձեր անդամի ID քարտը, երբ զանգահարում եք մեզ:

Ակնարկ. Ամերիկյան հնդկացիները կարող են կապվել իրենց տեղական IHC-ի հետ NMT ծառայություններ խնդրելու համար:

**NMT-ի սահմանափակումները**

NMT-ի ստացման սահմանափակումներ չկան Health Net-ի կողմից լիազորված բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության և թմրանյութերի օգտագործման խթանման այցելությունների գնալու կամ դրանցից վերադառնալու համար: Եթե այցելության տեսակն ապահովագրված է Medi-Cal-ի կողմից, բայց ոչ առողջապահական ծրագրի միջոցով, ապա ձեր առողջապահական ծրագիրը կտրամադրի կամ կօգնի ձեզ պլանավորել ձեր փոխադրումը: Անդամները չեն կարող ինքնուրույն գնալ կամ ուղղակիորեն փոխհատուցվել:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Ի՞նչը կիրառելի չէ**

NMT կիրառելի չէ, եթե.

- Ապահովագրված ծառայություն ստանալու համար բժշկական տեսակետից անհրաժեշտ է շտապ օգնության մեքենա, պատգարակի վեճ կամ անվասայլակի վեճ կամ NEMT-ի այլ տարբերակ:
- Դուք ունեք օգնության կարիք վարորդից գնալու և վերադառնալու ձեր բնակության վայր, փոխադրամիջոց կամ բուժման վայր՝ կախված ձեր ֆիզիկական և բժշկական վիճակից:
- Դուք անվասայլակում եք և չեք կարող մեքենա նստել և դուրս գալ առանց վարորդի օգնության:
- Ծառայությունն ապահովագրված չէ Medi-Cal-ի կողմից:

**Արժեքն անդամի համար**

Անվճար է, երբ փոխադրումը հաստատվել է Health Net-ի կողմից:

**Երկարատև ծառայություններ և աջակցություն (LTSS)**

Health Net-ն ապահովագրում է այս LTSS նպաստներն անդամների համար, որոնք որակավորվում են հետևյալի համար՝

- Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP), ինչպես հաստատված է Health Net-ի կողմից
- Հմուտ բուժքույրական հաստատության ծառայություններ, ինչպես հաստատված է Health Net-ի կողմից
- Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS), ինչպես հաստատված է Health Net-ի կողմից

**ՄԻՍՅՆ LOS ANGELES ԵՎ SAN DIEGO ՎԱՐՉԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

- **Տարեցների համար բազմանպատակ ծառայությունների ծրագիր (MSSP).**  
Դուք կարող եք որակավորվել MSSP ծառայությունների համար, եթե դուք 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք և հաշմանդամություն ունեք, բնակվում եք MSSP-ի հաստատված սպասարկման տարածքի սահմաններում ու իրավասու եք բուժքույրական հաստատություն տեղափոխվելու համար, սակայն ցանկանում եք տանը մնալ: MSSP-ը թույլ է տալիս ձեզ ապահով



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

կերպով մնալ ձեր տանը՝ որպես բուժքույրական հաստատություն տեղափոխվելու այլընտրանք: MSSP-ի կողմից մատուցվող ծառայությունները կարող են ներառել՝

- Չափահասների ցերեկային խնամք/աջակցության կենտրոն
  - Բնակեցման աջակցություն/տան փոքր նորոգումներ
  - Կենցաղի ու անձնական խնամքի օգնություն
  - Պաշտպանիչ վերահսկում
  - Խնամքի կառավարում
  - Խնամակալի հանգստյան ընթացքում տրամադրվող խնամք (տանը և տանից դուրս)
  - Փոխադրում
  - Սննդի ծառայություններ՝ համայնքային/տան առաքմամբ
  - Սոցիալական խորհրդատվություն/թերապևտիկ խորհրդատվություն
  - Հաղորդակցման ծառայություններ/թարգմանություն/բանավոր թարգմանություն
  - Բնապահպանական հասանելիության հարմարվողականություն
  - Անձնական արտակարգ իրավիճակին արձագանքող խումբ (PERS)/հաղորդակցման սարք
  - Դրամի կառավարում
- **Հմուտ բուժքույրական հաստատություն կամ «SNF» խնամք (ենթասուր/միջանկյալ հաստատության խնամք).** մեր ծրագիրն ապահովագրում է Հմուտ բուժքույրական հաստատության (SNF) ծառայություններ: SNF ծառայությունները կարող են ձեզ մատչելի լինել, եթե դուք ֆիզիկական հաշմանդամություն ունեք և ձեզ բարձր մակարդակի խնամք է հարկավոր: SNF ծառայությունները պետք է նշանակվեն բժշկի կամ վկայագրված պրակտիկ բուժքրոջ կողմից, և տրամադրվեն վկայագրված Հմուտ բուժքույրական հաստատությունում (SNF): Ապահովագրված ծառայությունները ներառում են՝
- Հմուտ բուժքույրական խնամք օրը 24 ժամ:
  - Սենյակ և սնունդ (օրական կերակուրներ):
  - Գործի կառավարում:
  - Ռենտգեն և լաբորատոր գործողություններ:
  - Ֆիզիկական, խոսքի և աշխատանքային թերապիա:
  - Նշանակված դեղեր և դեղամիջոցների կառավարում:
  - Բժշկական պաշարներ, հարմարանքներ և սարքավորումներ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Խնամքի համակարգում ղեկավարվող երկարատև ծառայությունների և աջակցության (MLTSS) անդամների համար.** Մեր ծրագիրը տրամադրում է խնամքի համակարգում այն անդամներին, որոնք ստանում են Ղեկավարվող երկարատև ծառայություններ և աջակցություն (MLTSS) Los Angeles և San Diego վարչաշրջաններում: Երբ կիրառելի է կամ պահանջվում է անդամի կողմից, մեր ծրագիրը մշակում է Անհատական խնամքի ծրագրեր (ICP-ներ) բարձր ռիսկայնության անդամների համար և հաստատում է Միջմասնագիտական խնամքի թիմեր (ICT-ներ): ICP-ը և ICT-ը մշակվում են անդամի կարիքների շուրջ և ապահովում են անդամի բժշկական խնամքի և Երկարատև ծառայությունների ու աջակցության ինտեգրումն ու համակարգումը: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

#### **ԲՈՒՈՐ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ.**

- **Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS).** Դուք կարող եք որակավորվել CBAS-ի համար, եթե 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք և ունեք լրացուցիչ օգնության կարիք, քանի որ ունեք առողջական խնդիրներ, որոնք խանգարում են հոգ տանել ձեր մասին: Եթե որակավորվում եք, մենք կօգնենք ձեզ գտնել կենտրոն, որն ամենահարմարն է ձեր կարիքների համար: Եթե ձեր տարածքում CBAS կենտրոն չկա, մենք կօգնենք ձեզ գտնել տնային և համայնքահեն ծառայություններ:

Դուք կարող եք գտնել հետևյալ ծառայությունները CBAS կենտրոնում՝

- Անհատական գնահատում
- Պրոֆեսիոնալ բուժքույրական ծառայություններ
- Ֆիզիկական, աշխատանքային և խոսքի թերապիաներ
- Հոգեկան առողջության ծառայություններ
- Թերապևտիկ գործողություններ
- Սոցիալական ծառայություններ
- Անհատական խնամք
- Կերակուրներ
- Խորհրդատվություն սննդի վերաբերյալ
- CBAS կենտրոն փոխադրում՝ երկկողմանի ձեր տանից



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



## Խնամքի համակարգում

Health Net-ն առաջարկում է անվճար ծառայություններ՝ օգնելու ձեզ համակարգել ձեր առողջական խնամքի կարիքները:

Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք ձեր կամ ձեր երեխայի առողջության վերաբերյալ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Համակարգված խնամքի նախաձեռնության (CCI) նպաստներ

*Միայն Los Angeles և San Diego վարչաշրջանների համար*

- California-ի Համակարգված խնամքի նախաձեռնությունն (CCI) աշխատում է բարելավել խնամքի համակարգումը երկակի իրավասու անձանց համար (մարդիկ, որոնք իրավասու են և Medi-Cal-ի, և Medicare-ի համար): CCI-ն ունի երկու հիմնական մաս՝

### *Cal MediConnect*

Cal MediConnect ծրագրի նպատակն է բարելավել խնամքի համակարգումը և Medi-Cal-ի, և Medicare-ի համար երկակի իրավասու անձանց համար: Այն թույլ է տալիս նրանց անդամացել մեկ ծրագրի՝ իրենց բոլոր նպաստները կառավարելու համար առանձին Medi-Cal և Medicare ծրագրեր ունենալու փոխարեն: Այն նաև նպատակ ունի բարձր որակի խնամք ապահովել, որն օգնում է մարդկանց մնալ առողջ և իրենց տանը, որքան հնարավոր է երկար:

Եթե անդամագրված եք Health Net Cal MediConnect-ին, ծրագիրն ապահովագրում է՝

- Մատակարարների ցանց, որոնք աշխատում են միասին ձեզ համար
- Անհատական խնամքի համակարգող, ով կապահովի, որպեսզի դուք ստանաք ձեզ անհրաժեշտ խնամքը և աջակցությունը
- Ձեր առողջական կարիքների և խնամքի ծրագրի անհատականացված վերանայում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Ղեկավարվող երկարատև ծառայություններ և աջակցություն (MLTSS)**

Medicare-ի և Medi-Cal-ի երկակի իրավասու նպաստառուները պետք է միանան Medi-Cal ղեկավարվող խնամքի ծրագրին, որպեսզի ստանան իրենց Medi-Cal նպաստները, ներառյալ LTSS-ը և Medicare փաթեթով նպաստները:

**Առողջական տների ծրագիր**

Health Net-ն ապահովագրում է Առողջական տների ծրագրի (HHP) ծառայությունները որոշակի քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող անդամների համար: Այս ծառայությունները նախատեսված են աջակցելու ֆիզիկական առողջական ծառայությունների, վարքագծային առողջական ծառայությունների և համայնքահեն երկարատև ծառայությունների և աջակցության (LTSS) համակարգումը քրոնիկական վիճակներով անդամների համար:

Ձեզ հետ կկապվեն, եթե դուք որակավորվում եք այս ծրագրի համար: Կարող եք նաև զանգահարել Health Net կամ խորհրդակցել ձեր բժշկի կամ բժշկական անձնակազմի հետ՝ տեղեկանալու, թե ինչպես կարող եք ստանալ HHP ծառայությունները:

Դուք կարող եք որակավորվել HHP-ի համար, եթե՝

- Ունեք որոշակի քրոնիկական առողջական վիճակներ: Կարող եք զանգահարել Health Net՝ տեղեկանալու որակավորման պահանջներին, և եթե դուք համապատասխանում եք հետևյալից որևէ մեկին.
  - Դուք ունեք HHP-ի որակավորման երեք կամ ավելի քրոնիկական վիճակ
  - Եղել եք հիվանդանոցում վերջին տարվա ընթացքում
  - Դիմել եք շտապ օգնության բաժնին երեք կամ ավելի անգամ վերջին տարում, կամ
  - Չունեք բնակվելու վայր:

Դուք չեք որակավորվում HHP ծառայությունների համար, եթե՝

- Ստանում եք անբուժելի հիվանդների խնամքի հաստատության ծառայություններ, կամ
- Բնակվել եք հմուտ բուժքույրական հաստատություն ընդունվելուց և դրան հաջորդող ամսվա ընթացքում երեքից ավելի ամիս:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Ապահովագրված HHP ծառայություններ**

HHP-ն ձեզ կտրամադրի խնամքի համակարգող և խնամքի թիմ, որոնք կաշխատեն ձեզ և ձեր առողջական խնամքի մատակարարների հետ, ինչպես օրինակ՝ ձեր բժիշկները, մասնագետները, դեղագործները, գործի կառավարիչները և այլք, որպեսզի համակարգեն ձեր խնամքը: Health Net-ը տրամադրում է HHP ծառայություններ, որոնք ներառում են՝

- Համապարփակ խնամքի կառավարում
- Խնամքի համակարգում
- Առողջության խթանում
- Համապարփակ անցումային խնամք
- Անհատական և ընտանեկան աջակցման ծառայություններ
- Ուղեգիր համայնքային և սոցիալական աջակցման համար

**Արժեքն անդամի համար**

HHP ծառայություններն անդամների համար անվճար են:

**Այլ Medi-Cal ծրագրեր և ծառայություններ****Այլ ծառայություններ, որոնք կարող եք ստանալ Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal-ի կամ այլ Medi-Cal ծրագրերի միջոցով**

Երբեմն Health Net-ը չի ապահովագրում ծառայություններ, սակայն դուք դեռ կարող եք ստանալ դրանք FFS Medi-Cal կամ այլ Medi-Cal ծրագրերի միջոցով: Այս բաժինը թվարկում է այդ ծառայությունները: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ

Որոշ հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ տրամադրվում են վարչաշրջանի հոգեկան առողջության ծրագրերի, այլ ոչ Health Net-ի միջոցով: Սրանք ներառում են հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (SMHS) Medi-Cal-ի անդամների համար, որոնք համապատասխանում են բժշկական անհրաժեշտության կանոններին: SMHS-ը կարող է ներառել այս ամբուլատոր, բնակելի և ստացիոնար ծառայությունները.

- Ամբուլատոր ծառայություններ՝
  - Հոգեկան առողջության ծառայություններ (գնահատումներ, ծրագրի մշակում, թերապիա, վերականգնում և օժանդակում)
  - Դեղորայքի աջակցության ծառայություններ
  - Ցերեկային ինտենսիվ բուժման ծառայություններ
  - Ցերեկային վերականգնողական ծառայություններ
  - Ճգնաժամային միջամտության ծառայություններ
  - Ճգնաժամային կայունացման ծառայություններ
  - Թիրախային գործի կառավարման ծառայություններ
  - Թերապևտիկ վարքագծային ծառայություններ (ապահովագրված է 21 տարեկանից փոքր անդամների համար)
  - Ինտենսիվ խնամքի համակարգում (ICC) (ապահովագրված է 21 տարեկանից փոքր անդամների համար)
  - Ինտենսիվ տնային հիմունքով ծառայություններ (IHBS) (ապահովագրված է 21 տարեկանից փոքր անդամների համար)
  - Թերապևտիկ խնամակալական խնամք (TFC) (ապահովագրված է 21 տարեկանից փոքր անդամների համար)
- Բնակելի ծառայություններ՝
  - Չափահասների բնակելի բուժման ծառայություններ
  - Ճգնաժամային բնակելի բուժման ծառայություններ
- Ստացիոնար ծառայություններ՝
  - Սուր հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
  - Հոգեբուժական ստացիոնար հիվանդանոցային մասնագիտացված ծառայություններ
  - Հոգեբուժական առողջության հաստատության ծառայություններ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Վարչաշրջանի հոգեկան առողջապահության ծրագրի կողմից տրամադրվող հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել վարչաշրջանի հոգեկան առողջապահության ծրագիր: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներին առցանց ծանոթանալու համար անցեք [www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPCContactList.aspx](http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPCContactList.aspx) հղումով:

### Թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ

Վարչաշրջանը տրամադրում է թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայություններ Medi-Cal-ի անդամների համար, որոնք համապատասխանում են բժշկական անհրաժեշտության կանոններին: Թմրանյութերի օգտագործման խանգարման ծառայությունների համար իրավասու անդամները բուժման ուղեգիր են ստանում իրենց վարչաշրջանի բաժանմունք: Բոլոր վարչաշրջանների անվճար հեռախոսահամարներին առցանց ծանոթանալու համար անցեք [www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD\\_County\\_Access\\_Lines.aspx](http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/SUD_County_Access_Lines.aspx) հղումով:

Բացառությամբ, «Health Net-ի կողմից ապահովագրված Medi-Cal-ի նպաստներ» ենթաբաժնում նշված կետերի՝ ալկոհոլի և թմրանյութերի բուժման բոլոր մյուս ծառայություններն ու հերոինի թունազերծման ամբուլատոր ծառայություններն ապահովագրված չեն Health Net-ի կողմից: Այս ծառայությունների կարիքն ունեցող անդամներին կուղարկեն Կամավոր ստացիոնար դետոքսի (VID) մատակարարի մոտ կամ իրենց վարչաշրջանի ալկոհոլի և թմրանյութերի բուժման ծրագիր բուժում ստանալու համար: Ըստ անհրաժեշտության, Health Net-ը կշարունակի համագործակցել ձեր PCP-ի հետ, որպեսզի ապահովագրի առաջնային խնամքը և այլ ծառայությունները, որոնք չեն առնչվում ալկոհոլի և թմրանյութերի բուժմանը:

### Ատամնաբուժական ծառայություններ

Եթե բնակվում եք Los Angeles կամ Sacramento վարչաշրջաններում, Health Net-ը նպաստառուներին առաջարկում է Medi-Cal ատամնաբուժական ծրագիրը: Զանգահարեք 1-800-213-6991 հեռախոսահամարով լրացուցիչ տեղեկությունների համար:

Այլ վարչաշրջանների անդամների համար Medi-Cal-ն ապահովագրում է որոշ ատամնաբուժական ծառայություններ, այդ թվում՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական հիգիենա (օրինակ՝ ստուգումներ, ռենտգեններ և ատամների մաքրում)
- Արտակարգ իրավիճակների ծառայություններ ցավի կառավարման համար
- Ատամների հեռացում
- Լցոնումներ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսակապի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Արմատային խողովակի բուժումներ (առջևի/հետևի)
- Պսակներ (նախապես պատրաստված/լաբորատոր)
- Խորը մաքրումներ
- Պերիոդոնտալ պահպանման աշխատանք
- Ամբողջական և մասնակի պրոթեզներ
- Օրթոդոնտիա երեխաների համար, որոնք որակավորվում են
- Ֆտորիդի տեղային կիրառում

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելի իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, խնդրում ենք զանգահարել Medi-Cal Dental ծրագիր 1-800-322-6384 (TTY/TDD 1-800-735-2922 կամ 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal Dental ծրագրի [www.denti-cal.ca.gov](http://www.denti-cal.ca.gov) կայքը:

### California-ի Երեխաների ծառայություններ (CCS)

CCS-ը Medi-Cal-ի ծրագիր է, որը բուժում է մինչև 21 տարեկան երեխաներին, որոնք ունեն առողջական որոշակի վիճակներ, հիվանդություններ կամ քրոնիկական առողջական խնդիրներ և որոնք համապատասխանում են CCS ծրագրի պայմաններին: Եթե Health Net-ը կամ ձեր PCP-ն կարծում են, որ ձեր երեխան ունի CCS-ին իրավասու վիճակ, ապա նրան կուղարկեն վարչաշրջանի CCS ծրագիր՝ իրավասության գնահատման համար:

CCS ծրագրի աշխատակիցները կորոշեն՝ արդյոք ձեր երեխան որակավորվում է CCS ծառայությունների համար: Եթե ձեր երեխան որակավորվում է նման խնամք ստանալու համար, CCS մատակարարները կբուժեն նրան CCS վիճակի համար: Health Net-ը կշարունակի ապահովագրել ծառայությունների տեսակները, որոնք չեն առնչվում CCS վիճակին, օրինակ՝ ֆիզիկական ստուգումներ, պատվաստումներ և երեխայի բարեկեցության ստուգումներ:

Health Net-ը չի ապահովագրում այն ծառայությունները, որոնք տրամադրվում են CCS ծրագրի կողմից: Որպեսզի CCS-ն ապահովագրի այդ ծառայությունները, CCS-ը պետք է հաստատի մատակարարին, ծառայությունները և սարքավորումները:

CCS-ը չի ապահովագրում բոլոր առողջական վիճակները: CCS-ը հիմնականում ապահովագրում է այն առողջական վիճակները, որոնք բերում են ֆիզիկական հաշմանդամության կամ որոնք պահանջում են բուժում դեղորայքով, վիրահատությամբ կամ վերականգնումով: CCS-ն ապահովագրում է հետևյալ առողջական վիճակ ունեցող երեխաներին՝

- Սրտի բնածին հիվանդություն
- Քաղցկեղներ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Ուռուցքներ
- Հեմոֆիլիա
- Արյան մանգաղաձև բջիջների անեմիա
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Երիկամների լուրջ քրոնիկական խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Ճեղքված շրթունք/քիմք
- Ողնաշարի ճողվածք
- Լսողության կորուստ
- Կատարակտ
- Ուղեղային կաթված
- Նոպաներ որոշակի հանգամանքների ներքո
- Ռևմատոիդ արթրիտ
- Մկանային դիստրոֆիա
- ՁԻԱՀ
- Գլխի, ուղեղի կամ ողնուղեղի սաստիկ վնասվածքներ
- Խիստ այրվածքներ
- Ատամների խիստ ծովածություն

Medi-Cal-ը վճարում է CCS ծառայությունների համար: Եթե ձեր երեխան իրավասու չէ CCS ծրագրի ծառայությունների համար, նա կշարունակի ստանալ բժշկական անհրաժեշտ խնամքը Health Net-ից:

- CCS-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել CCS-ի [www.dhcs.ca.gov/services/ccs](http://www.dhcs.ca.gov/services/ccs) կայքը:

Կամ գանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Ինստիտուցիոնալ երկարատև խնամք

Kern, Sacramento, San Joaquin, Stanislaus և Tulare վարչաշրջանների անդամների համար Health Net-ն ապահովագրում է երկարատև խնամքը մեկ ամսով, երբ ընդունվում եք հաստատություն և մեկ ամիս դրանից հետո: Health Net-ը չի ապահովագրում երկարատև խնամքը, եթե դուք ավելի երկար մնաք:

FFS Medi-Cal-ն ապահովագրում է ձեր մնալը, եթե այն ավելի երկար է տևում, քան ձեր կողմից հաստատություն ընդունվելուց մեկ ամիս հետո: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ գանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

### Վաղ սկիզբ/Վաղաժամ միջամտություն

- Վաղ սկիզբ ծրագիրը ծննդից մինչև 3 տարեկան նորածինների ու մանուկների համար է, որոնց անհրաժեշտ են վաղաժամ միջամտության ծառայություններ և ուլքեր խնդիրներ ունեն, որոնք կարող են հանգեցնել զարգացման ուշացման, կամ ուլքեր զարգացման ուշացման ախտանիշներ են ցուցադրում: Որոշ վտանգավոր վիճակներից են՝
  - Ասֆիքսիա (շնչափնտրություն)
  - Կենտրոնական նյարդային համակարգի վարակ
  - Վաղաժամություն
- Վաղ սկիզբ/Վաղաժամ միջամտություն ծրագրի կամ Տարածաշրջանային կենտրոն Վաղ սկզբի/Վաղաժամ միջամտության ուղեգիր ստանալու մասին տեղեկությունների համար խնդրում ենք գրուցել ձեր բժշկի կամ մեր ծրագրի հետ:

### Տեղային կրթական գործակալության (LEA) գնահատման ծառայություններ

- LEA-ն տրամադրում է որոշակի առողջական խնամքի գնահատման ծառայություններ դպրոցի ծրագրերի միջոցով: LEA-ն ձեր տեղային հանրային դպրոցն է: 3-ից 21 տարեկան անդամները կարող են ծառայություններ ստանալ առանց իրենց PCP-ի ուղեգրի: PCP-ն պետք է համակարգի անհրաժեշտ բժշկական ծառայությունները LEA-ի հետ: LEA-ի ծառայությունները կարող են ներառել՝
  - Ֆիզիկական և հոգեկան առողջության գնահատումներ
  - Կրթական և հոգևոր-սոցիալական գնահատումներ
  - Առողջության և սնուցման կրթություն
  - Զարգացման գնահատումներ
  - Ֆիզիկական և աշխատանքային թերապիա
  - Խոսքի թերապիա և լսողաբանություն (լսողության ստուգումներ)
  - Խորհրդատվություն
  - Բուժքույրական ծառայություններ
  - Դպրոցում առողջության օգնության ծառայություններ
  - Բժշկական փոխադրում



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



## Զարգացման արատներով անդամներ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

- Տարածաշրջանային կենտրոնները ստեղծվել են հոգալու այն մարդկանց կարիքները, ովքեր զարգացման հաշմանդամություն ունեն։ Հաշմանդամ դարձնող վիճակները ներառում են՝ մտավոր հետամնացություն, էպիլեպսիա, աուտիզմ, ուղեղային անդամալուծություն, Դաունի համախտանիշ, խոսքի և լեզվական զարգացման հետաձգումներ։ Տարածաշրջանային կենտրոններն օգնում են իրենց հաճախորդներին և նրանց ընտանիքներին գտնել բնակավայր, ցերեկային ծրագրեր չափահասների համար, փոխադրում, առողջական խնամք և սոցիալական գործունեություն։ Նրանց ծառայությունների մեծ մասն անվճար է իրավասու հաճախորդների համար։ Եթե դուք ընտանիքի անդամ ունեք, ում մոտ մինչև 18 տարեկանն ախտորոշվել է հաշմանդամության վիճակ, ապա ձեր PCP-ը ձեզ կուղորդի տեղային Տարածաշրջանային կենտրոն։

## Երեխաների մոտ առկա կապարի թունավորման զննում

- Health Net-ն ապահովագրում է արյան մեջ կապարի զննման անալիզը մինչև 18 տարեկան անդամների համար՝ որպես սովորական կանխարգելիչ խնամքի մի մաս։ Այն երեխաներին, ում արյան մեջ կապարի մակարդակը բարձր է, կուղարկեն Երեխաների կապարի թունավորման կանխման ծրագիր (CLPPP), California-ի Երեխաների ծառայություններ (CCS) և/կամ տեղային առողջապահական բաժանմունք հետագա գնահատման ու բուժման համար։

## Պալարախտի բուժման ուղիղ զննման թերապիա

- Մեր ծրագիրն ակտիվ պալարախտ ունեցող անդամներին, որոնք պալարախտի բուժման անհամապատասխանության վտանգի տակ են, կուղարկի տեղային առողջապահական բաժանմունք ուղիղ զննման թերապիայի համար։ Անհամապատասխանության վտանգի տակ եղած անդամները ներառում են, սակայն չեն սահմանափակվում անդամներով, որոնք ցուցաբերում են մի շարք դեղերի նկատմամբ դիմադրողականություն, անդամներով, որոնց բուժումն անհաջող է եղել կամ ովքեր կրկին են հիվանդացել նախորդ բուժումն ավարտելուց հետո, երեխաներով ու դեռահասներով և այն անձանցով, ովքեր իրենց դրսևորել են անհամապատասխան ձևով (օրինակ, նրանք, ովքեր չեն ներկայացել գրասենյակային ժամադրություններին)։ Health Net-ը կտրամադրի բժշկական տեսակետից անհրաժեշտ բոլոր ապահովագրված ծառայությունները պալարախտի բուժման ուղիղ զննման թերապիա անցնող անդամներին և կվերահսկի գործի միավորված կառավարումն ու խնամքի համակարգումը տեղային առողջապահական բաժանմունքի հետ։



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով։

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր։ Զանգն անվճար է։ Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով։ Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում։

## Կարևոր օրգանների փոխապատվաստումներ

- Health Net-ը կուղարկի մարմնի կարևոր օրգանների փոխապատվաստման համար ընտրված թեկնածու անդամներին Medi-Cal-ի հաստատված փոխապատվաստման կենտրոն և կապահովագրի գնահատումը, որը կկատարվի Medi-Cal-ի հաստատված փոխապատվաստման կենտրոնում: Կարևոր օրգանի փոխապատվաստման օրինակներից են՝ ոսկրածուծի փոխապատվաստումը, սրտի փոխապատվաստումը, լյարդի փոխապատվաստումը, թոքի փոխապատվաստումը, սրտի/թոքի փոխապատվաստումը, միասնաբար լյարդի ու երիկամի փոխապատվաստումը, և միասնաբար լյարդի ու բարակ աղիքի փոխապատվաստումը: Եթե դուք ընտրվել եք որպես թեկնածու, և Medi-Cal-ը հաստատել է ձեր փոխապատվաստումը, ձեզ դուրս կգրեն Health Net-ից, և դուք նորից կանդամագրվեք Վճար ծառայության դիմաց Medi-Cal-ին: Health Net-ը կշարունակի ապահովագրել բժշկական տեսակետից անհրաժեշտ բոլոր ծառայությունները մինչև ձեր անդամակցությունից դուրս գալը: 21 տարեկանից ցածր տարիքի անդամներն ուղարկվում են California-ի Երեխաների ծառայությունների (CCS) ծրագրի՝ փոխապատվաստման համար բոլոր գնահատումների ու թույլտվության համար:

Health Net-ն անդամակցությունից չի հեռացնում անդամներին, որոնց երիկամի կամ աչքի եղջերաթաղանթի փոխապատվաստում է հարկավոր: Մենք կտրամադրենք բոլոր ծառայություններն, այդ թվում՝ փոխապատվաստումը, այս բժշկական տեսակետից անհրաժեշտ փոխապատվաստման կարիքն ունեցող անդամներին:

## Health Net-ի կողմից չապահովագրված լրացուցիչ Medi-Cal-ի նպաստներ, որոնք հասանելի են Վճար ծառայության դիմաց Medi-Cal-ի միջոցով.

- Արյան մակարդման գործոններ, ինչպես օրինակ՝ արյան մակարդման հեմոֆիլիա գործոն:
- Երկարատև խնամք (բացի Los Angeles կամ San Diego վարչաշրջաններում բնակվող անդամների: Մանրամասների համար տեսեք «Երկարատև ծառայություններ և աջակցություն» (LTSS) բաժինը վերևում):
- Մանկաբուժական ցերեկային առողջապահական խնամք:
- Նահանգային լաբորատոր ծառայություններ՝ Շիճուկում ալֆա-պտղային սպիտակուցի որոշման նահանգային ծրագրի շրջանակներում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Թիրախային գործի կառավարում:
- Կամավոր ստացիոնար թունագերծման ծառայություններ ընդհանուր սուր խնամքի հիվանդանոցում:

## Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ Health Net-ի կամ Medi-Cal-ի միջոցով

Կան որոշ ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում ոչ Health Net-ի, ոչ էլ Medi-Cal-ի կողմից, ներառյալ՝ բայց չսահմանափակվելով՝

- Փորձնական կամ հետազոտական ծառայություններ և դեղեր
- Պտղաբերության պահպանում
- Արհեստական պտղաբերության (IVF)
- Մշտական տան մոդիֆիկացում
- Մեքենայի մոդիֆիկացում
- Կոսմետիկ վիրաբուժություն (արտաքին տեսքի բարելավման նպատակով, մարմնի նորմալ մասերի փոփոխման կամ ձևափոխման միջոցով իրականացվող վիրահատություն)
- California-ի Երեխաների ծառայություններ (CCS)
- Նահանգային և/կամ դաշնային օրենքով Medi-Cal-ից բացառված բոլոր ծառայությունները
- Սովորական թլպատում, եթե բժշկական անհրաժեշտությունը չկա
- Հոգեկան առողջության ծառայություններ կամ խորհրդատվություն զույգերի կամ ընտանիքների համար՝ հարաբերությունների հետ կապված խնդիրների համար:
- Խնամակալական խնամք
- Անպտղաբերություն
- Պատվաստումներ մարզական, աշխատանքային կամ ճանապարհորդական նպատակներով
- Անձնական հարմարավետության առարկաներ (ինչպես օրինակ՝ հեռախոս, հեռուստացույց ու հյուրասիրության սկուտեղ) հիվանդանոցում գտնվելիս
- Ալկոհոլի հետ կապված լուրջ խնդիրների բուժում: Եթե ձեզ ալկոհոլի հետ կապված լուրջ խնդիրների բուժում է հարկավոր, կարող եք ուղեգիր ստանալ վարչաշրջանի ալկոհոլի ու թմրադեղերի ծրագիր:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Տեսողության ծառայություններ՝
  - Պաշտպանիչ, կոսմետիկ կամ աշխատանքային նպատակներով օգտագործվող ակնոցներ
  - Ակնոցներ, որոնք նշանակվել են բեկման սխալների կամ տեսողության բինոկուլյար խնդիրների համար
  - Պրոգրեսիվ ոսպնյակներ
  - Բազմաֆոկալ հպովի ոսպնյակներ
  - Տեսողության թերապիա կամ տեսողության վերապատրաստում
  - Նշանակված ակնոցներ անձի համար, ով ունի և կարողանում է կրել հպովի ոսպնյակներ

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

## Նոր և գործող տեխնոլոգիաների գնահատում

Նոր տեխնոլոգիաներն ընդգրկում են ընթացակարգեր, դեղեր, կենսաբանական արտադրանք կամ սարքեր, որոնք նոր են մշակվել՝ բուժելու որոշակի հիվանդություններ կամ իրավիճակներ, կամ ընթացիկ տեխնոլոգիաների նոր կիրառում են:

Health Net-ը հետևում է տեխնոլոգիաների և բուժումների փոփոխություններին: Որոշելու՝ արդյոք նոր բուժումը կամ խնամքը պետք է ավելացվի ձեր նպաստների պլանին, մենք դիտարկում ենք՝

- Վերջին բժշկական և գիտական հոդվածները
- Գործող բժիշկների կամ ազգային մակարդակում ճանաչված բժշկական ասոցիացիաների առաջարկությունները
- Պետական գործակալությունների հաշվետվությունները կամ հրապարակումները:

Այս աշխատանքը կատարվում է՝ համոզվելու, որ ձեզ հասանելի է ապահով և արդյունավետ խնամք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

---

# 5. Իրավունքներ և պարտականություններ

Որպես Health Net-ի անդամ՝ դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այս գլուխը բացատրում է այս իրավունքներն ու պարտականությունները: Այս գլուխը նաև ներառում է իրավական ծանուցագրերը, որոնց իրավունքն ունեք՝ ունեք որպես Health Net-ի անդամ:

---

## Ձեր իրավունքները

Health Net-ի անդամներն ունեն հետևյալ իրավունքները.

- Ստանալ հարգալից վերաբերմունք՝ պատշաճ կերպով հաշվի առնելով գաղտնիության ձեր իրավունքը և ձեր բժշկական տեղեկությունների գաղտնիության ապահովումը:
- Ստանալ ծրագրի և ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ, նեառյալ՝ ապահովագրված ծառայությունների, մասնագետների և մատակարարի, ինչպես նաև անդամի իրավունքների և պարտավորությունների մասին:
- Ի վիճակի լինել ընտրել առաջնային խնամքի մատակարար Health Net-ի ցանցից:
- Ժամանակին խնամք ստանալ ցանցի մատակարարներից:
- Մասնակցել ձեր առողջական խնամքի վերաբերյալ որոշումների կայացմանը, ներառյալ բուժման մերժման իրավունքը:
- Խորհուրդներ տալ ծրագրի անդամների իրավունքների և պարտականությունների քաղաքականությունների վերաբերյալ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Բարձրացնել բանավոր կամ գրավոր բողոքներ կազմակերպության կամ ստացված խնամքի վերաբերյալ:
- Խնամքի համակարգում ստանալ:
- Հայցել բողոքարկում՝ կապված ծառայությունների կամ նպաստների մերժման, դադարեցման կամ սահմանափակման առնչությամբ:
- Ստանալ անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ ձեր լեզվով:
- Ստանալ անվճար իրավաբանական օգնություն ձեր տեղային իրավաբանական օգնության գրասենյակում կամ այլ խմբերից:
- Ձևակերպել նախօրոք հրահանգներ:
- Նահանգային լսում խնդրել, եթե ծառայությունը կամ նպաստը մերժվել է, և դուք արդեն բողոքարկում եք ներակայացրել Health Net-ին, սակայն դեռ բավարարված չեք որոշմամբ, կամ եթե դուք չեք ստացել ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում 30 օր հետո, ներառյալ տեղեկություններ հանգամանքների մասին, երբ հնարավոր է արագացված լսում անցկացնել:
- Դադարեցնել անդամակցությունը Health Net-ին և, խնդրանքի դեպքում, տեղափոխվել մեկ այլ առողջապահական ծրագիր վարչաշրջանում:
- Մատչել Համաձայնությամբ տրվող անչափահասների ծառայությունները:
- Գրավոր կերպով ստանալ անդամների տեղեկատվական նյութերն այլընտրանքային ձևաչափով (ինչպես օրինակ՝ բրեյլ, խոշոր տառերով տպված և աուդիո ձևաչափ) խնդրանքի դեպքում և այնքան ժամանակում, որը հարկավոր է պահանջվող ձևաչափը պատրաստելու համար՝ համաձայն Բարեկեցության և հաստատությունների օրենքի 14182 (b)(12) բաժնի:
- Ձերձ մնալ որևէ ֆիզիկական սահմանափակումից կամ մեկուսացումից, որը կարող է օգտագործվել որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարավետության կամ վրեժխնդրության միջոց:
- Ազատորեն քննարկել հասանելի բուժման ընտրանքների և այլընտրանքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք ներկայացված են ձեր վիճակին և հասկանալու կարողությանը համապատասխան՝ անկախ արժեքից կամ ապահովագրությունից:
- Տեսնել և ստանալ ձեր բժշկական արձանագրությունների պատճենը և հայցել, որպեսզի դրանք փոփոխվեն կամ ուղղվեն՝ ինչպես սահմանված է 45 Դաշնային կանոնակարգերի օրենքի §164.524-ում և 164.526-ում:
- Ազատ կիրառել այս իրավունքներն՝ առանց բացասական ազդեցության առ այն, թե ինչպես է ձեզ վերաբերվում Health Net-ը, ձեր մատակարարները կամ Նահանգը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Ունենալ հասանելիություն ընտանիքի պլանավորման ծառայություններին, Անկախ ծննդատներին, Դաշնային որակավորված առողջական կենտրոններին, Հնդկացիների առողջական կլինիկաներին, բուժքույր-մանկաբարձի ծառայություններին, Գյուղական առողջական կենտրոններին, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ծառայություններին և արտակարգ իրավիճակների ծառայություններին Health Net-ի ցանցից դուրս՝ համաձայն դաշնային օրենքի:

## Ձեր պարտականությունները

Health Net-ի անդամներն ունեն հետևյալ պարտականությունները.

- **Լինել քաղաքավարի և հարգալից:** Դուք պարտավոր եք քաղաքավարությամբ ու հարգանքով վերաբերվել ձեր բժշկին, բոլոր մատակարարներին ու անձնակազմին: Դուք պարտավոր եք ժամանակին ներկայանալ այցելություններին կամ այցից առնվազն 24 ժամ առաջ ձեր բժշկին տեղեկացնել այն չեղարկելու կամ փոխելու մասին:
- **Տրամադրել արդի, ճշգրիտ ու ամբողջական տեղեկություններ:** Դուք պարտավոր եք ճշգրիտ ու հնարավորինս ամբողջական տեղեկություն տալ ձեր բոլոր մատակարարներին և Health Net-ին: Դուք պարտավոր եք պարբերական բժշկական ստուգում անցնել և ձեր բժշկին տեղյակ պահել ձեր առողջական խնդիրների մասին, նախքան դրանց լրջանալը:
- **Հետևել ձեր բժշկի խորհուրդներին և մասնակցել ձեր խնամքին:** Ձեր բժշկի հետ միասին դուք ևս պարտավոր եք հոգալ ձեր բժշկական խնամքի կարիքները, մշակել և համաձայնեցնել բուժման նպատակները, սեփական առողջական խնդիրները հասկանալու համար անել առավելագույնը և հետևել բժշկի հետ փոխհամաձայնեցված բուժման ծրագրին ու հրահանգներին:
- **Շտապ օգնության սենյակից օգտվել միայն արտակարգ իրավիճակների դեպքում:** Դուք պարտավոր եք շտապ օգնության սենյակի ծառայություններից օգտվել արտակարգ իրավիճակներում կամ ձեր բժշկի ցուցումով: Շտապ օգնության խնամքը ծառայություն է, որը, ձեր կարծիքով, ձեզ անհրաժեշտ է, որպեսզի դադարեցվեն կամ մեղմվեն հանկարծակի լուրջ հիվանդությունները կամ ախտանիշները, վնասվածքները կամ վիճակները, որոնք պահանջում են անհապաղ ախտորոշում և բուժում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Խախտումների զեկուցում:** Դուք պարտավոր եք առողջական խնամքի խարդախությունների ու խախտումների մասին զեկուցել Health Net Community Solutions-ին: Դուք կարող եք անել դա անանուն կերպով՝ զանգահարելով Health Net-ի Խարդախության և չարաշահման թեժ գիծ 1-866-685-8664 անվճար հեռախոսահամարով: Խարդախություն թեժ գիծն աշխատում է օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր: Բոլոր զանգերը խիստ գաղտնի են:

## Գաղտնիության գործելակերպերի ծանուցագիր

Բժշկական արձանագրությունների գաղտնիության պահպանման առնչությամբ Health Net-ի քաղաքականությունները և գործընթացները նկարագրող հայտարարությունը հասանելի է և կտրամադրվի ձեզ խնդրանքի դեպքում:

**ԱՅՍ ԾԱՆՈԻՑԱԳԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՏՉԵԼ ԱՅՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

***ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՆ:***

### Ապահովագրված հաստատությունների պարտականությունները.

Health Net-ը (օգտագործվում են նաև «մենք» կամ «Ծրագիր») ապահովագրված հաստատություն է՝ համաձայն 1996 թվականի Առողջության ապահովագրության դրուստարության և հաշվետվողականության ակտի (HIPAA) սահմանման և կանոնակարգման: Օրենքով պահանջվում է Health Net-ի կողմից ձեր պաշտպանված առողջական տեղեկությունների գաղտնիության (PHI) պահպանումը, ձեր PHI-ին առնչվող մեր օրինական պարտականությունների և գաղտնիության գործելակերպերի մասին այս ծանուցագրի տրամադրումը, ներկայումս գործող այս ծանուցագրի պայմաններին հետևումը, ինչպես նաև ձեր PHI-ի անվտանգության խախտման դեպքում ձեզ ծանուցագրի ներկայացումը: PHI-ը տեղեկություններ են ձեր մասին, որոնք ընդգրկում են ժողովրդագրական տեղեկություն, որը կարող է ողջամտորեն օգտագործվել ձեզ ճանաչելու համար, և որը վերաբերվում է ձեր անցյալի, ներկայի կամ ապագայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը կամ վիճակին, ձեզ առողջական խնամքի տրամադրմանը կամ այդ խնամքի համար վճարմանը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



Այս ծանուցագրում նկարագրվում են, թե ինչպես մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր PHI-ը: Այն նաև նկարագրում է PHI-ը մատչելու, փոփոխելու և կառավարելու ձեր իրավունքները, ինչպես նաև այդ իրավունքների կիրառումը: Ձեր PHI-ի այլ օգտագործումները և բացահայտումները, որոնք չեն նկարագրվել այս ծանուցագրում, կիրականացվեն միայն ձեր գրավոր թույլտվությամբ:

Health Net-ն իրավունք է վերապահում փոփոխել այս ծանուցագիրը: Մենք իրավունք ենք վերապահում ուժի մեջ մտցնել թարմացված կամ փոփոխված ծանուցագիր, որը կազդի մեր արդեն ունեցած ձեր PHI-ի, ինչպես նաև ապագայում ստացվող PHI-ի վրա: Health Net-ը ճշգրիտ կերպով կվերանայի և կտարածի այս ծանուցագիրը, երբ զգալի փոփոխություն կատարվի հետևյալի վերաբերյալ՝

- Օգտագործումներ և բացահայտումներ
- Ձեր իրավունքները
- Մեր իրավական պարտականությունները
- Ծանուցագրում նշված գաղտնիության այլ գործելակերպեր

Թարմացված ծանուցագիրը հասանելի կլինի մեր կայքում և Անդամների տեղեկագրքում:

#### **Բանավոր, գրավոր և էլեկտրոնային PHI-ի ներքին պաշտպանությունը.**

Health Net-ը պաշտպանում է ձեր PHI-ը: Մենք ունենք գաղտնիության և անվտանգության գործընթացներ աջակցության համար:

Սրանք ձեր PHI-ի պաշտպանության մի քանի տարբերակներն են:

- Մենք վերապատրաստում ենք մեր աշխատակիցներին՝ մեր գաղտնիության և անվտանգության գործընթացներին հետևելու համար:
- Մենք պահանջում ենք մեր գործընկերներին հետևել գաղտնիության և անվտանգության գործընթացներին:
- Մենք ապահով ենք պահում մեր գրասենյակները:
- Մենք խոսում ենք ձեր PHI-ի մասին միայն գործնական նկատառումներով այն մարդկանց հետ, որոնք պետք է իմանան:
- Մենք պահում ենք ձեր PHI-ն անվտանգ, երբ ուղարկում ենք այն կամ պահպանում ենք էլեկտրոնային տարբերակով:
- Մենք կիրառում ենք տեխնոլոգիաներ, որպեսզի հեռու պահենք սխալ մարդկանց հասանելիությունը ձեր PHI-ին:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Ձեր PHI-ի թույլատրելի օգտագործումներ և բացահայտումներ.**

Ստորև ներկայացվում է, թե ինչպես մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր PHI-ը՝ առանց ձեր թույլտվության կամ լիազորության.

- **Բուժում** - Մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր PHI-ը՝ ձեզ բուժում տրամադրող բժշկին կամ առողջական խնամքի այլ մատակարարին, ձեր բուժումը մատակարարների միջև համակարգելու կամ մեզ աջակցելու համար, կամ ձեր նպաստներին առնչվող նախնական հաստատման (նախօրոք լիազորման) վերաբերյալ որոշումներ կայացնելիս:
- **Վճարում** - Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր PHI-ը՝ ձեզ տրամադրված առողջական խնամքի ծառայությունների համար նպաստի վճարումներ իրականացնելու համար: Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը մեկ այլ առողջապահական ծրագրի, առողջական խնամքի մատակարարի կամ այլ հաստատության, որոնք ենթակա են դաշնային Գաղտնիության կանոններին՝ ելնելով վճարման նպատակներից: Վճարման գործողությունները կարող են ներառել՝
  - հայցերի մշակում
  - իրավասության կամ հայցերի ապահովագրության որոշում
  - հավելավճարների հաշիվների դուրս գրում
  - ծառայությունների դիտարկում բժշկական անհրաժեշտության համար
  - հայցերի օգտագործման վերանայման իրականացում
- **Առողջական խնամքի գործառնություններ** - Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր PHI-ը՝ իրականացնելու առողջական խնամքի գործառնություններ: Այս գործողությունները կարող են ներառել՝
  - հաճախորդների ծառայությունների տրամադրում
  - գանգատներին և բողոքարկումներին պատասխանում
  - գործի կառավարում և խնամքի համակարգման տրամադրում
  - հայցերի բժշկական դիտարկման իրականացում և այլ որակի գնահատումներ
  - բարելավմանն ուղղված գործողություններ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Առողջական խնամքի գործառնություններում մենք նաև կարող ենք բացահայտել PHI-ը գործընկերներին: Մենք կունենանք գրավոր համաձայնագրեր՝ այս գործընկերների կողմից ձեր PHI-ի պաշտպանության համար: Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը մեկ այլ միավորին, որը ենթակա են դաշնային Գաղտնիության կանոններին: Միավորը նույնպես պետք է ունենա փոխհարաբերություններ ձեզ հետ՝ կապված իր առողջական խնամքի գործառնությունների հետ: Սա ներառում է՝

- որակի գնահատման և բարելավմանն ուղղված գործողություններ
  - առողջական խնամքի մասնագետների կոմպետենտության կամ որակավորումների դիտարկում
  - գործի կառավարում և խնամքի համակարգում
  - առողջական խնամքի խարդախության և չարաշահման բացահայտում և կանխարգելում
- ***Բացահայտումներ խմբակային առողջապահական ծրագրին/ծրագրի հովանավորողներին*** - Բացի դրանից, մենք կարող ենք բացահայտել ձեր պաշտպանված առողջական տեղեկությունները խմբակային առողջապահական ծրագրի հովանավորողին, ինչպես օրինակ՝ գործատուին կամ որևէ այլ միավորին, որը ձեզ առողջական խնամքի ծրագիր է տրամադրում, եթե հովանավորողը համաձայն է որոշակի սահմանափակումների՝ ինչպես կարող են օգտագործվել ու բացահայտվել պաշտպանված առողջական տեղեկությունները (օրինակ՝ համաձայնվի չօգտագործել պաշտպանված առողջական տեղեկություններն աշխատանքի ընդունելու գործողությունների կամ որոշումների համար):

**Ձեր PHI-ի այլ թույլատրելի կամ պահանջվող բացահայտումներ.**

- ***Ֆոնդահայթայթման գործողություններ*** - Մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր PHI-ը ֆոնդահայթայթման համար, օրինակ՝ բարեգործական հիմնադրամի կամ նման միավորի համար գումար հայթայթելը, որպեսզի օգնենք նրանց գործողությունների ֆինանսավորմանը: Եթե մենք դիմենք ձեզ ֆինանսական միջոցների հայթայթմանն ուղղված գործողությունների կապակցությամբ, մենք ձեզ չմասնակցելու կամ ապագայում նման հաղորդակցություններ ընդհանրապես չստանալու տարբերակ կառաջարկենք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Ապահովագրման նպատակներ** - Մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր PHI-ն ապահովագրման նպատակներով, ինչպես օրինակ՝ ապահովագրության դիմումի կամ հայցի մասին վճիռ կայացնելու նպատակով: Եթե մենք օգտագործենք կամ բացահայտենք ձեր PHI-ն ապահովագրման նպատակներով, ապա ապահովագրման գործընթացում մեզ արգելվում է օգտագործել ձեր գենետիկական PHI-ը:
- **Այցերի հիշեցումներ/բուժման այլընտրանքներ** - Մենք կարող ենք օգտագործել ձեր PHI-ը՝ հիշեցնելու մեզ հետ ունեցող ձեր բուժման այցի կամ բժշկական խնամքի մասին, կամ կարող ենք ձեզ տեղեկություններ տրամադրել բուժման այլընտրանքների կամ առողջությանն առնչվող այլ նպաստների և ծառայությունների մասին, օրինակ՝ տեղեկություններ, թե ինչպես թողնել ծիսելը կամ նիհարել:
- **Համաձայն օրենքի պահանջների** - Եթե դաշնային, նահանգային և/կամ տեղային օրենքը պահանջում է ձեր PHI-ի օգտագործում կամ բացահայտում, մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր PHI-ն այնքանով, որքանով օգտագործումը կամ բացահայտումը համապատասխանում է տվյալ օրենքին և սահմանափակվում տվյալ օրենքի պահանջներով: Եթե երկու կամ ավելի թվով օրենքներ կամ կանոնակարգեր, որոնք կառավարում են միևնույն օգտագործումը կամ բացահայտումը, հակասում են միմյանց, ապա մենք կհետևենք առավել սահմանափակող օրենքների կամ կանոնակարգերին:
- **Հանրային առողջության գործողություններ** - Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը հանրային առողջապահական կառույցի՝ հիվանդության, վնասվածքի կամ հաշմանդամության կանխարգելման կամ վերահսկման նկատառումներով: Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը Մանկի և դեղորայքի վարչությանը (FDA)՝ ապահովելու ապրանքների կամ ծառայությունների որակը, անվտանգությունը կամ արդյունավետությունը՝ ըստ FDA-ի իրավասությունների:
- **Բռնության և անտեսման գոհեր** - Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը տեղային, նահանգային, կամ դաշնային կառավարման մարմնին, ներառյալ սոցիալական ծառայությունները կամ պաշտպանության ծառայությունների գործակալությունը, որոնք լիազորված են օրենքով ստանալ նման զեկույցներ, եթե մենք ունենք բռնության, անտեսման կամ ընտանեկան բռնության հիմնավոր հավատ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Ղատական և վարչական վարույթներ** - Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը դատական և վարչական վարույթների ժամանակ: Մենք կարող ենք բացահայտել այն նաև ի պատասխան հետևյալի՝
  - դատարանի հրաման
  - վարչական տրիբունալ
  - դատական ծանուցագիր
  - դատարան ներկայանալու ծանուցում
  - երաշխավորագիր
  - բացահայտման խնդրանք
  - համանման իրավական խնդրանք
- **Օրենքի կիրարկում** - Մենք կարող ենք բացահայտել ձեր համապատասխան PHI-ն օրենքի կիրարկման դեպքում, երբ պահանջվում է այդպես անել: Օրինակ, ի պատասխան հետևյալի՝
  - դատարանի հրաման
  - դատական կարգով տրված հրաման
  - դատական ծանուցագիր
  - դատական ծառայողի կողմից թողարկված դատարան ներկայանալու ծանուցում
  - մեծ ժյուրիի կողմից դատական ծանուցագիր

Մենք կարող ենք բացահայտել ձեր համապատասխան PHI-ը կասկածյալի, փախստականի, նյութական վկայի կամ անհայտ կորած անձի բացահայտման կամ տեղորոշման նպատակներով:

- **Ղատաքննիչ, բժշկական քննիչներ և թաղմանական տնօրեններ** - Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը դատաքննիչին կամ բժշկական քննիչին: Սա կարող է անհրաժեշտ լինել, օրինակ, մահվան պատճառը որոշելու համար: Մենք նաև կարող ենք բացահայտել PHI-ը թաղմանական տնօրեններին, եթե անհրաժեշտ է, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց պարտականությունները:
- **Մարմնի օրգանների, աչքի կամ հյուսվածքների նվիրաբերություն** - կարող ենք բացահայտել PHI-ն օրգանների գնումներ իրականացնող կազմակերպություններին: Մենք նաև կարող ենք բացահայտել ձեր PHI-ն այն անձանց, որոնք աշխատում են հետևյալի գնումների, բանկային կամ փոխպատվաստման համակարգերում՝
  - դիակային օրգաններ
  - աչքեր
  - հյուսվածքներ



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Առողջապահության և անվտանգության սպառնալիքներ** - Մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր PHI-ը, եթե իրապես կարծում ենք, որ օգտագործումը կամ բացահայտումն անհրաժեշտ է՝ կանխելու կամ թուլացնելու անհատի կամ հասարակության առողջությանը կամ անվտանգությանը լուրջ կամ անմիջական սպառնալիքները:
- **Մասնագիտացված կառավարական գործառնություններ** - Եթե դուք ԱՄՆ զինված ուժերի անդամ եք, մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը՝ ըստ ռազմական հրամանատարության ղեկավարության պահանջի: Մենք նաև կարող ենք բացահայտել ձեր PHI-ը՝
  - լիազորված դաշնային պաշտոնյաներին՝ ազգային անվտանգության և հետախուզական գործողությունների նպատակով
  - Պետական ղեկավարամեներին՝ բժշկական նպատակահարմարության որոշումների նպատակով
  - Նախագահի կամ այլ լիազորված անձանց պաշտանության ծառայությունների նպատակով
- **Աշխատողների փոխհատուցում** - Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ը՝ համապատասխանելու այն օրենքներին, որոնք առնչվում են աշխատավորների հատուցմանը կամ օրենքով սահմանված այլ նման ծրագրերի, որոնք տրամադրում են նպաստներ աշխատանքային վնասվածքների կամ հիվանդության համար՝ անկախ մեղքի հաշվի առնելու:
- **Արտակարգ իրավիճակներ** - Մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ն արտակարգ իրավիճակում կամ, եթե դուք անկարող կամ ներկա չեք, ընտանիքի անդամին, մոտ անձնական ընկերոջը, աղետների լիազորված գործակալությանը, կամ որևէ այլ անձի, ով նախապես նշանակվել է ձեր կողմից: Մենք կօգտագործենք մասնագիտական դատողություն և փորձ՝ որոշելու՝ արդյոք բացահայտումը ձեր լավագույն շահերից է բխում: Եթե բացահայտումը բխում է ձեր լավագույն շահերից, մենք կբացահայտենք միայն PHI-ը, որն անմիջական կերպով վերաբերվում է ձեր խնամքում տվյալ անձի ներգրավվածությանը:
- **Բանտարկյալներ** - Եթե դուք հանդիսանում եք ուղղիչ հաստատության բանտարկյալ կամ գտնվում եք իրավապահ մարմինների պաշտոնատար անձի խնամակալության ներքո, մենք կարող ենք բացահայտել ձեր PHI-ն ուղղիչ հաստատության կամ իրավապահ մարմինների պաշտոնատար անձին, եթե նման տեղեկություններն անհրաժեշտ են հաստատությանը՝ ձեզ առողջական խնամք տրամադրելու, ձեր կամ այլ անձանց առողջությունը կամ անվտանգությունը պաշտպանելու, կամ ուղղիչ հաստատության անվտանգության և ապահովության համար:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Հետազոտություն** - Որոշ հանգամանքներում մենք կարող եք բացահայտել ձեր PHI-ը հետազոտողներին, երբ նրանց կլինիկական հետազոտությունը հաստատվել է, և երբ առկա են որոշակի երաշխիքներ՝ ձեր PHI-ի գաղտնիության և պաշտպանության համար:

**Ձեր PHI-ի օգտագործումներ և բացահայտումներ, որոնք պահանջում են ձեր գրավոր թույլտվությունը**

Մեզանից պահանջվում է ստանալ ձեր գրավոր թույլտվությունը ձեր PHI-ի օգտագործման և բացահայտման համար, սահմանափակ բացառությամբ, հետևյալ նպատակներով.

**PHI-ի վաճառք** - Մենք կխնդրենք ձեր գրավոր թույլտվությունը, նախքան մենք որևէ բացահայտում կատարենք, որն ուղղված է ձեր PHI-ի վաճառքին, այսինքն՝ մենք փոխհատուցում ենք ստանում այս ձևով PHI-ը բացահայտելու համար:

**Շուկայադրում** - Մենք կխնդրենք ձեր գրավոր թույլտվությունը ձեր PHI-ը շուկայադրման նպատակներով օգտագործման և բացահայտման համար, սահմանափակ բացառությամբ, ինչպես օրինակ, երբ մենք ձեզ հետ ունենք երես առ երես շուկայադրման հաղորդակցում կամ երբ մենք նումինալ արժեքի գովազդային նվերներ ենք տրամադրում:

**Հոգեբուժական թերապիայի նշումներ** – Մենք կպահանջենք ձեր գրավոր թույլտվությունը՝ օգտագործելու կամ բացահայտելու համար ձեր հոգեբուժական թերապիայի նշումները, որոնք մենք կարող ենք ունենալ մեր գրանցումներում, սահմանափակ բացառությամբ, ինչպես օրինակ՝ որոշակի բուժման, վճարման կամ առողջապահական խնամքի գործողությունների նպատակով:

**Անհատների իրավունքներ**

Հետևյալը ձեր իրավունքներն են PHI-ի վերաբերյալ: Եթե ցանկանում եք օգտագործել հետևյալ իրավունքներից որևէ մեկը, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ՝ այս ծանուցագրի վերջում ներկայացված տեղեկություններով:

- **Թույլտվության չեղարկման իրավունք** - Դուք կարող եք չեղարկել ձեր թույլտվությունը ցանկացած ժամանակ: Ձեր թույլտվության չեղարկումը պետք է ներկայացվի գրավոր: Չեղարկումն անմիջապես ուժի մեջ կմտնի, բացառությամբ այն չափով, երբ մեր կողմից արդեն ձեռնարկվել են գործողություններ թույլտվությունից կախված և նախքան ձեր գրավոր չեղարկման ստացումը մեր կողմից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Սահմանափակումներ հայցելու իրավունք** - Դուք իրավունք ունեք հայցելու սահմանափակումներ ձեր PHI-ի օգտագործման և բացահայտման համար՝ բուժման, վճարման կամ առողջական խնամքի գործառնությունների նկատառումներով, ինչպես նաև բացահայտումներ ձեր խնամքում կամ խնամքի վճարումներում ներառված անձանց, օրինակ՝ ընտանիքի անդամները կամ մոտ ընկերները: Ձեր հայցը պետք է փաստի ձեր կողմից հայցվող սահմանափակումները, ինչպես նաև պետք է նշի, թե ում համար են կիրառելի դրանք: Մենք պարտավորված չենք համաձայնվել այս հայցին: Եթե մենք համաձայն ենք, մենք կենթարկվենք ձեր սահմանափակման հայցին, եթե իհարկե այդ տեղեկությունն անհրաժեշտ չէ արտակարգ իրավիճակների դեպքում: Այնուամենայնիվ, մենք կսահմանափակենք PHI-ի օգտագործումը կամ բացահայտումն առողջապահական ծրագրի վճարման կամ առողջական խնամքի գործառնությունում, երբ դուք ինքներդ եք ամբողջովին վճարել ծառայության կամ պարագայի համար:
- **Գաղտնի հաղորդակցության խնդրանքի իրավունք** - Դուք իրավունք ունեք խնդրել, որպեսզի մենք հաղորդակցվենք ձեզ հետ ձեր PHI-ի վերաբերյալ այլընտրանքային տարբերակներով կամ այլընտրանքային տեղորոշումներից: Այս իրավունքը կիրառելի է միայն հետևյալ հանգամանքներում՝
  - (1) հաղորդակցումը բացահայտում է բժշկական տեղեկություն կամ մատակարարի անունը և հասցեն, որոնք վերաբերվում են զգայուն ծառայությունների ստացմանը, կամ
  - (2) բժշկական տեղեկության լիովին կամ մասնակի կամ մատակարարի անվան և հասցեի բացահայտումը կարող էր վտանգի տակ դնել ձեզ, եթե այն չտրամադրվեր ձեր կողմից պահանջվող այլընտրանքային տարբերակներով կամ այլընտրանքային տեղորոշումներից: Դուք պարտավոր չեք բացատրել ձեր հայցի պատճառը, բայց ձեր հայցը պարզորոշ կերպով պետք է հայտարարի, որ հաղորդակցումը բացահայտում է բժշկական տեղեկություն կամ մատակարարի անունը և հասցեն, որոնք վերաբերվում են զգայուն ծառայությունների ստացմանը, կամ բժշկական տեղեկության լիովին կամ մասնակի կամ մատակարարի անվան և հասցեի բացահայտումը կարող էր վտանգի տակ դնել ձեզ, եթե հաղորդակցման միջոցները կամ տեղորոշումը չփոխվեին: Մենք պետք է կարգավորենք ձեր խնդրանքը, եթե այն ողջամիտ է և որոշակիացնում է այլընտրանքային միջոցները կամ տեղորոշումը, որտեղ ձեր PHI-ը պետք է տրամադրվի:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



- **Ձեր PHI-ին հասանելիությունը և պատճենի ստացումը** - Դուք իրավունք ունեք, սահմանափակ բացառություններով, տեսնել և ստանալ ձեր PHI-ի պատճենները, որոնք գտնվում են արձանագրությունների սահմանված փաթեթում: Դուք կարող եք խնդրել, որ մենք տրամադրենք պատճենները լուսապատճեններից բացի մեկ այլ ձևաչափով: Մենք կօգտագործենք այն ձևաչափը, որը խնդրել եք, քանի դեռ մենք գործանականորեն կարող ենք իրականացնել խնդրանքը: Ձեր PHI-ին մուտքի իրավունք ստանալու համար, դուք պետք է խնդրանքը ներկայացնեք գրավոր: Եթե մենք մերժենք ձեր խնդրանքը, մենք գրավոր բացատրություն կտրամադրենք ու կտեղեկացնենք ձեզ՝ արդյոք հնարավոր է տեսնել մերժման պատճառները, և ինչպես կարող եք այդ վերանայումը պահանջել, կամ կասենք ձեզ, եթե չեք կարող վերանայել մերժումը:
- **Ձեր PHI-ը փոփոխելու իրավունք** - Դուք իրավունք ունեք խնդրել, որպեսզի մենք փոփոխենք կամ փոխենք ձեր PHI-ը, եթե կարծում եք, որ այն պարունակում է ոչ ստույգ տեղեկություններ: Ձեր խնդրանքը պետք է լինի գրավոր և պետք է բացատրի, թե ինչու է պետք տեղեկությունների փոփոխումը: Մենք կարող ենք մերժել ձեր խնդրանքը որոշակի պատճառներով, օրինակ, եթե մենք չենք ստեղծել տեղեկություններ, որոնք ցանկանում ենք փոփոխել և PHI-ի ստեղծողն ի վիճակի է իրականացնել փոփոխությունը: Եթե մենք մերժենք ձեր խնդրանքը, մենք գրավոր բացատրություն կտրամադրենք: Դուք կարող եք պատասխանել փաստարկով, որ չեք համաձայնվում մեր որոշման հետ, և մենք կկցենք ձեր փաստարկը PHI-ին, որը խնդրել էիք մեզ փոփոխել: Եթե մենք ընդունում ենք տեղեկության փոփոխման ձեր ընտրանքը, ապա մենք կկիրառենք խելամիտ գործողություններ՝ տեղեկացնելու այլ անձանց, ներառյալ այն անձանց, ում դուք կնշեք, փոփոխության մասին և կներառենք փոփոխությունները տեղեկությունների հետագա ցանկացած բացահայտումներում:
- **Բացահայտումների զեկույցի ստացման իրավունք** - Դուք իրավունք ունեք ստանալու վերջին 6 տարիների ընթացքում դեպքերի ցուցակը, երբ մենք կամ մեր բիզնես մասնաճյուղերը բացահայտել ենք ձեր PHI-ը: Այս ամենը կիրառելի չէ բուժման, վճարման, առողջական խնամքի գործառնությունների, կամ ձեր կողմից լիազորված և այլ որոշակի գործողությունների նկատառումներով բացահայտումներին: Եթե դուք խնդրեք այս զեկույցը մեկ անգամից ավելի հաճախ 12 ամիս ժամանակահատվածում, մենք կարող ենք ձեզանից գանձել ողջամիտ, ծախսերի վրա հիմնված վճար՝ այս հավելյալ հայցերին պատասխանելու համար: Մենք կտրամադրենք մանրամասն տեղեկություն մեր վճարների վերաբերյալ ձեր հայցի ժամանակ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Գանգատի ներկայացման իրավունք** - Եթե կարծում եք, որ ձեր գաղտնիության իրավունքները խախտվել են կամ մենք խախտել ենք մեր իսկ գաղտնիության գործելակերպը, ապա կարող եք գրավոր կամ հեռախոսով գանգատ ներկայացնել մեզ՝ օգտագործելով այս ծանուցագրի վերջում նշված կոնտակտային տեղեկությունները: Medi-Cal անդամների բողոքների համար անդամները կարող են նաև դիմել California-ի Առողջապահական խնամքի ծառայությունների բաժանմունք, որը նշված է այս հաջորդ բաժնում:

Կարող եք նաև գանգատ ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և մարդու ծառայությունների բաժանմունքի Քաղաքացիական իրավունքների գրասենյակի քարտուղարին՝ նամակ ուղարկելով 200 Independence Avenue, S.W., Washington, D.C. 20201 կամ զանգահարելով 1-800-368-1019 (TTY/TDD՝ 1-866-788-4989) հեռախոսահամարով կամ այցելելով [www.hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints](http://www.hhs.gov/ocr/privacy/hipaa/complaints) կայքը:

#### **ԳԱՆԳԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ՁԵՐ ԴԵՄ ՈՐԵՎԷ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՁԵՆՔ ՁԵՆՆԱՐԿԻ:**

- **Այս ծանուցագրի պատճենը ստանալու իրավունք** - Դուք կարող եք խնդրել մեր ծանուցագրի պատճենը ցանկացած ժամանակ՝ օգտագործելով այս ծանուցագրի վերջում նշված կոնտակտային տեղեկությունները: Եթե դուք ստանաք այս ծանուցագիրը մեր կայքից կամ էլ. փոստի (e-mail) միջոցով, դուք նաև իրավասու եք խնդրելու ծանուցագրի տպագիր տարբերակը:

#### **Կոնտակտային տվյալներ**

Եթե հարցեր ունեք այս ծանուցագրի, ձեր PHI-ի գաղտնիության կիրառումների կամ ձեր իրավունքների օգտագործման վերաբերյալ, կարող եք կապ հաստատել մեզ հետ գրավոր կամ զանգահարելով ստորև ներկայացված կոնտակտային տվյալներով:

**Health Net-ի Գաղտնիության գրասենյակ**  
Attn: Privacy Official  
P.O. Box 9103  
Van Nuys, CA 91409

**Հեռախոս՝ 1-800-522-0088**  
Ֆաքս՝ 1-818-676-8314  
Էլ. փոստ՝ [Privacy@healthnet.com](mailto:Privacy@healthnet.com)



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Եթե կարծում եք, որ մենք չենք պաշտպանել ձեր գաղտնիությունն ու ցանկանում եք բողոքել, ապա կարող եք զանգահարել կամ գրել՝

***Privacy Officer***

c/o Office of Legal Services

California Department of Health Care Services

1501 Capitol Avenue, MS 0010

P.O. Box 997413

Sacramento, CA 95899-7413

Հեռախոս՝ 1-916-445-4646 կամ 1-866-866-0602 (TTY/TDD՝ 1-877-735-2929)

Էլ. փոստ՝ [Privacyofficer@dhcs.ca.gov](mailto:Privacyofficer@dhcs.ca.gov)

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԾԱՆՈԻՑԱԳԻՐ**

ԱՅՍ ԾԱՆՈԻՑԱԳԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՈՒ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ՁԵՐ ՄԱՍԻՆ **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՅՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՆ:

Մենք պարտավորվում ենք պահպանել ձեր անձնական ֆինանսական տվյալների գաղտնիությունը: Այս ծանուցագրի շրջանակներում «անձնական ֆինանսական տվյալներ» նշանակում են տվյալներ գրանցված անձի կամ դիմորդի մասին առողջապահական խնամքի ապահովագրման համար, որոնք բնորոշում են անհատին, ընդհանուր առմամբ մատչելի չեն հասարակությանը, և ձեռք են բերվում անհատից կամ առողջական խնամքի ապահովագրության հետ կապված գործընթացների արդյունքում:

**Տվյալներ, որոնք մենք հավաքում ենք.** Ձեր մասին անձնական ֆինանսական տվյալներ մենք հավաքում ենք հետևյալ աղբյուրներից.

- Տվյալներ, որոնք մենք ստանում ենք ձեզանից դիմումների կամ այլ փաստաթղթերի վրա, ինչպիսիք են անունը, հասցեն, տարիքը, բժշկական տվյալները և սոցիալական ապահովագրության համարը:
- Տեղեկություններ մեզ, մեր մասնաճյուղերի կամ այլոց հետ ձեր գործարքների մասին, ինչպիսիք են՝ վճարումները և հայցերի պատմությունը, և
- Տեղեկություններ սպառողների զեկույցներից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Տվյալների բացահայտում.** Մենք չենք բացահայտում մեր ներկա կամ նախկին դիմորդների անձնական ֆինանսական տվյալները որևէ երրորդ կողմին՝ բացառությամբ օրենքով պահանջվող կամ թույլատրվող դեպքերի: Օրինակ, մեր աշխատանքային պրակտիկայի ընթացքում օրենքով սահմանված կարգով կարող ենք ձեր անձնական ֆինանսական տվյալները առանց ձեր թույլտվության բացահայտել հետևյալ կազմակերպություններին.

- Մեր մասնաճյուղերին, ինչպիսիք են՝ այլ ապահովագրողները:
- Մեր մասնաճյուղ չհանդիսացող ընկերություններին մեր ամենօրյա գործարքների համար, ինչպես օրինակ՝ ձեր գործարքները մշակելու, ձեր հաշիվ(ներ)ը պահպանելու, կամ դատական հրահանգներին և օրինական հետաքննություններին պատասխանելու համար, և
- Մեր մասնաճյուղ չհանդիսացող ընկերություններին, որոնք մեզ համար ծառայություններ են իրականացնում՝ այդ թվում մեր անունից գովազդային հաղորդագրությունների ուղարկումը:

**Գաղտնիություն և անվտանգություն.** Մենք տրամադրում ենք ֆիզիկական, էլեկտրոնային և ընթացակարգային երաշխիքներ՝ համաձայն գործող պետական և դաշնային չափանիշների, ձեր անձնական ֆինանսական տվյալներն այնպիսի վտանգներից պաշտպանելու համար, ինչպիսիք են՝ կորուստը, ոչնչացումը կամ չարաշահումը: Այս միջոցները ներառում են համակարգչային երաշխիքներ, ապահով ֆայլեր և կառույցներ, ինչպես նաև ձեր անձնական ֆինանսական տվյալների հասանելիության սահմանափակում:

**Հարցեր այս ծանուցագրի մասին.**

Եթե հարցեր ունեք այս ծանուցագրի մասին՝

**Խնդրում ենք զանգահարել ձեր ID քարտի հակառակ կողմում նշված անվճար հեռախոսահամարով կամ դիմել Health Net՝ 1-800-522-0088 հեռախոսահամարով:**

## Ծանուցագիր օրենքների մասին

Այս Անդամների տեղեկագրի նկատմամբ կիրառվում են շատ օրենքներ:

Այս օրենքները կարող են ազդել ձեր իրավունքների և պարտականությունների վրա, նույնիսկ եթե օրենքները չեն ընդգրկվել կամ բացատրվել այս տեղեկագրում:

Այս տեղեկագրի նկատմամբ կիրառվող հիմնական օրենքները Medi-Cal ծրագրի մասին նահանգային ու դաշնային օրենքներն են: Կարող են կիրառվել նաև դաշնային ու նահանգային այլ օրենքներ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Ծանուցադիր Medi-Cal-ի՝ որպես վերջին վճարողի մասին

Երբեմն մեկ այլ անձ պետք է նախ վճարի Health Net-ի կողմից ձեզ տրամադրած ծառայությունների համար: Օրինակ, եթե դուք ավտովթարի եք ենթարկվել կամ աշխատավայրում եք վնասվել, ապա նախ պետք է վճարի ապահովագրությունը կամ Աշխատողների փոխհատուցումը:

DHCS-ն իրավունք և պարտականություն ունի գանձումներ կատարել Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայությունների համար, որոնց համար Medi-Cal-ն առաջնային վճարող չէ: Եթե դուք վնասվածք ունենք և ինչ-որ մեկը պատասխանատու է ձեր վնասվածքի համար, դուք կամ ձեր իրավական ներկայացուցիչը պետք է ծանուցեք DHCS-ին 30 օրվա ընթացքում՝ իրավական գործողություն կամ հայց ներկայացնելուց հետո: Ներկայացրեք ձեր ծանուցումն առցանց՝

- Անհատական վնասվածքի ծրագիր՝ <http://dhcs.ca.gov/PI>
- Աշխատողների փոխհատուցման վերականգման ծրագիր՝ <http://dhcs.ca.gov/WC>

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 1-916-445-9891 հեռախոսահամարով:

Medi-Cal ծրագիրը ենթարկվում է նահանգային և դաշնային օրենքներին ու կանոններին, որոնք վերաբերվում են երրորդ կողմերի իրավական պատասխանատվությանն անդամների առողջական խնամքի ծառայությունների համար: Health Net-ը կձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերը համոզվելու համար, որ Medi-Cal ծրագիրը վերջին վճարողն է:

Medi-Cal անդամները, հնարավոր է, նաև ունենան այլ առողջական ապահովագրություն (OHC), որն իրենց անվճար է տրամադրվում: Համաձայն օրենքի՝ անդամները պետք է օգտագործեն OHC-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները, նախքան Health Net-ից ծառայություններ ստանալը: Եթե դուք չդիմեք կամ հետևեք անվճար կամ նահանգի կողմից վճարվող OHC-ին, ձեր Medi-Cal նպաստները և/կամ իրավասությունը կմերժվի կամ կդադարեցվի: Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որպեսզի Medi-Cal անդամները զեկուցեն, եթե ունեն մասնավոր առողջական ապահովագրություն: Մասնավոր առողջական ապահովագրությունը զեկուցելու կամ փոխելու համար անցեք <http://dhcs.ca.gov/mymedi-cal> հղումով: Կամ կատարեք դա ձեր առողջապահական ծրագրի միջոցով: Կամ զանգահարեք 1-800-541-5555 (TTY/TDD 1-800-430-7077 կամ 711) հեռախոսահամարով: California-ից դուրս զանգահարեք 1-916-636-1980 հեռախոսահամարով: Եթե դուք պատշաճ կերպով չհաղորդեք ձեր OHC-ի փոփոխությունների մասին և այս պատճառով ստանաք Medi-Cal-ի նպաստներ, որոնց դուք իրավասու չեք, հնարավոր է՝ դուք հետ վճարեք DHCS-ին:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Ունեցվածքից փոխհատուցման ծանուցագիր

Medi-Cal ծրագիրը պետք է ակնկալի հետվճարում որոշ Medi-Cal-ի հանգուցյալ անդամների գույքից մարված վճարումներից, ներառյալ՝ ղեկավարվող խնամքի հավելավճարներ բուժքույրական հաստատությունների ծառայությունների, տնային և համայնքահեն ծառայությունների և համապատասխան հիվանդանոցային և դեղատոմսային դեղերի ծառայությունների համար, որոնք տրամադրվել են Medi-Cal-ի հանգուցյալ անդամին՝ անդամի 55-րդ ծննդյան օրվան կամ դրանից հետո: Եթե հանգուցյալ անդամը չի թողել սեփականություն կամ ոչինչ չունի մահվանից հետո, ապա ոչ մի բան պարտք չի համարվում:

Ունեցվածքից փոխհատուցման մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://dhcs.ca.gov/er> կայքը: Կամ զանգահարեք 1-916-650-0490 հեռախոսահամարով կամ ստացեք իրավական խորհրդատվություն:

## Գործողության ծանուցում

Health Net-ը ձեզ կուղարկի Գործողության ծանուցագրի (NOA) նամակ ցանկացած ժամանակ, երբ Health Net-ը մերժի, ուշացնի, դադարեցնի կամ փոփոխի առողջական խնամքի ծառայությունների խնդրանքը: Եթե չհամաձայնվեք ծրագրի որոշման հետ, կարող եք ցանկացած ժամանակ Health Net-ին բողոքարկում ներկայացնել: Տեսեք Բողոքարկումների հատվածը ներքևում՝ տեղեկանալու համար, թե ինչպես պետք է բողոքարկում ներկայացնեք: Երբ Health Net-ը ձեզ NOA է ուղարկում, այն կտեղեկացնի ձեզ ձեր բոլոր ունեցած իրավունքների մասին, եթե համաձայն չեք մեր որոշման հետ:

## Երրորդ կողմի պատասխանատվություն

Health Net-ը փոխհատուցման հայց չի ներկայացնի անդամին տրամադրված ապահովագրված ծառայությունների արժեքի համար, երբ այդ փոխհատուցումը բխում է երրորդ կողմի քաղաքացիական իրավախախտման պատասխանատվություն ներառող գործողությունից կամ դժբախտ դեպքերի պատասխանատվության ապահովագրությունից, այդ թվում՝ Աշխատողների փոխհատուցման պարզեներ ու չապահովագրված վարորդի ապահովագրություն: Այնուամենայնիվ, Health Net-ը կտեղեկացնի DHCS-ին նման հնարավոր գործերի մասին և կօգնի DHCS-ին նման փոխհատուցումը ստանալու նահանգային իրավունքը կիրառելու հարցում: Անդամները պարտավոր են օգնել Health Net-ին և DHCS-ին այս հարցում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Անկախ կապալառուներ

Health Net-ի և յուրաքանչյուր մասնակցող մատակարարի հարաբերություններն անկախ կապալառուի փոխհարաբերություններ են: Մասնակցող մատակարարները Health Net-ի աշխատակիցները կամ գործակալները չեն, և ոչ Health Net-ը, ոչ էլ Health Net-ի աշխատակիցները մասնակցող մատակարարի աշխատակիցները կամ գործակալները չեն: Health Net-ը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում որևէ մասնակցող կամ առողջական խնամքի այլ մատակարարի մասնագիտական անփութության, սխալ գործողությունների կամ բացթողումների համար: Մասնակցող մատակարարները, այլ ոչ Health Net-ը, պահպանում են բժշկ-հիվանդ փոխհարաբերություններն անդամի հետ: Health Net-ն առողջական խնամքի մատակարար չէ:

## Առողջական խնամքի ծրագրի խարդախություն

Առողջական խնամքի ծրագրի խարդախությունը սահմանվում է որպես մատակարարի, անդամի, գործատուի կամ նրանց անունից գործող որևէ անձի կողմից խաբեության կամ սխալի ներկայացում: Դա քրեական հանցագործություն է, որը կարող է դատական կարգով հետապնդելի լինել: Ցանկացած անձ, ով իր կամքով և գիտակցաբար ներգրավվում է այնպիսի գործողության մեջ, որի նպատակն է վնաս հասցնել առողջական խնամքի ծրագրին՝ ներկայացնելով սխալ կամ խաբուսիկ տվյալներ պարունակող հայց, մեղադրվում է ապահովագրության խարդախություն կատարելու մեջ:

Եթե մտահոգություններ ունեք հաշվի կամ Նպաստների բացատրության ձևաթղթի վրա որևէ գումարների մասին, կամ եթե գիտեք կամ կասկածում եք որևէ ապօրինի գործունեություն, զանգահարեք մեր ծրագրի Խարդախության թեժ գիծ՝ 1-866-685-8664 անվճար հեռախոսահամարով: Խարդախություն թեժ գիծն աշխատում է օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր: Բոլոր զանգերը խիստ գաղտնի են:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Health Net-ի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներ

Եթե բնական աղետի կամ արտակարգ իրավիճակի հանգամանքների արդյունքում Health Net-ի հաստատությունները կամ անձնակազմը ի վիճակի չէ այս Անդամների տեղեկագրքի շրջանակներում ծառայություններ ու նպաստներ տրամադրել և կազմակերպել, ապա Health Net-ի տվյալ ծառայություններ ու նպաստներ տրամադրելու պարտականությունը պետք է սահմանափակվի այն պահանջով, որ Health Net-ը ջանք կգործադրի տվյալ ծառայությունների ու նպաստների տրամադրումն և կազմակերպումը իրականացնելու համար՝ ելնելով իր հաստատությունների ու անձնակազմի մատչելիության սահմանափակումներից:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



---

## 6. Խնդիրների գեկուցում և լուծում

Առկա են երկու տեսակի խնդիրներ, որոնք դուք կարող եք ունենալ Health Net-ի հետ՝

- **Գանգատ** (կամ **բողոք**) է համարվում, երբ դուք Health Net-ի կամ մատակարարի հետ ունեք խնդիր, կամ խնդիր ունեք մատակարարից ստացված առողջական խնամքի կամ բուժման վերաբերյալ
- **Բողոքարկում** է համարվում, երբ դուք համաձայն չեք ձեր ծառայությունները չապահովագրելու կամ փոփոխելու Health Net-ի որոշման հետ

Դուք իրավունք ունեք Health Net-ին բողոքներ և բողոքարկումներ ներկայացնել՝ ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելու համար: Սա չի դադարեցնում ձեր որևէ իրավական իրավունք կամ հնարավորություն: Բողոք ներկայացնելու համար մենք խտրականություն չենք դրսևորի կամ վրեժխնդիր չենք լինի ձեր դեմ: Ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելը կօգնի մեզ բարելավել խնամքը բոլոր անդամների համար:

Դուք մշտապես պետք է առաջինը կապվեք Health Net-ի հետ՝ ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելու համար: Զանգահարեք մեզ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով, Տեղեկացրեք մեզ ձեր խնդրի մասին:

Եթե ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռ լուծված չէ, կամ դուք բավարարված չեք արդյունքներով, զանգահարեք California-ի Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունք (DMHC) և խնդրենք նրանց վերանայել ձեր գանգատը կամ Անկախ բժշկական վերանայում անցկացնել: Կարող եք զանգահարել DMHC 1-888-466-2219 (TTY/TDD 1-877-688-9891 կամ 711) հեռախոսահամարով կամ այցելել DMHC-ի [www.dmhc.ca.gov](http://www.dmhc.ca.gov) կայքը մանրամասների համար:

California-ի Առողջական խնամքի ծառայությունների բաժանմունքը (DHCS) Medi-Cal-ի Ղեկավարվող խնամքի Օմբուդսմենը նույնպես կարող են օգնել: Նրանք կարող են օգնել, եթե խնդիրներ ունեք առողջապահական ծրագրին միանալու, փոխելու կամ նրանից հեռանալու վերաբերյալ: Նրանք նաև կարող են օգնել, եթե դուք տեղափոխվել եք, և խնդիրներ են առաջացել ձեր Medi-Cal-ը ձեր նոր վարչաշրջան տեղափոխելու ընթացքում: Կարող եք զանգահարել Օմբուդսմենին երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8:00 a.m.-ից 5:00 p.m.-ը, 1-888-452-8609 հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Դուք կարող եք նաև ձեր Medi-Cal-ի իրավասության վերաբերյալ բողոք ներկայացնել ձեր վարչաշրջանի իրավասության գրասենյակ: Եթե համոզված չեք, թե ում կարող եք դիմել բողոքի վերաբերյալ, զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Ձեր հավելյալ առողջական ապահովագրության մասին սխալ տեղեկություններ զեկուցելու համար խնդրում ենք զանգահարել Medi-Cal-ին երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8:00 a.m.-ից 5:00 p.m.-ը, 1-800-541-5555 հեռախոսահամարով:

## Գանգատներ

Գանգատ (կամ բողոք) է համարվում, երբ դուք խնդիր ունեք կամ բավարարված չեք Health Net-ից կամ մատակարարից ստացված ծառայություններից: Գանգատ ներկայացնելու համար ժամանակի սահմանափակում չկա: Դուք կարող եք գանգատ ներկայացնել Health Net-ին ցանկացած ժամանակ՝ հեռախոսով, գրավոր կամ առցանց:

- **Հեռախոսով.** Զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Տրամադրեք ձեր առողջապահական ծրագրի ID համարը, ձեր անունը և ձեր գանգատի պատճառը:
- **Փոստով.** Զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով և խնդրեք ուղարկել ձեզ ձևաթուղթը: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Անպայման ներառեք ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և ձեր գանգատի պատճառը: Տեղեկացրեք մեզ, թե ինչ է պատահել և ինչպես կարող ենք մենք օգնել ձեզ: Ուղարկեք ձևաթուղթը հետևյալ հասցեով՝

Health Net Appeals & Grievances  
P.O. Box 10348  
Van Nuys, CA 91410-0348

Ձեր բժշկի գրասենյակը կունենա գանգատի ձևաթղթերը:

- **Առցանց.** Այցելեք Health Net-ի կայքը: Անցեք [www.healthnet.com](http://www.healthnet.com) հղումով:

Եթե օգնության կարիք ունեք ձեր գանգատը լրացնելիս, մենք կարող ենք ձեզ օգնել: Մենք կարող են տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Ձեր գանգատը ստանալուց 5 օրվա ընթացքում մենք ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ այն ստացված է: 30 օրվա ընթացքում մենք կուղարկենք մեկ այլ նամակ, որը կտեղեկացնի, թե ինչպես է լուծվել ձեր խնդիրը: Եթե դուք զանգահարում եք Health Net բողոքի հետ կապված, որն առողջական խնամքի ապահովագրության, բժշկական տեսակետից անհրաժեշտության, փորձնական կամ հետազոտական բուժման մասին չէ, և ձեր բողոքը լուծվել է մինչև հաջորդ աշխատանքային օրը, դուք, հնարավոր է, նամակ չստանաք:

Եթե ցանկանում եք, որ մենք արագ որոշում կայացնենք, քանի որ գանգատը լուծելուն հատկացված ժամանակը վտանգի է ենթարկում ձեր կյանքը, առողջությունը կամ գործառնական կարողությունը, ապա կարող եք խնդրել արագացված (արագ) վերանայում: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով, և մենք որոշում կկայացնենք ձեր գանգատը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

## Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբերվում է գանգատից: Բողոքարկումը Health Net-ին ուղղված հայտ է՝ վերանայելու և փոխելու որոշումը, որը կայացվել է հայցված ծառայության ապահովագրության վերաբերյալ: Եթե մենք ուղարկել ենք Գործողության ծանուցագրի (NOA) նամակ, տեղեկացնելով ձեզ, որ մենք մերժում, հետաձգում, փոխում կամ ավարտում ենք ծառայությունը, և դուք համաձայն չեք մեր որոշման հետ, ապա կարող եք բողոքարկում ներկայացնել: Ձեր PCP-ն կամ այլ մատակարար նույնպես կարող է բողոքարկում ներկայացնել ձեր փոխարեն՝ ձեր գրավոր թույլտվությամբ:

Դուք պետք է բողոքարկում ներկայացնեք Health Net-ից NOA-ի ստացման ամսաթվից 60 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայումս բուժում եք ստանում և ցանկանում եք շարունակել ստանալ այդ բուժումը, ապա պետք է Health Net-ից բողոքարկում խնդրեք NOA-ի ձեզ առաքելու ամսաթվից 10 օրացուցային օրվա ընթացքում կամ նախքան այն ամսաթիվը, երբ Health Net-ը տեղեկացրել է ծառայությունների դադարեցման մասին: Երբ այս հանգամանքներում բողոքարկում եք հայցում, ձեր բուժումը կշարունակվի, եթե խնդրեք: Հնարավոր է, մենք խնդրենք ձեզ վճարել ծառայությունների համար, եթե վերջնական որոշումը մերժի կամ փոփոխի ծառայությունը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

Կարող եք բողոքարկում ներկայացնել հեռախոսով, գրավոր կամ առցանց.

- **Հեռախոսով.** Զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Տրամադրեք ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և ծառայությունը, որը բողոքարկում եք:
- **Փոստով.** Զանգահարեք Health Net 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով և խնդրեք ուղարկել ձեզ ձևաթուղթը: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Անպայման ներառեք ձեր անունը, առողջապահական ծրագրի ID համարը և ծառայությունը, որը բողոքարկում եք:

Ուղարկեք ձևաթուղթը հետևյալ հասցեով՝

Health Net Appeals & Grievances  
P.O. Box 10348  
Van Nuys, CA 91410-0348

Ձեր բժշկի գրասենյակը կունենա բողոքարկման ձևաթղթերը:

- **Առցանց.** Այցելեք Health Net-ի կայքը: Անցեք [www.healthnet.com](http://www.healthnet.com) հղումով:

Եթե օգնության կարիք ունեք ձեր բողոքարկումը լրացնելիս, մենք կարող ենք ձեզ օգնել: Մենք կարող են տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Ձեր բողոքարկումը ստանալուց 5 օրվա ընթացքում մենք ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ այն ստացված է: 30 օրվա ընթացքում մենք կտեղեկացնենք ձեզ բողոքարկման մեր որոշումը: Եթե Health Net-ը ձեզ բողոքարկման վերաբերյալ որոշում չի տալիս 30 օրվա ընթացքում, դուք կարող եք Նահանգային լսում կամ Անկախ բժշկական վերանայում խնդրել: Սակայն, եթե սկզբից Նահանգային լսում եք խնդրել, և այդ լսումն արդեն տեղի է ունեցել, ապա դուք չեք կարող IMR խնդրել:

Այս դեպքում վերջնական որոշումը կայացնում է Նահանգային լսումը:

Եթե դուք կամ ձեր բժիշկը ցանկանում եք, որ մենք արագ որոշում կայացնենք, քանի որ բողոքարկումը լուծելուն հատկացված ժամանակը վտանգի է ենթարկում ձեր կյանքը, առողջությունը կամ գործառնական կարողությունը, ապա կարող եք խնդրել արագացված (արագ) վերանայում: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք որոշում կկայացնենք՝ արդյոք արագացնել ձեր բողոքարկումը, թե ոչ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Ինչ անել, եթե համաձայն չեք բողոքարկման որոշման հետ

Եթե բողոքարկում եք ներկայացրել և Health Net-ից ստացել եք նամակ, որը տեղեկացնում է ձեզ, որ մենք չենք փոխել մեր որոշումը, կամ եթե մեր որոշման մասին նամակ չեք ստացել, և 30 օրն արդեն անցել է, դուք կարող եք.

- **Նահանգային լսում** խնդրել California-ի Սոցիալական ծառայությունների բաժանմունքից (CDSS), և դատավորը կուսումնասիրի ձեր գործը:
- Դուք կարող եք Անկախ բժշկական վերանայում/Գանգատ ներկայացնել Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունքին (DMHC), որպեսզի վերանայեն Health Net-ի որոշումը, կամ **Անկախ բժշկական վերանայում (IMR)** խնդրեք DMHC-ից: DMHC-ի IMR-ի ընթացքում Health Net-ի մաս չհանդիսացող բժիշկը կուսումնասիրի ձեր գործը: DMHC-ի անվճար հեռախոսահամարն է՝ 1-888-466-2219 և TDD գիծ՝ 1-877-688-9891: Կարող եք գտնել Անկախ բժշկական վերանայման/Գանգատի ձևաթուղթը և առցանց ցուցումներն առցանց՝ DMHC-ի [www.dmhca.gov](http://www.dmhca.gov) կայքում:

Դուք ոչինչ չեք վճարում Նահանգային լսման կամ IMR-ի համար:

Դուք իրավասու եք թե Նահանգային լսման, թե IMR-ի համար: Սակայն, եթե սկզբից Նահանգային լսում եք խնդրել, և այդ լսումն արդեն տեղի է ունեցել, ապա դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական որոշումը կայացնում է Նահանգային լսումը:

Ստորև բաժինները պարունակում են լրացուցիչ տեղեկություններ, թե ինչպես պետք է Նահանգային լսում և IMR խնդրել:

## Գանգատներ և Անկախ բժշկական վերանայումներ (IMR) Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունքի միջոցով

IMR է համարվում, երբ արտաքին բժիշկը, ով չի առնչվում ձեր առողջապահական ծրագրին, վերանայում է ձեր գործը: Եթե IMR եք ցանկանում, դուք պետք է սկզբից բողոքարկում ներկայացնեք Health Net-ին: Եթե պատասխան չեք ստանում ձեր առողջապահական ծրագրից 30 օրացուցային օրվա ընթացքում, կամ եթե դժգոհ եք առողջապահական ծրագրի որոշումից, կարող եք IMR խնդրել: Դուք պետք է IMR խնդրեք ձեզ բողոքարկման որոշման մասին տեղեկացնող ծանուցագրի ամսաթվից 6



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

ամսվա ընթացքում, սակայն ունեք միայն 120 օր Նահանգային լսում խնդրելու համար, հետևաբար եթե ցանկանում եք և IMR, և Նահանգային լսում, ապա ուղարկեք ձեր գանգատը որքան հնարավոր է շուտ: Հիշեք, որ եթե սկզբից Նահանգային լսում եք խնդրել, և այդ լսումն արդեն տեղի է ունեցել, ապա դուք չեք կարող IMR խնդրել: Այս դեպքում վերջնական որոշումը կայացնում է Նահանգային լսումը:

Հնարավոր է, որ կարողանաք IMR ստանալ անմիջապես՝ առանց սկզբից բողոքարկում ներկայացնելու: Սա արվում է այն դեպքերում, երբ ձեր առողջական խնդիրը հրատապ է:

Եթե ձեր գանգատը DMHC-ին չի որակավորվում IMR-ի համար, DMHC միևնույն է կվերանայի ձեր գանգատը՝ համոզվելու համար, որ Health Net-ը ճիշտ որոշում է կայացրել, երբ դուք բողոքարկել էիք ծառայությունների մերժումը: Health Net-ը պետք է ենթարկվի DMHC-ի IMR և վերանայման որոշումներին:

Ահա թե ինչպես IMR խնդրել: «Բողոք» տերմինը վերաբերվում է և «գանգատներին», և «բողոքարկումներին»:

California-ի Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունքը պատասխանատու է առողջական խնամքի ծառայության ծրագրերը կարգավորելու համար: Եթե ձեր առողջապահական ծրագրի դեմ բողոք ունեք, ապա, նախքան բաժին դիմելը, գանգահարեք ձեր առողջապահական ծրագրի 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով, և օգտագործեք ձեր առողջապահական ծրագրի բողոքի գործընթացը: Բողոքի այս գործընթացից օգտվելը չի խոչընդոտում, որպեսզի դուք օգտվեք նաև հնարավոր որևէ այլ իրավական իրավունքներից կամ միջոցներից: Եթե բողոք ներկայացնելու օգնության կարիք ունեք, որը կապված է արտակարգ իրավիճակի հետ, բողոք, որը բավարար կերպով չի լուծվել ձեր առողջապահական ծրագրի կողմից, կամ բողոք, որը չի լուծվել ավելի քան 30 օրվա ընթացքում, կարող եք գանգահարել բաժանմունք օգնության համար: Դուք կարող եք նաև իրավասու լինել Անկախ բժշկական վերանայման (IMR) համար: Եթե որակավորվում եք IMR համար, IMR գործընթացը կապահովի անկողմնակալ վերանայում այն բժշկական որոշումների, որոնք ընդունվել են առողջապահական ծրագրի կողմից՝ կապված առաջարկված ծառայության կամ բուժման բժշկական անհրաժեշտության հետ, ապահովագրության որոշումների այն բուժումների վերաբերյալ, որոնք փորձական են կամ հետազոտական բնույթի, ինչպես նաև վճարման հետ կապված վեճերի հրատապ կամ անհապաղ բժշկական ծառայությունների համար: Բաժանմունքն ունի նաև անվճար հեռախոսահամար (1-888-466-2219) և TDD գիծ (1-877-688-9891) լսողության և խոսքի խնդիրներ ունեցողների համար: Բաժանմունքի <http://www.dmhc.ca.gov> ինտերնետային կայքում կան գանգատի ձևաթղթեր, IMR դիմումի ձևաթղթեր և առցանց հրահանգներ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք California-ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Նահանգային լսումներ

Նահանգային լսումը California-ի Սոցիալական ծառայությունների բաժանմունքի (CDSS) ներկայացուցիչների հետ հանդիպումն է: Դատավորը կօգնի լուծել ձեր խնդիրը կամ կասի ձեզ, որ Health Net-ը ճիշտ որոշում էր կայացրել: Դուք իրավունք ունեք Նահանգային լսում խնդրել, եթե արդեն բողոքարկում եք ներակայացրել Health Net-ին, սակայն դեռ բավարարված չեք որոշմամբ կամ, եթե դուք չեք ստացել ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում 30 օրվա ընթացքում:

Դուք պետք է Նահանգային լսում խնդրեք ձեզ բողոքարկման որոշման մասին տեղեկացնող Health Net-ի ծանուցագրի ամսաթվից 120 օրվա ընթացքում: Ձեր PCP-ն կարող է խնդրել Նահանգային լսում ձեզ համար՝ ձեր գրավոր թույլտվությամբ:

Կարող եք Նահանգային լսում խնդրել հեռախոսով կամ փոստով:

- **Հեռախոսով.** Զանգահարեք CDSS-ի Հանրային պատասխանի բաժին 1-800-952-5253 (TTY/TDD 1-800-952-8349 կամ 711) հեռախոսահամարով:
- **Փոստով.** Լրացրեք ձեր բողոքարկման որոշման ծանուցագրի հետ ներկայացված ձևաթուղթը: Ուղարկեք այն հետևյալ հասցեով՝

California Department of Social Services  
State Hearings Division  
P.O. Box 944243, MS 09-17-37  
Sacramento, CA 94244-2430

Եթե օգնության կարիք ունեք Նահանգային լսում խնդրելու համար, մենք կարող ենք ձեզ օգնել: Մենք կարող են տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Զանգահարեք 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Լսման ընթացքում դուք կներկայացնեք ձեր տեսակետը: Մենք կներկայացնենք մեր կարծիքը: Ձեր գործի որոշման համար կարող է պահանջվել մինչև 90 օր: Health Net-ը պետք է հետևի դատավորի որոշմանը:

Եթե ցանկանում եք, որ CDSS-ն արագ որոշում կայացնի, քանի որ Նահանգային լսմանը հատկացված ժամանակը վտանգի է ենթարկում ձեր կյանքը, առողջությունը կամ գործառական կարողությունը, ապա դուք կամ ձեր PCP-ն կարող եք կապվել CDSS-ի հետ և խնդրել արագացված (արագ) Նահանգային լսում: CDSS-ը պետք է որոշում կայացնի ձեր գործի ամբողջական հայտը Health Net-ից ստանալուց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Խարդախություն, սպառում և չարաշահում

Եթե դուք կասկածում եք, որ մատակարարը կամ որևէ այլ անձ, ով ստանում է Medi-Cal, կատարել է խարդախություն, սպառում կամ չարաշահում, ապա դուք ունեք այն զեկուցելու իրավունք՝ զանգահարելով գաղտնի անվճար հեռախոսահամարով՝ 1-800-822-6222, կամ զանգատ ներկայացնելով առցանց՝ [www.dhcs.ca.gov/](http://www.dhcs.ca.gov/) կայքում:

Մատակարարի խարդախությունը, սպառումը և չարաշահումը ներառում են՝

- Բժշկական արձանագրությունների կեղծում
- Ավելի շատ դեղորայքի նշանակում, քան անհրաժեշտ է բժշկական տեսակետից
- Ավելի շատ առողջական խնամքի ծառայությունների տրամադրում, քան անհրաժեշտ է բժշկական տեսակետից
- Չմատուցված ծառայությունների համար հաշվի ներկայացում
- Մասնագիտական ծառայությունների համար հաշվի ներկայացում, երբ մասնագետը չի մատուցել ծառայությունը
- Անդամների անվճար կամ զեղչով պարագաների կամ ծառայությունների առաջարկում՝ անդամի կողմից մատակարարի ընտրության վրա ազդելու նպատակով
- Անդամի առաջնային խնամքի բժշկի փոփոխություն՝ առանց անդամի գիտելիքի

Նպաստներ ստացող անձի կողմից խարդախությունը, սպառումը և չարաշահումը ներառում են՝

- Առողջապահական ծրագրի ID քարտի կամ Medi-Cal Նպաստների նույնականացման քարտի (BIC) որևէ այլ անձի տրամադրումը, վաճառումը կամ փոխանցումը
- Մեկից ավելի մատակարարի կողմից նման կամ միևնույն բուժումների կամ դեղորայքի ստացումը
- Շտապ օգնության սենյակից օգտվելը, երբ արտակարգ իրավիճակ չկա
- Մեկ այլ անձի Սոցիալական ապահովության համարի կամ առողջապահական ծրագրի ID համարի օգտագործումը

Խարդախություն, սպառում և չարաշահում զեկուցելու համար գրեք այն անձի անունը, հասցեն և ID համարը, ով իրականացրել է խարդախություն, սպառում և չարաշահում: Որքան հնարավոր է շատ տեղեկություն տրամադրեք անձի մասին, օրինակ՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե նա մատակարար է: Տրամադրեք իրադարձությունների ամսաթվերը և ճշգրիտ կերպով հակիրճ ներկայացրեք տեղի ունեցածը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



Ուղարկեք ձեր զեկույցը հետևյալ հասցեով՝

Special Investigations Unit  
1370 Timberlake Manor Parkway  
Chesterfield, MO 63017  
1-866-685-8664



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

---

# 7. Կարևոր հեռախոսահամարներ և բառեր, որոնք պետք է իմանալ

---

## Կարևոր հեռախոսահամարներ

- Health Net-ի Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711)
- Ծառայություններ հաշմանդամների համար
  - Կայք՝ <https://www.ada.gov/>
  - California-ի հեռախոսականչի փոխանցման ծառայություն (CRS)՝ TTY/TDD՝ 711
  - Sprint 1-888-877-5379 (ձայնային)
  - MCI 1-800-735-2922 (ձայնային)
  - Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին ակտի (ADA) տեղեկատու գիծ՝ 1-800-514-0301 (ձայնային), 1-800-514-0383 (TDD)
- Երեխաների ծառայություններ (CCS ծրագիր)
  - Կայք՝ <https://www.dhcs.ca.gov/services>
  - Kern վարչաշրջան՝ 1-661-868-0504
  - Los Angeles վարչաշրջան՝ 1-800-288-4584
  - Sacramento վարչաշրջան՝ 1-916-875-9900



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- San Diego վարչաշրջան՝ 1-619-528-4000
- San Joaquin վարչաշրջան՝ 1-209-468-3900
- Stanislaus վարչաշրջան՝ 1-209-558-7515
- Tulare վարչաշրջան՝ 1-559-685-5800
- **Երեխայի առողջություն և հաշմանդամության կանխում (CHDP) ծրագիր**
  - Կայք՝ <https://www.dhcs.ca.gov/services/chdp>
  - Kern վարչաշրջան՝ 1-661-321-3000
  - Los Angeles վարչաշրջան՝ 1-800-993-2437
  - Sacramento վարչաշրջան՝ 1-916-875-7151
  - San Diego վարչաշրջան՝ 1-619-692-8808
  - San Joaquin վարչաշրջան՝ 1-209-468-8335
  - Stanislaus վարչաշրջան՝ 1-209-558-8860
  - Tulare վարչաշրջան՝ 1-559-687-6915
- **California-ի նահանգային ծառայություններ**
  - DHCS Օմբուդսմենի գրասենյակ՝ 1-888-452-8609  
(կայք՝ <https://www.dhcs.ca.gov/services/MH/Pages/MH-Ombudsman.aspx>)
  - Սոցիալական ծառայությունների բաժանմունք՝ 1-800-952-5253  
(TDD՝ 1-800-952-8349) (կայք՝ <https://www.cdss.ca.gov/county-offices>)
  - Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունք (DMHC)  
1-888-466-2219 (1-888-HMO-2219) (կայք՝ <http://dmhc.ca.gov/>)
- **Սոցիալական ապահովության վարչություն**
  - Հավելյալ ապահովության եկամուտ (SSI)՝ 1-800-772-1213  
(TTY/TDD՝ 1-800-325-0778)
  - Կայք՝ <https://www.ssa.gov/>
- **Վարչաշրջանի գրասենյակներ**
  - Կայք՝ <http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx>
  - Հոգեկան առողջության կայք՝  
<https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>
  - **Kern վարչաշրջան**
    - Մարդու ծառայությունների բաժանմունք՝ 1-661-631-6807
    - Հոգեկան առողջության ծառայություններ՝ 1-800-991-5272



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110  
(TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:  
Կամ զանգահարեք California-ի հեռախոսականի փոխանցման հեռախոսագծին  
711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- **Los Angeles վարչաշրջան**
  - Հասարակական սոցիալական ծառայությունների բաժանմունք (DPSS)
  - Կենտրոնական օգնության գիծ (ներառում է լեզվական ծառայությունները)՝ 1-877-481-1044
  - DPSS Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-866-613-3777, 1-310-258-7400
  - Los Angeles վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժանմունք՝ 1-800-854-7771
- **Sacramento վարչաշրջան**
  - Մարդու օգնության բաժանմունք՝ 1-916-874-3100
  - Առողջապահության և մարդու ծառայությունների բաժանմունք (Հոգեկան առողջություն)՝ 1-888-881-4881
- **San Diego վարչաշրջան**
  - Առողջապահության և մարդու ծառայությունների բաժանմունք՝ 1-866-262-9881
  - San Diego-ի Վարքագծային առողջության ենթաբաժին՝ 1-888-724-7240
- **San Joaquin վարչաշրջան**
  - Հասարակական առողջության բաժանմունք՝ 1-209-468-3400
  - Վարքագծային առողջություն՝ 1-888-468-9370
  - Մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-209-468-1000
- **Stanislaus վարչաշրջան**
  - Համայնքային ծառայությունների գործակալություն՝ 1-877-652-0734
  - Վարքագծային առողջության և վերականգնողական ծառայություններ՝ 1-888-376-6246
- **Tulare վարչաշրջան**
  - Առողջապահության և մարդու ծառայությունների գործակալություն՝ 1-800-540-6880
  - Հոգեկան առողջության բաժանմունք՝ 1-800-320-1616



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

## Բառեր, որոնք պետք է իմանալ

**Երկունք.** Ժամանակահատված, երբ կլինը ծննդաբերության երեք փուլերում է, և կամ չի կարող անվտանգ կերպով ժամանակին տեղափոխվել մեկ այլ հիվանդանոց նախքան ծննդաբերությունը, կամ տեղախոխումը կարող է ազդել կնոջ կամ դեռ չնված երեխայի առողջության և անվտանգության վրա:

**Սուր.** Բժշկական վիճակ, որն անսպասելի է, պահանջում է արագ բժշկական ուշադրություն և չի տևում երկար ժամանակ:

**Ամերիկյան հնդկացի.** Անհատ՝ ինչպես հասմանված է U.S.C.-ի գլուխ 25-ում, հատվածներ 1603(c), 1603(f): 1679(b), կամ ով իրավասու է համարվում՝ որպես հնդկացի, համաձայն Հնդկացիների առողջական խնամքի բարելավման ակտի 42 C.F.R. 136.12-ի կամ Գլուխ V-ի, ստանալու առողջական խնամքի ծառայություններ հնդկացի առողջական խնամքի մատակարարներից (Հնդկացիների առողջապահական ծառայություն, հնդկացիների տոհմ, տոհմական կազմակերպություն կամ քաղաքային հնդկացիների կազմակերպություն՝ I/T/U) կամ ուղեգրի միջոցով Պայմանագրային առողջական ծառայությունների ներքո:

**Բողոքարկում.** անդամի կողմից Health Net-ին ուղղված հայտ՝ վերանայելու և փոխելու որոշումը, որը կայացվել է հայցված ծառայության ապահովագրության վերաբերյալ:

**Նպաստներ.** առողջական խնամքի ծառայություններ և դեղեր, որոնք ապահովագրված են այս առողջապահական ծրագրով:

**California-ի Երեխաների ծառայություններ (CCS).** Medi-Cal ծրագիր, որը տրամադրում է ծառայություններ որոշակի հիվանդություններ և առողջական խնդիրներ ունեցող մինչև 21 տարեկան երեխաներին:

**California-ի Առողջության և հաշմանդամության կանխում (CHDP).** հանրային առողջապահական ծրագիր, որը փոխհատուցում է հանրային և մասնավոր առողջական խնամքի մատակարարներին առողջության վաղ գնահատումների համար՝ հայտնաբերելու կամ կանխարգելելու երեխաների և երիտասարդների հիվանդությունները և անկարողությունները: Ծրագիրն աջակցում է երեխաներին և երիտասարդներին ստանալ կանոնավոր առողջական խնամք: Ձեր PCP-ն կարող է տրամադրել CHDP ծառայությունները:

**Գործի կառավարիչ.** գրանցված բուժքույրեր կամ սոցիալական աշխատողներ, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ հիմնական առողջական խնդիրները և կազմակերպել խնամքը ձեր մատակարարների հետ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսական չի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Վկայագրված մանկաբարձ-բուժքույր (CNM).** անձ, ով լիցենզավորվել է որպես Գրանցված բուժքույր և հավաստագրված բուժքույր-մանկաբարձ California-ի գրանցված բուժքույրերի խորհրդի կողմից: Հավաստագրված բուժքույր-մանկաբարձին թույլ է տրվում մասնակցել նորմալ ծննդաբերությանը:

**Քիրոպրակտիկտոր.** Ողնաշարը մանուալ թերապիայի միջոցով բուժող մատակարար:

**Քրոնիկական վիճակ.** հիվանդություն կամ այլ բժշկական խնդիր, որն ամբողջովին չի կարող բուժվել կամ որը ժամանակի ընթացքում վատթարանում է, կամ պահանջում է բուժում, որպեսզի ձեր վիճակը չբարդանա:

**Կլինիկա.** հաստատություն, որն անդամները կարող են ընտրել որպես իրենց առաջնային խնամքի մատակարար (PCP): Այն կարող է լինել Դաշնային որակավորված առողջապահական կենտրոն (FQHC), համայնքային կլինիկա, Գյուղական առողջական կլինիկա (RHC), Հնդկացիների առողջական կլինիկա (IHC) կամ առաջնային խնամքի այլ հաստատություն:

**Չափահասների համայնքահեն ծառայություններ (CBAS).** ամբուլատոր, հաստատությունում տրվող ծառայություններ հմուտ բուժքույրական խնամքի, սոցիալական ծառայությունների, թերապիաների, անձնական խնամքի, ընտանիքների/խնամակալների ուսուցման և աջակցության, սնուցման ծառայությունների, փոխադրման և այլ ծառայություններ անդամների համար, որոնք որակավորվում են:

**Գանգատ.** Անդամի բանավոր կամ գրավոր անբավարարվածության արտահայտումը Health Net-ի, մատակարարի կամ մատուցված ծառայությունների որակի վերաբերյալ: Գանգատը և բողոքը նույնն են:

**Խնամքի շարունակականություն.** ծրագրի անդամի կարողությունը շարունակել ստանալ Medi-Cal ծառայություններ իրենց գոյություն ունեցող մատակարարից մինչև 12 ամիս, եթե մատակարարը և Health Net-ը համաձայնվում են:

**Նպաստների համակարգում (COB).** որոշման գործընթացը, թե որ ապահովագրական ծածկույթը (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտականություններ առողջության ապահովագրության մեկից ավելի տեսակի ծածկույթ ունեցող անդամների համար:

**Համավճար.** ձեր կողմից արվող վճարում, սովորաբար ծառայության ժամանակ, ի լրումն ապահովագրողի վճարների:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Ապահովագրություն (ապահովագրված ծառայություններ).** առողջական խնամքի ծառայությունները, որոնք տրամադրվում են Health Net-ի անդամներին, ենթակա են Medi-Cal-ի պայմանագրի, ինչպես նաև այս Ապահովագրության ապացույցի (EOC) և որևէ փոփոխությունների դրույթներին, պայմաններին, սահմանափակումներին և բացառություններին:

**DHCS.** California-ի Առողջական խնամքի ծառայությունների բաժին: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է Medi-Cal ծրագիրը:

**Անդամակցության դադարեցում.** այս առողջապահական ծրագրի օգտագործման դադարեցումը, քանի որ դուք այլևս չեք որակավորվում կամ փոխում եք նոր առողջապահական ծրագրի: Դուք պետք է ստորագրեք ձևաթուղթ, որտեղ նշվում է, որը դուք այլևս չեք ցանկանում օգտագործել այս առողջապահական ծրագիրը կամ զանգահարել HCO և դադարեցնել անդամակցությունը հեռախոսով:

**DMHC.** California-ի Ղեկավարվող առողջական խնամքի բաժանմունք: Սա Նահանգային գրասենյակն է, որը վերահսկում է ղեկավարվող խնամքի առողջապահական ծրագիրը:

**Տեսական օգտագործման բժշկական սարքավորում (DME).** բժշկական տեսակետից անհրաժեշտ սարքավորում, որը պատվիրվում է ձեր բժշկի կամ այլ մատակարարի կողմից: Health Net-ը որոշում է՝ արդյոք վարձակալել, թե գնել DME: Վարձակալման գները չպետք է բարձր լինեն գնման գնից: Բժշկական սարքավորման վերանորոգումը ապահովագրվում է:

**Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում (EPSDT).** EPSDT ծառայությունները նպաստ են Medi-Cal-ի 21 տարեկանից փոքր անդամների համար՝ նրանց առողջ պահելու համար: Անդամները պետք է ստանան իրենց տարիքին համապատասխան ճիշտ առողջական ստուգումները և պատշաճ սքրինինգները՝ բացահայտելու առողջական խնդիրները և բուժելու հիվանդությունները վաղ ժամկետում:

**Արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ.** բժշկական կամ հոգեբուժական վիճակ այնպիսի սաստիկ ախտանիշներով, ինչպիսիք են՝ ակտիվ երկունքը (տեսեք սահմանումը վերևում) կամ սաստիկ ցավերը, երբ ողջամիտ որևէ մեկը ոչ մասնագետի առողջության և բժշկության վերաբերյալ միջին գիտելիքներով կարող է ակնկալել, որ եթե դուք անմիջապես բժշկական խնամք չստանաք, ապա՝

- Կարող է լրջորեն վնասվել ձեր կամ ձեր դեռ չծնված երեխայի առողջությունը
- Կարող է առաջացնել մարմնի գործառույթի զգալի խանգարում
- Կարող է առաջացնել մարմնի մասի կամ օրգանի սխալ աշխատանք



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Շտապ օգնության սենյակի խնամք.** բժշկի (կամ համաձայն օրենքի բժշկի վերահսկողությամբ անձնակազմը) կողմից կատարվող ստուգում, բացահայտելու՝ արդյոք առկա է արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ: Բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայությունները պետք է կարգավորեն ձեր վիճակը կլինիկորեն կայուն՝ հաստատության կարողությունների սահմաններում:

**Շտապ օգնության բժշկական փոխադրում.** փոխադրում շտապ օգնությամբ կամ արտակարգ իրավիճակի փոխադրամիջոցով շտապ օգնության սենյակ՝ արտակարգ իրավիճակի բժշկական խնամք ստանալու համար:

**Անդամագրված անձ.** անձ, ով առողջապահական ծրագրի անդամ է և ստանում է ծառայություններ ծրագրի միջոցով:

**Չներառված ծառայություններ.** ծառայություններ, որոնք ապահովագրված չեն California-ի Medi-Cal ծրագրով:

**Ընտանիքի պլանավորման ծառայություններ.** հղիության կանխարգելման կամ հետաձգման ծառայություններ:

**Դաշնային որակավորված առողջական կենտրոն (FQHC).** առողջական կենտրոն այնպիսի տարածքում, որը չունի շատ առողջական խնամքի ծառայություններ: FQHC-ում կարող եք ստանալ հիմնական և կանխարգելիչ խնամք:

**Վճար ծառայության դիմաց (FFS) Medi-Cal.** սա նշանակում է, որ անդամագրված չեք դեկավարվող խնամքի առողջապահական ծրագրին: FFS-ի դեպքում ձեր բժիշկը պետք է ընդունի «ուղիղ» Medi-Cal և ուղղակիորեն Medi-Cal-ին հաշիվ ներկայացնի ձեզ տրամադրած ծառայությունների համար:

**Հետբուժական խնամք.** ընթացիկ բժշկական խնամք՝ ստուգելու հիվանդի բարելավումը հոսպիտալացումից հետո կամ բուժման ընթացքում:

**Դեղացանկ.** դեղերի կամ պարագաների ցանկ, որոնք համապատասխանում են որոշակի չափանիշների և հաստատված են անդամների համար:

**Խարդախություն.** անձի կողմից՝ խաբելու կամ սխալ ներկայացնելու կանխամտածված գործողություն, ով տեղյակ է, որ խաբեությունը կարող է առաջաջացնել որոշ չլիազորված նպաստ անձի կամ որևէ մեկի համար:

**Անկախ ծննդատներ (FBC).** առողջապահական հաստատություններ, որտեղ երեխայի ծնունդը պլանավորված է տեղի ունենալ հղի կնոջ բնակության վայրից հեռու, որոնք լիցենզավորված են կամ որևէ այլ կերպ հաստատված նահանգի կողմից՝ տրամադրելու նախածննդյան երկունքի և ծննդաբերության կամ հետծննդաբերական խնամք և այլ ամբուլատոր ծառայություններ, որոնք ներառված են ծրագրում: Այս հաստատությունները հիվանդանոց չեն:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



**Բողոք.** անդամի բանավոր կամ գրավոր անբավարարվածության արտահայտումը Health Net-ի, մատակարարի կամ մատուցված ծառայությունների վերաբերյալ: Գանգատը բողոքի օրինակ է:

**Վերականգնողական ծառայություններ և սարքեր.** առողջական խնամքի ծառայություններ, որոնք օգնում են ձեզ պահպանել, սովորել կամ բարելավել կարողությունները և ամենօրյա կյանքի գործառնությունը:

**Առողջական խնամքի ընտրանքներ (HCO).** ծրագիր, որը կարող է անդամագրել կամ դադարեցնել ձեր անդամագրումն առողջապահական ծրագրին:

**Առողջական խնամքի մատակարարներ.** բժիշկներ և մասնագետներ, օրինակ՝ վիրաբույժներ, բժիշկներ, որոնք բուժում են քաղցկեղը, կամ բժիշկներ, որոնք բուժում են մարմնի որոշ մասերը, և որոնք համագործակցում են Health Net-ի հետ կամ հանդիսանում են Health Net-ի ցանցի մաս: Health Net-ի ցանցի մատակարարները պետք է ունենան վկայագիր աշխատելու California-ում և ձեզ տրամադրելու Health Net-ի կողմից ապահովագրված ծառայությունները:

Սովորաբար, մասնագետին այցելելու համար անհրաժեշտ է ձեր PCP-ի ուղեգիրը: Ձեր PCP-ն պետք է ստանա նախնական հաստատում Health Net-ից, նախքան դուք կկարողանաք ստանալ խնամք մասնագետից:

Ձեզ PCP-ի ուղեգիր հարկավոր չէ որոշակի ծառայությունների համար, օրինակ՝ ընտանիքի պլանավորման, արտակարգ իրավիճակի խնամքի, մանկաբարձ/գինեկոլոգի խնամքի կամ զգայուն ծառայությունների համար:

Առողջական խնամքի մատակարարների տեսակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- Օտոլարինգոլոգը մատակարար է, ով ստուգում է լսողությունը:
- Վկայագրված մանկաբարձ-բուժքույրը բուժքույր է, ով խնամք է մատուցում ձեզ հղիության և ծննդաբերության ընթացքում:
- Ընտանեկան պրակտիկայի բժիշկն այն բժիշկն է, ով բուժում է ընդհանուր բժշկական խնդիրներ բոլոր տարիքի անձանց համար:
- Ընդհանուր պրակտիկայի բժիշկն այն բժիշկն է, ով բուժում է ընդհանուր բժշկական խնդիրները:
- Ներքին հիվանդությունների բժիշկն այն բժիշկն է, ով բուժում է չափահասների ընդհանուր բժշկական խնդիրները:
- Վկայագրված մասնագիտացված բուժքույրը վկայագրված բուժքույր է, ով աշխատում է ձեր բժշկի հետ:
- Խորհրդատուն այն անձն է, որն օգնում է ձեզ ընտանեկան խնդիրների վերաբերյալ:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

- Բժշկական օգնական կամ հավաստագրված բժշկական օգնականը չվկայագրված անձ է, ով օգնում է ձեր բժիշկներին տրամադրել ձեզ բժշկական խնամք:
- Միջին մակարդակի պրակտիկ բժիշկն օգտագործվում է առողջական խնամքի մատակարարների համար, օրինակ՝ բուժքույր-մանկաբարձերը, բժշկի օգնականները կամ պրակտիկ բուժքույրերը:
- Բուժքույր-անեսթեզիոլոգն այն բուժքույրն է, ով տալիս է ձեզ անեսթեզիա:
- Պրակտիկ բուժքույրը կամ բժշկի օգնականն այն անձն է, ով աշխատում է կլինիկայում կամ բժշկի գրասենյակում, ով ախտորոշում, բուժում և խնամում է ձեզ, իր իրավասությունների շրջանակում:
- Մանկաբարձ/գինեկոլոգն (ob/gyn) այն բժիշկն է, ով խնամք է տանում կանանց առողջության համար, ներառյալ՝ հղիության և ծննդաբերության ընթացքում:
- Աշխատանքային թերապևտը մատակարար է, ով օգնում է ձեզ վերականգնել ամենօրյա կարողությունները և գործողությունները հիվանդությունից կամ վնասվածքից հետո:
- Մանկաբույժը բժիշկ է, ով բուժում է երեխաներին ծնվելուց մինչև պատանեկություն:
- Ֆիզիկական թերապևտը մատակարար է, ով օգնում է ձեզ վերականգնել մարմնի ուժը հիվանդությունից կամ վնասվածքից հետո:
- Ոտնաբույժն այն բժիշկն է, ով հոգ է տանում ձեր ոտքերի համար:
- Հոգեբանն այն անձն է, ով բուժում է հոգեկան առողջության խնդիրները, սակայն չի նշանակում դեղորայք:
- Գրանցված բուժքույրն այն բուժքույրն է, ով ունի ավելի շատ վերապատրաստում, քան մասնագիտացված բուժքույրը, և ով ունի վկայագիր իրականացնելու որոշակի գործողություններ ձեր բժշկի հետ:
- Շնչառական թերապևտը մատակարար է, ով օգնում է ձեզ շնչառության հետ կապված խնդիրներում:
- Խոսքի պաթոլոգը մատակարար է, ով օգնում է ձեզ խոսքի հետ կապված խնդիրներում:

**Առողջական ապահովագրություն.** ապահովագրական ծածկույթ, որը վճարում է բժշկական և վիրաբուժական ծախսերի համար՝ ապահովագրված անձին հետ փոխանցելով հիվանդության կամ վնասվածքի ծախսերը կամ ուղղակիորեն վճարելով խնամքի մատակարարին:

**Տանը մատուցվող առողջական խնամք.** հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ, որոնք մատուցվում են տանը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Տանը մատուցվող առողջական խնամքի մատակարարներ.** մատակարարներ, որոնք տրամադրում են ձեզ հմուտ բուժքույրական խնամք և այլ ծառայություններ տանը:

**Անբուժելի հիվանդների խնամքի հաստատություն.** մահացու հիվանդություն ունեցող անդամի ֆիզիկական, զգացմունքային, սոցիալական և հոգևոր անհարմարությունները նվազեցնելու համար խնամք: Անբուժելի հիվանդների խնամքը մատչելի է, երբ անդամի կյանքին մնացել է 6 ամիս կամ ավելի քիչ:

**Հիվանդանոց.** վայր, որտեղ դուք ստանում եք ստացիոնար և ամբուլատոր խնամք բժիշկներից կամ բուժքույրերից:

**Հոսպիտալացում.** որպես ստացիոնար հիվանդ բուժման համար հիվանդանոց ընդունում:

**Հիվանդանոցի ամբուլատոր խնամք.** բժշկական կամ վիրաբուժական խնամք, որն իրականացվում է հիվանդանոցում առանց որպես ստացիոնար հիվանդ ընդունման:

**Հնդկացիների առողջական կլինիկա (IHC).** Առողջական կլինիկա, որն աշխատացվում է Հնդկացիների առողջապահական ծառայության (IHS) կամ հնդկացիների տոհմի, տոհմական կազմակերպության կամ քաղաքային հնդկացիների կազմակերպության կողմից:

**Ստացիոնար խնամք.** երբ ստիպված եք մնալ գիշերը հիվանդանոցում կամ որևէ այլ վայրում՝ ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

**Երկարատև խնամք.** խնամք հաստատությունում՝ ընդունումից մեկ ամիս ավելի տևողությամբ:

**Ղեկավարվող խնամքի ծրագիր.** Medi-Cal ծրագիր, որն օգտագործում է միայն որոշակի բժիշկներ, մասնագետներ, կլինիկաներ, դեղատներ և հիվանդանոցներ՝ տվյալ ծրագրում անդամագրված Medi-Cal նպաստառուների համար: Health Net-ը ղեկավարվող խնամքի ծրագիր է:

**Բժշկական տուն.** խնամքի մոդել, որը կտրամադրի ավելի լավ առողջական խնամքի որակ, կբարելավի անդամների իրենց սեփական խնամքի ինքնուրույն կառավարումը և կնվազեցնի խուսափելի ծախսերը ժամանակը ընթացքում:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Բժշկական տեսակետից անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն).**

բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքը կարևոր ծառայություններ են, որոնք խելամիտ են և պաշտպանում են կյանքը: Այս խնամքն անհրաժեշտ է՝ հիվանդներին լուրջ հիվանդությունից կամ վնասվածքից հեռու պահելու համար: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավը՝ բուժելով հիվանդությունը, հիվանդությունը կամ վնասվածքը: 21 տարեկանից փոքր անդամների համար Medi-Cal-ի ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է՝ ֆիքսելու կամ օգնելու ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ իրավիճակը, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործման խանգարումները՝ ինչպես սահմանված է Միացյալ Նահանգների օրենսդրության Բաժին 1396d(r) Գլուխ 42-ում:

**Medicare.** դաշնային առողջապահական ապահովագրության ծրագիր 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի մարդկանց համար, որոշակի հաշմանդամություն ունեցող ավելի երիտարդների համար, ինչպես նաև վերջին փուլում գտնվող երիկամային հիվանդություն ունեցող մարդկանց համար (երիկամների աշխատանքի մշտական խանգարում, որը դիալիզ է պահանջում կամ փոխպատվաստում, երբեմն կոչվում է ESRD):

**Անդամ.** Իրավասու Medi-Cal անդամ, ով անդամագրված է Health Net-ին և իրավասու է ստանալ ապահովագրված ծառայություններ:

**Հոգեկան առողջության ծառայությունների մատակարար.** վկայագրված անհատներ, որոնք տրամադրում են հոգեկան առողջության և վարքագծային առողջության ծառայություններ հիվանդներին:

**Մանկաբարձի ծառայություններ.** նախածննդյան, ներծննդաբերական և հետծննդաբերական խնամքի միջոցները, ներառյալ՝ ընտանիքի պլանավորման խնամքը մոր և նորածնի անհապաղ խնամքի համար, որը տրամադրվում է վկայագրված մանկաբարձ-բուժքույրերի (CNM) և լիցենզավորված մանկաբարձերի կողմից (LM):

**Ցանց.** Health Net-ի հետ պայմանագիր ունեցող բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և այլ մատակարարների խումբ:

**Ցանցի մատակարար (կամ ներցանցային մատակարար).** անցեք «Մասնակցող մատակարար»:

**Չապահովագրված ծառայություն.** ծառայություն, որը Health Net-ը չի ապահովագրում:

**Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրում (NEMT).** Փոխադրում, երբ չեք կարող ապահովագրված բժշկական այցելության և/կամ դեղատոմսը վերցնելու համար գնալ մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով: Health Net-ը վճարում է ամենաէժան NEMT-ը ձեր բժշկական կարիքների համար, երբ ձեզ հարկաբարձոր է հասնել ձեր ժամադրության վայրը:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Ղեղացանկում չընդգրկված դեղեր.** դեղերի ցանկում չներառված դեղ:

**Ոչ բժշկական փոխադրում.** փոխադրում, երբ ուղևորվում և վերադառնում եք այցելությունից Medi-Cal-ի կողմից ապահովագրված ծառայության համար, որը լիազորվել է ձեր մատակարարի կողմից, և երբ գնում եք դեղատոմսեր կամ բժշկական պարագաներ վերցնելու համար:

**Զմասնակցող մատակարար.** Health Net-ի ցանցում չգտնվող մատակարար:

**Այլ առողջական ապահովագրություն (OHC).** այլ առողջական ապահովագրություն (OHC) նշանակում է մասնավոր առողջական ապահովագրություն և ծառայության համար վճարողներ, բացի Medi-Cal-ից: Ծառայությունները կարող են ներառել բժշկական, ատամնաբուժական, տեսողական, դեղատնային և/կամ Medicare-ի հավելյալ ծրագրեր (Մաս C և D):

**Օրթեգային սարք.** որպես հենակ կամ նեցուկ օգտագործվող սարք, որն արտաքինից ամրացվում է մարմնին՝ աջակցելու կամ ուղղելու խիստ վնասված կամ հիվանդ մարմնի մասը, և որը բժշկական տեսակետից անհրաժեշտ է անդամի բժշկական վերականգնման համար:

**Սպասարկման տարածքից դուրս ծառայություններ.** ծառայություններ, երբ անդամը գտնվում է սպասարկման տարածքից դուրս որևէ այլ վայրում:

**Արտացանցային մատակարար.** Health Net-ի ցանցի մաս չկազմող մատակարար:

**Ամբուլատոր խնամք.** երբ ստիպված չեք մնալ գիշերը հիվանդանոցում կամ որևէ այլ վայրում ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար:

**Հոգեկան առողջության ամբուլատոր ծառայություններ.** ամբուլատոր ծառայություններ անդամների համար թեթևից մինչև միջին ծանրության հոգեկան առողջության վիճակները բուժելու համար, ներառյալ՝

- Անհատական կամ խմբակային հոգեկան առողջության գնահատում և բուժում (հոգեթերապիա)
- Հոգեբանական ստուգում, երբ կլինիկապես նպատակահարմար է հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
- Ամբուլատոր ծառայություններ դեղորայքային թերապիային հետևելու նպատակով
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Ամբուլատոր լաբորատոր անալիզներ, պաշարներ և հավելումներ

**Պալիատիվ խնամք.** լուրջ հիվանդություն ունեցող անդամի ֆիզիկական, զգացմունքային, սոցիալական և հոգևոր անհարմարությունները նվազեցնելու համար խնամք:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Մասնակից հիվանդանոց.** վկայագրված հիվանդանոց, որն ունի պայմանագիր Health Net-ի հետ տրամադրելու ծառայություններ անդամներին, երբ անդամը խնամք է ստանում: Ապահովագրված ծառայություններ, որոնք որոշ մասնակից հիվանդանոցներ կարող են առաջարկել անդամներին, սահմանափակված են Health Net-ի օգտագործելի դիտարկային և որակի ապահովման քաղաքականություններով կամ հիվանդանոցի հետ Health Net-ի պայմանագրով:

**Մասնակցող մատակարար (կամ մասնակցող բժիշկ).** բժիշկ, հիվանդանոց կամ այլ վկայագրված առողջական խնամքի մասնագետ կամ վկայագրված առողջապահական հաստատություն, ներառյալ՝ ենթասուր հաստատություններ, որոնք պայմանագիր ունեն Health Net-ի հետ տրամադրելու ապահովագրված ծառայություններ անդամներին, երբ անդամը խնամք է ստանում:

**Բժշկի ծառայություններ.** ծառայություններ, որոնք մատուցվում են անձի կողմից, ով վկայագրված է դաշնային օրենքով և կարող է մատուցել բժշկական ծառայություններ կամ օսթեոպատիա, բացառությամբ ծառայությունների, որոնք առաջարկվում են բժիշկների կողմից, երբ դուք ընդունվում եք հիվանդանոց և որոնք գանձվում են հիվանդանոցի հաշվով:

**Ծրագիր.** անցեք «Ղեկավարվող խնամքի ծրագիր»:

**Հետ-կայունացման ծառայություններ.** ապահովագրված ծառայություններ, որոնք առնչվում են արտակարգ իրավիճակի բժշկական վիճակին, որոնք տրամադրվում են անդամին կայունացնելուց հետո՝ այդ կայուն վիճակը պահպանելու նպատակով: Հետ-կայունացման ծառայություններն ապահովագրվում են և վճարվում են:

**Նախնական հաստատում (կամ նախօրոք լիազորում).** ձեր PCP-ն կամ այլ մատակարարներ պետք է ստանան նախնական հաստատում Health Net-ից, նախքան դուք կկարողանաք ստանալ որոշակի ծառայություններ: Health Net-ը միայն կհաստատի ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Health Net-ը չի հաստատի չմասնակցող մատակարարի կողմից մատուցված ծառայությունները, եթե Health Net-ը գտնում է, որ դուք կարող եք ստանալ համեմատելի կամ ավելի համապատասխան ծառայություններ Health Net-ի մատակարարների միջոցով: Ուղեգիրը հաստատում չէ: Դուք պետք է ստանաք հաստատում Health Net-ից:

**Դեղատոմսային դեղի ապահովագրություն.** մատակարարի կողմից նշանակված դեղորայքի ապահովագրություն:

**Դեղատոմսային դեղեր.** դեղ, որի բաց թողնման համար պահանջվում է արտոնագրված մատակարարի հրաման, ի տարբերություն առանց դեղատոմսի վաճառվող (OTC) դեղերի, որոնք չեն պահանջում դեղատոմս:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Առաջնային խնամք.** անցեք «Ընթացիկ խնամք»:

**Առաջնային խնամքի մատակարար (PCP).** արտոնագրված մատակարար, ում դուք դիմում եք ձեր առողջական խնամքի մեծ մասի դեպքում: Ձեր PCP-ն օգնում է, որպեսզի ստանաք ձեզ անհրաժեշտ խնամքը: Որոշ խնամք նախ պահանջում է հաստատում, եթե առկա չէ հետևյալը՝

- Արտակարգ իրավիճակում ունեք
- Մանկաբարձ/գինեկոլոգի խնամքի կարիք ունեք
- Զգայուն ծառայությունների կարիք ունեք
- Ընտանիքի պլանավորման/հակաբեղմնավորման կարիք ունեք

Ձեր PCP-ն կարող է լինել՝

- Ընդհանուր պրակտիկայի բժիշկ
- Ներգատաբան
- Մանկաբույժ
- Ընտանեկան պրակտիկայի բժիշկ
- Մանկաբարձ/գինեկոլոգ
- Հնդկացիների առողջական կլինիկա (IHC)
- Դաշնային որակավորված առողջական կենտրոն (FQHC)
- Գյուղական առողջական կլինիկա (RHC)
- Պրակտիկ բուժքույր
- Օգնական բժիշկ
- Կլինիկա

**Նախօրոք լիազորում (նախնական հաստատում).** պաշտոնական գործընթաց, որն առողջական խնամքի մատակարարից պահանջում է ստանալ հաստատում որոշ ծառայությունների կամ ընթացակարգերի տրամադրման համար:

**Պրոթեզային սարքեր.** արհեստական սարք, որն ամրացվում է մարմնին՝ մարմնի բացակայող մասը փոխարինելու համար:

**Մատակարարների հասցեագիրք.** Health Net-ի ցանցի մատակարարների ցանկը:

**Հոգեբուժական արտակարգ իրավիճակի բժշկական վիճակ.** հոգեկան խանգարում, երբ ախտանիշները լուրջ են կամ բավականին ծանր, որպեսզի առաջացնեն ուղղակի վտանգ ձեր կամ ուրիշների կյանքի համար, կամ դուք ուղադկիրդեն անկարող եք տրամադրել կամ օգտագործել սնունդ, կացարան կամ հագուստ հոգեկան խանգարման պատճառով:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

**Հանրային առողջապահական ծառայություններ.** ամբողջ բնակչությանն ուղղված առողջապահական ծառայություններ: Սրանք ներառում են, ի թիվս այլոց, առողջական իրավիճակի վերլուծություն, առողջապահական հսկողություն, առողջության խթանումը, կանխարգելիչ ծառայություններ, վարակիչ հիվանդությունների հսկողություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և սանիտարական գործողություններ, աղետների պատրաստվածություն և դիմակայում և մասնագիտական առողջություն:

**Որակավորված մատակարար.** պրակտիկ ուղղվածության ոլորտում որակավորված բժիշկ, ով կարող է բուժել ձեր վիճակը:

**Ռեկոնստրուկտիվ վիրաբուժություն.** վիրահատություն՝ ուղղելու կամ վերականգնելու մարմնի ոչ նորմալ կառուցվածքները, որպեսզի բարելավի գործառույթը կամ ստեղծի նորմալ տեսք այնքանով, որքանով դա հնարավոր է: Մարմնի ոչ նորմալ մասեր են նրանք, որոնց պատճառն են հանդիսանում բնածին թերությունը, զարգացման անոմալիաները, վնասվածքը, վարակը, ուռուցքները կամ հիվանդությունը:

**Ուղեգիր.** երբ ձեր PCP-ն տեղեկացնում է, որ կարող եք ստանալ խնամք մեկ այլ մատակարարից: Որոշ ապահովագրված խնամքի ծառայություններ պահանջում են ուղեգիր և նախնական հաստատում (նախօրոք լիազորում):

**Վերականգնողական և վերականգնման թերապիայի ծառայություններ ու սարքեր.** ծառայություններ և սարքեր՝ օգնելու վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկական վիճակներ ունեցող մարդկանց վերականգնել իրենց հոգեկան և ֆիզիկական հմտությունները:

**Ընթացիկ խնամք.** բժշկական տեսակետից անհրաժեշտ ծառայություններ և կանխարգելիչ խնամք, երեխայի բարօրության այցելություններ, կամ խնամք, ինչպես օրինակ ընթացիկ հետբուժական խնամք: Ընթացիկ խնամքի նպատակն է կանխարգելել առողջապահական խնդիրները:

**Գյուղական առողջական կլինիկա (RHC).** առողջական կենտրոն այնպիսի տարածքում, որը չունի շատ առողջական խնամքի ծառայություններ: RHC-ում կարող եք ստանալ հիմնական և կանխարգելիչ խնամք:

**Զգայուն ծառայություններ.** ծառայություններ ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (STI-ներ), ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռական բռնության և աբորտների համար:

**Լուրջ հիվանդություն.** հիվանդություն կամ վիճակ, որը պետք է բուժվի և կարող է բերել մահվան:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:



**Սպասարկման տարածք.** Health Net-ի սպասարկման աշխարհագրական տարածք: Սա ներառում է Kern, Los Angeles, Sacramento, San Diego, San Joaquin, Stanislaus և Tulare վարչաշրջանները:

**Հմուտ բուժքույրական խնամք.** ապահովագրված ծառայություններ, որոնք տրամադրվում են վկայագրված բուժքույրերի, տեխնիկների և/կամ թերապևտների կողմից Հմուտ բուժքույրական հաստատությունում գտնվելու ընթացքում կամ անդամի տանը:

**Հմուտ բուժքույրական հաստատություն.** վայր, որը տրամադրում է 24 ժամ բժշկական խնամք, որը կարող են տրամադրել միայն ուսուցանված առողջապահական մասնագետները:

**Մասնագետ (կամ մասնագիտացված բժիշկ).** բժիշկ, ով բուժում է որոշակի առողջական խնամքի խնդիրներ: Օրինակ, օրթոպեդիկ վիրաբույժը բուժում է կոտրված ոսկորները, ակերգոլոգը բուժում է ակերգիաները և սրտաբանը բուժում է սրտի խնդիրները: Մեծամասամբ, մասնագետին այցելելու համար ձեզ անհրաժեշտ է ուղեգիր ձեր PCP-ից:

**Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ.** ծառայություններ այն անդամների համար, որոնց անհրաժեշտ են հոգեկան առողջության ծառայություններ, որոնք խանգարման միջինից ավելի բարձր մակարդակում են:

**Մահացու հիվանդություն.** բժշկական վիճակ, որը հնարավոր չէ հետարկել և հավանաբար կառաջացնի մահ մեկ տարվա ընթացքում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, եթե հիվանդությունը շարունակվի իր բնականոն հունով:

**Հիվանդների տեսակավորում (կամ զննում).** ձեր առողջության գնահատումը բժշկի կամ բուժքույրի կողմից, ով վերապատրաստված է ստուգելու ձեր խնամքի կարիքի հրատապության սահմանման նպատակով:

**Հրատապ խնամք (կամ հրատապ ծառայություններ).** ծառայություններ, որոնք տրամադրվում են բուժելու ոչ արտակարգ իրավիճակների հիվանդությունը, վնասվածքը կամ վիճակը, որը պահանջում է բժշկական խնամք: Դուք կարող եք հրատապ խնամք ստանալ արտացանցային մատակարարից, եթե ցանցի մատակարարները ժամանակավորապես մատչելի կամ հասանելի չեն:



Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110 (TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին 711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:







Զանգահարեք Անդամների ծառայությունների բաժին 1-800-675-6110  
(TTY/TDD 711) հեռախոսահամարով:

Health Net-ն այստեղ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք California-ի հեռախոսականչի փոխանցման հեռախոսագծին  
711 հեռախոսահամարով: Այցելեք մեզ առցանց՝ [www.healthnet.com](http://www.healthnet.com) կայքում:

EOC049655MO01